


ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ



ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆ՝
ՍՈՒՐԲ ԷՋՍԻԱԾԻՆ

ԵՐԵՎԱՆ - 2016

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ARMENIA

ՌՈՒԲԵՆ
ՍԵՎԱԿ
1865-1915
Ruben Sevak



ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆ՝
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ԵՐԵՎԱՆ - 2016

Այս գիրքս կը նուիրեմ
Հայութեամբ, Էրզիրով, եւ
Ռուբէն Սեւակի Բանաստեղծութիւններով
Խանդավառ Չոյզի մը
Տէր եւ Տիկին Ստեփան եւ Հիլտա
ՔՐՔԵԱՇԱՐԵԱՆՆԵՐՈՒՆ,
որոնց հայրենասիրութիւնը շրթնային չէ՝ այլ
գործնական:
Կ'ապրին Սիտնէի մէջ՝ քայց գործերնին
Հայաստանի մէջ է:

Համարեայ կես դար առաջ բախտաւոր օր մը, երբ կը գտնուէի Ֆրանսա որպէս այցելու՝ իմանալով որ Նիսի մէջ արդէն իր դռները լայն բացած էր Ռուբէն Սեւակի անունը կրող թանգարանը, փութացի հասնիլ Նիս, գտնուելու եւ ուրախանալու համար, որովհետեւ տուեալ թագարանին լոյսին գալը պատասխան մըն էր օսմանցիներու սեւագոյն գործին՝ հայոց ցեղասպանութեան:

Այդ օրերուն բարեղէպ նորութիւն էր նաեւ հայ հանրահռչակ գեղանկարիչ Գառզուին Նիս գտնուիլը, որուն միանալով ժամադրութեամբ մը թանգարանի հիմնադիր Յովհաննէս Չիլինկիրեանին հետ՝ ուրախութեամբ եւ երկիւղածութեամբ մտանք այս հրաշք թանգարանէն ներս:

Մեր ուրախանալը քիչ էր թանգարանի բուն պարունակութեան համար՝ երբ հոն գտանք նաեւ երկուհարիւրէ աւելի գեղանկարներ, նուիրուած մարտիրոսացած բանաստեղծի յիշատակին:

Կանգ առինք հայոց մեծագոյն ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիի մէկ լայնշի պաստառին առջեւ, ուր նկարուեցանք ներկաներու հետ:

Այսօր 2016 թ.-ի Ապրիլի 4-ին, մեր այդ այցելութիւնը վերանկարագրել ճշգրտութեամբ՝ դիւրին գործ մը չէ: Կարծէք յուշին տարապայման ջերմութիւնը դողերոցքով մը կը փշաքաղէ մեր մարմինը:

Բայց նոյն այդ յուշէն աւելի՝ մեզ կրկնակի, եռակիօրէն կ'ուրախացնէ այն իրողութիւնը, որ Յովհաննէս Չիլինկիրեանը, նահատակ բանաստեղծի եղբօրորդին, նոյն Նիսի թանգարանի ողջ պարունակութիւնը սիրայօժար կերպով ուզած է նուիրել Հայաստանին ի սուրբ էջմիածին՝ յուրախութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդի, որ մեծ սիրով ընդունած է Յովհաննէս Չիլինկիրեանի առաջարկը՝ որպէսզի Նիսի

Ռուբեն Սեւակի թանգարանը փոխադրուի սուրբ Էջմիածին:
Այս հիանալի հանգրուանը Վեհափառի որոշումին կը հետեւի:

Նիսէն՝ յարգարժան Յովհաննէս Չիլիճկիրեանէն հեռախոսազանգ մը կը ստանամ.

-«Այցելեցի՞ք Ռուբեն Սեւակի թանգարանը, որ հանգրուանած է սուրբ Էջմիածին»:

-«Շուտով պիտի այցելեմ, այցելութիւն մըն ալ պիտի տամ նահատակ բանաստեղծի անուան դպրոցին՝ որ կանգնած է Երեւանի մէկ բարձունքին, գրագէտին մէկ կիսանդրիով հանդրեծ»:

-«Կը սպասեմ լսել տպաւորութիւններեդ...»:

-«Սիրով պրն. Չիլիճկիրեան»:

Անցան քանի մը օրեր, դարձեալ զանգ մը՝ այս անգամ Երեւանէն.

-«Ես Յարութիւն Նազարեթեանն եմ, Յովհաննէս Չիլիճկիրեանի, եւ անոր ժնեւի փեսային կողմէ նշանակուած եմ ձեզ տանելու սուրբ Էջմիածին, որպէսզի դիտէք Ռուբեն Սեւակի անունը կրող թանգարանի մեծարժէք գործերը»:

-«Ժամադրուինք...»

-«Պատրաստ եմ»:

-«Ես նոյնպէս»:

Կը մեկնինք: Օղը պայծառ է՝ թեւ Մարտը կը զգացնէ իր ցուրտը:

Արդէն ժամադրութիւն մըն ալ առնուած է քահանայ հօր մը հետ, որ մեզ ընդունի եւ առաջնորդէ:

Քահանայ հայրը տէր Սեւակ, որ իր քառասունը կը բոլորէ՝ վանքին մէջ սիրով կ'ընդունի մեզ:

Թանգարանի դրան առջեւն ենք: Եռոտանիի մը վրայ ֆրանսերէն ու հայերէն մակագրութիւն մը՝ «Թանգարան Ռուբեն Սեւակի»:

Երկիւղածութիւն մը կը պատէ մեզ, սրբավայրի մը առջեւ ենք՝ յարութիւն առած նահատակ բանաստեղծի թանգարանին սեմին: Կ'ուզենք մեր կօշիկները հանելով մտնել: Քահանայ հայրը, թ.

-«Ոչինչ, ոչինչ, այսպէս էլ կարող էք մուտք գործել»:

Մուտքի դրան առջեւ լուսանկարներն են նուիրատու ամուլին՝ տէր եւ տիկին Յովհաննէս Չիլինկիրեաններուն:

Կը դիտենք լուսանկարներուն երջանկութենէ փայլող աչքերը՝ եւ եկեղեցի մտնողներու պէս խաչակնքելով մուտք կը գործենք մաքրութիւն բուրոյ թանգարանէն ներս:

Թանգարանի շէնքի վաղեմութիւնը որպէս կրօնաւորներու կացարան՝ կը հասնի 1750 թուականին, կառուցուած Պազար Չահկեցիի կողմէ, որ թանգարանի վերածուած է մեր օրերուն՝ Ամենայն Հայոց Վեհափառ Գարեգին Բ.-ի կողմէ, նուիրատուութեամբը Յովհաննէս Չիլինկիրեան ամուլին:

Որպէս Ռուբէն Սեւակ (1885-1915) նահատակ բանաստեղծին նուիրուած թանգարան՝ կը գործէ 2013 թ.-ի Սեպտեմբերի 10-էն:

Թանգարանը լրիւ վերանորոգուած՝ կը բաղկանայ սրահէ մը եւ սենեակներէ, ուր յատակի մարմարի փայլքէն կրնան սահիլ մեր քայլերը...

Թանգարանի բացումին ներկայ եղած են պատկառելի երկու տասնեակ հայ մտաւորականներու կողքին նաեւ օտարներ, ոմանք կրօնաւոր:

Բացման հանդիսութեան հնչած է խորապէս յուզումնալի խօսքը Յովհաննէս Չիլինկիրեանին՝ որուն կողքին պէտք է գտնուէր նաեւ թանգարանով խանդավառ անոր կողակիցը, որ միջոց մը առաջ մեկնած էր այս աշխարհէն:

Ահա նուիրատուին խօսքը.

-«Այսօր մենք ներկայ կ'ըլլանք հրաշքի մը՝ քանի որ այսօր հայրենի հողին կը վերակենդանանայ 1915 թ.-ի եղեռնի նահատակ մեծանուն բանաստեղծ Ռուբէն Սեւակը»:

Յովհաննես Զիլինկիրեան Վեհափառին փոխանցած է նահատակ բանաստեղծի դուստր Շամիրամ Սեւակի երախտագիտական թուղթը:

Ահա եւ Վեհափառի օրհնութեան խօսքը.

«Նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի անունը կրող այս թանգարանը նուիրում ենք հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ դարալիցի ոգեկոչմանը, որ ունի առանձնայատուկ նշանակութիւն, եւ որ այցելուների միջոցաւ վերածուելու է ղօղանջող անլռելի զանգակատան, որի ծայրը լսելի պիտի լինի աշխարհով մէկ, նպաստելով մեր դատի միջազգային ճանաչման ուղուած ջանքերին:

Այսօր մենք ոճրագործութեանը պատասխանում ենք մեր ժողովրդի ազնիւ զաւակի ու նահատակի յիշատակը յաւերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցումով, աւերմանը՝ վերաշինութեամբ, մահուանը՝ կեանքով»:

Հնչած է Զիլինկիրեանի շնորհակալութիւնը.

«Հայոց կեանքին մէջ այս թանգարանը պիտի դառնայ հայոց մշակութային կեանքի գործօն կեդրոններէն մէկը»:

Թանգարանի սահարկուն մարմարները պիտի պատմեն թէ երկրին նախագահէն սկսեալ քանի-քանի պետական դէմքեր, ու ժողովուրդէն արդէն հարիւրաւորներ այցելած են նահատակին անունը կրող թանգարանը, ու ապրած են ոգեղինացումի պահեր:

Անոնց կը հետեւինք նաեւ մենք՝ քիչ մը ուշացումով, յուզումի կրկնակ պահերու հոգեկան գոհունակութեամբ:

Սեւակ կնքուած քահանայ հայրը, որ յաջորդ կիրակի իր առաջին պատարագը պիտի մատուցէ Օշականի մայր եկեղեցիին մէջ՝ անձանծիր մեզի կը ներկայացնէ թանգարանի հարստութիւնները, որոնց մէջ մեծաթիւ տեղեր կը գրաւեն հայ ծովանկարիչներու երփնագրերը, իրենց խաղաղ եւ ալե-

կոծ վիճակներով՝ յատկապես երբ ծովանկարիչը Յովհաննես Այվազովսկին է:

Քահանայ հայրը երեք տարի ուսանած ըլլալով Ֆլորենցիայի մէջ, ու սիրած, փորձած ըլլալով գեղանկարչութիւնը անդադար՝ առանց յոգնութեան նշաններ արձանագրելու հիմնաւոր բացատրութիւններով կ'օժտէ իր խօսքը, որպէս բանիմաց երիտասարդ: Ներկայ դարուն մեր քահանայ հայրերը եւս համալսարաններէ կուզան՝ ամբօրէն կառչած մնալով մեր պատմութեան եւ ծաղկալի մշակոյթին:

Վեհափառի ձեռնասունն է Սեւակ քահանայ հայրը, որուն խօսքերը իմաստալի են՝ բարեհունչ ըլլալու կողքին:

Թանգարանը, որ 820 քառ. մետր տարածութիւն ունի ու կը պարունակէ չորս սենեակ՝ կը պարունակէ ցուցադրուած 120 գեղանկար, թէւ նուիրուած գեղնկարներուն թիւը 200-է անց է: Պատերուն վրայէն մեզի կը նային Գառզու, Յակոբ Յակոբեան, Այվազովսկի, Էտկար Շահին, Շապանեան, Մախոխեան, Սուքաֆեան եւ ուրիշներ՝ որոնց ակնդիրն ենք, եւ յուզումով երջանկութեան պահ մը կ'ապրինք՝ առանց կարենալ դիտելու ներկայացուած բոլոր գործերը:

Կ'որոշենք կրկնել այս պահը երկու օրեր եւս՝ ընկերակից ունենալով հայ մտաւորականներ Սերժ Մանուկեանն ու պրն. Գրիգորեանը, եւ վայելքը կ'երրորդուի:

Բայց մենք կ'ուզենք դիմել նաեւ գրաւոր վկայութիւններու՝ եւ հոն կը գտնենք բազմաթիւ վկայութիւններ:

Նախ պարտիմ յայտնել, թէ մօտ կէս դար առաջ երբ Նիսի մէջ հարց տուի պրն. Յովհ. Չիլինկիրեանին, թէ ինչո՞ւ Ռուբէն Սեւակին նուիրուած թանգարանը սփիւռքացուած է՝ ան պատասխանեց.

«Սիրելիս, կանխապէս դիմեցի Խորհրդային Հայաստանի պատուարժան որոշ ղեկավարներու՝ գտայ ո՛չ մէկ արծագանգ: Ահա թէ ինչո՞ւ այս թանգարանը որոշեցի հիմնել Նիսի

մէջ, ուրկէ անցնող բազմաթիւ հայ մտաւորականներ կ'այցելին այս թանգարանը, հպարտութեան գիրեր ստորագրելով ներկայացուած յուշատետրին մէջ»:

Հիմա այդ մտաւորականներուն թիւը պակսած է:

Իսկ վերջերս կայացած մեր հեռախօսագրոյցին՝ ան ըսաւ.

«Մեր մշակոյթի կեդրոնը երեւանն է: Մեր մտաւորականութիւնն ու ժողովուրդը հո՛ն են: Ուստի յարմար գտայ դիմել Վեհափառ Գարեգին Բ. Յայրապետին, որն անմիջապէս ընդունեց առաջարկս, յայտնելով թէ պատրաստ է նահատակ Ռուբէն Սեւակին յատկացնելու լաւագոյն մէկ սրահը սենեակներով՝ սուրբ Էջմիածին Մայրավանքի շրջաբակին մէջ, տեղ մը, որ կ'ունենայ բազում այցելուներ տարուան ընթացքին:

Համաձայնութիւնը եղաւ անմիջապէս՝ եւ բազմարդիւն Վեհափառը անմիջապէս առաւ գործնական քայլը, ահա եւ նահատակ Ռուբէն Սեւակը վերջնական հայրենադարձութիւն կատարած եղաւ իր անուան դպրոց մը ունենալէ յետոյ»:

Այժմ Ռուբէն Սեւակ անկախ Հայաստանի քաղաքացի որպէս՝ սկսաւ ապրիլ իր հողին վրայ, իր սեփական երկրին մէջ, թէւ երազելով պատմական Հայաստանի մասին, Հայաստան՝ որ պիտի միացուի մեր ուժերով այսօրուան անկախ Հայաստանի Հանրապետութեան, նոյնիսկ իր՝ Ռուբէն Սեւակի բանաստեղծական կոչերով, երկիր բուրող կոչերով:

Հիմա տալով հակիրճ բացատրութիւններ, հինն ու նորը ազուցած՝ ներկայացնենք նաեւ գրազէտ ու բանաստեղծ Ռուբէն Սեւակը թանգարաններով, այցելուներով, մամուլով ու գիրքերով:

Մենք եղանք այն բախտաւորներէն՝ որ երկու անգամ մկրտուեցաւ Ռուբէն Սեւակին նուիրուած թանգարաններուն մէջ, առաջինը Նիսի՝ երկրորդը սուրբ Էջմիածինի մէջ: Առաջինին մէջ գաղթականի տխրութեամբ՝ երկրորդին մէջ հայրենի հողին հաստատուած երջանկութեամբ, որ կուգար Վեհափառ Գարեգին Բ.-ի եւ Չիլինկիրեան ամուլի գործազկութենէն:

Նորին մէջ ի սուրբ էջմիածին՝ ամբողջ սրահ մը կը կոչուի Յովի. Այվազովսկի, ով իր Թեոդոսիայի գերեզմանէն կը հետեւի այս թանգարանի գործունէութեան, թանգարան մը, որուն մէկ պատին ողջ երկայնքին իր մէկ ալեկոծեալ ծովանկարը մակընթաց ալիք մը կը ներկայացնէ:

Անցնինք թումն մասանցին: Ես գրեմ՝ դուք կարդացէք նաեւ դիտեցէք ներկայացուած գեղանկարները...

Ռուբէն Սեւակ ծնած է 1885 թ.-ին Թիւրքիոյ Սիլիվրի աւանին մէջ, ոչ շատ հեռու Վազգէն Շուշանեանի ծննդավայր Ռոտոսթոյէն:

Զարմանալիօրէն մեր մեծութիւններէն երկու հոգի նախապէս եղած են թրքախօս՝ Ռուբէն Սեւակ եւ Կոմիտաս վարդապետ, որոնք մայրենի լեզուն հասցուցած են նոր բարձրութեան:

Վերջերս երբ այս իրողութիւնը կը յայտնէի հայրենի անուանի երգիչ Սահակ Սահակեանին՝ ան քմծիծաղով մը յայտնեց.

«Ինչո՞ւ կը զարմանաք, ես եւս ծնած լինելով Սիպիր աքսորուած ծնողներից՝ մանկութեանս եղել եմ ռուսախօս, որպէս պայմանների արդիւնք:

Հայոց արգանդը 1800-ական թուականներուն եղած է հարուստ: Ինչո՞ւ զարմանալ՝ երբ 1869-ին են ծնած Կոմիտասը, Յովհաննէս Թումանեանը, Երուանդ Օտեանը, Լեւոն Շանթը: Սիւսանթօն ծնած է Ակնի մէջ 1878-ին, Վարուժանը Սեբաստիոյ Բրգնիկ գիւղին մէջ 1884-ին, Ռուբէն Սեւակը Սիլիվրիի մէջ 1885-ին, Կոստան Զարեանը Շամախի մէջ նոյնպէս 1885-ին: Ասոնք բոլորը դարձան պարծանքը մեր մշակոյթին, նոր գագաթներու հասցուցին մեր զոյգ գրական լեզուները՝ պանծալի Արեւմտահայերէնն ու Արովեանով ճամբայ ելած Արեւելահայ գրականը, որուն վիճակուեցաւ դառնալ մեր պետական լեզուն՝ թելեր առնելով Թումանեանի, Տէրեանի, Իսահակեանի, Բակունցի ու Չարենցի, ու մեր օրերուն Համօ Սահեանի ու Պարոյր Սեւակի հողաբոյր գրիչներէն:

Մենք եղած ենք ճնշուած ժողովուրդ դարերու ընթացքին: Օտար իշխանութիւններ իրենց քաղաքական հաշիւներուն խաղալիքը դարձնելով մեզ՝ կիսած են մեզ, ու բաժնած երեքի նաեւ, ու մեղմի խոստովանինք՝ թէ մենք եւս զմեզ բաժնած ենք իշխաններու անուններով եւ կրօնական աթոռակալներով, ու ի վերջոյ այս օրերուն հասկցած ենք, որ բաժանումը ոչ թէ կը զօրացնէ մեզ՝ այլ տարօրէն կը վնասէ:

Վերի թուականները ոսկեղար մը բերին մեր մշակոյթին:

Ռուբէն Սեւակ իր նախնական ուսումը ստանալէ յետոյ իր ծննդավայրի Ասքանազեան վարժարանին մէջ, ու մեկնելով Պոլիս՝ կը դառնայ սանը Պերպէրեան հաստատութեան, զոր հիմնադրած էր հմուտ մանկավարժ Ռէթոս Պերպէրեանը:

Քաջալաւ զնահատականներով աւալտելէ ետք այս վարժարանը՝ հաստատութեան տնօրէնին թելադրանքով եւ օժանդակութեամբ Ռուբէն Սեւակ կը մեկնի Լոզան, ուր 1911 թուականին կը տիրանայ բժշկական վկայականի:

Օսմանեան սահմանադրութիւնը (1905 թ.) խելագար ցոյցերու տեղի կուտայ ողջ կայսրութեան սահմաններուն, ու յատկապէս Պոլսոյ մէջ: Կը յայտարարուի եղբայրութիւն, հաւասարութիւն երկրի մը մէջ՝ ուր փոքրամասնութիւններու նկատմամբ ատելութիւնը հասած էր իր վայրագութեան գագաթնակէտին, փոքրամասնութիւններ՝ որոնք երկիրին իրաւ տէրերն էին, օսմանցիներու ոտքերը այս հողերուն չհասած:

Ծափերու եւ համբոյրներու ալիքի այդ օրերուն՝ Ռուբէն Սեւակ պահ մը կուզայ Պոլիս, ու կը փորձէ հրատարակել «Սուրհանդակ» անուն օրաթերթը: Յուսալքուած՝ ան կը վերադառնայ Լոզան:

Վերի մակընթաց ուրախութիւնները երիտ թիւրքերուն կը մղեն չտեսնուած ջարդի մը 1909 թ.-ին՝ երբ Ատանա քաղաքը բոցերու մէջ կ'իյնայ, ու եղեռնամահ կը դառնան 30.000 հայեր Ատանայի ու անոր շրջաններուն մէջ:

Օսմանեան եաթաղանը պէտք չունէր զանազանելու մանուկն ու ծերը: Եաթաղանին սուր շեղքը հայու արեան կարօտն ուներ:

Բայց Ատանայէն ոչ շատ հեռու՝ Չորք Մարզպանը (Տօրթ Եօլ) ոտքի կելլէ զինեալ, իր այր ու տղայ եւ կին մարդոցմով: Հայը զենքի դիմել սկսած էր՝ բայց... արդէն ուշացումով:

Ահա թէ ինչու մեր զայրացած մտաւորականութիւնը այդ օրերուն ծնունդ կուտայ եղեռնը ապրած ըլլալու գրականութեան:

Ռուբէն Սեւակը կուտայ իր «Կիլիկեան Երգեր»-ը: Սուրէն Պարթեւեանէն կ'ունենանք «Կիլիկեան Արիաւիրքը»: Սիւսմանթոյէն՝ «Կարմիր Լուրեր Բարեկամէս»-ը: Չապէլ Եսայեանէն՝ «Աւերակներու Մէջ» անմոռանալի յուշերը: Վարուժանէն՝ «Ցասման Երգեր»-ը:

Այս բոլորը ցասման ճիչեր էին եղեռնի դէմ:

Արեւելահայերու մօտ ալ մեր ժամանակներուն նոյն թիրքերու կողմէ՝ որոնք ազերի անունը որդեգրած են, նիւթուեցաւ Սումգայիթի ապա Բագուի զազրելի հայասպանութիւնը, որուն հետեւանքով Արեւելահայութիւնը զանգուածօրէն զենքի դիմելով ազատագրեց Արցախը:

Թիւրքը միայն զենքէ՝ կը վախճայ: Չէ՞ որ Սկրտիչ Պէշիկթաշլեանն ալ իր ժամանակին երգած էր «Ուրախ Լուրեր Տարեք Չէթուն»-ը, այսինքն զենքի դիմեցէք: Այո, նոյնը երգած էին Ռաֆֆին եւ Խրիմեան հայրիկը՝ մինչեւ որ մեր առաջին ֆիդայիները լեռ բարձրանալ սկսան, մինչեւ որ կամաւորական գունդեր ունեցանք նոյնիսկ Ամերիկայէն երկիր հասնող, բայց...

Օսմանցի թշնամին, որպէս պետական ուժ, եւ որպէս տոժմտ թիրք՝ Սալոնիկի մէջ որոշած էր ջնջել վերջին հայն անգամ...

Դաս մը չէի՞նք կրնար առնել Ատանայէն:

Ռուբէն Սեւակն իր ողջութեան, 1910 թ.-ին կը հրատարակէ միայն մէկ գիրք՝ «Կարմիր Գիրք»-ը, արդիւնք Կիլիկեան ընդվզեցնող տագնապին:

ԱՆ 1911-ին Լոզանի մէջ կ'ամուսնանայ գերմանուհի Եաննիին հետ, որ միջոց մը ետք Պոլսոյ գերման դեսպան Վանկէյհայմի երեսն ի վեր պիտի շարտեր իր գերմանական անցագիրը, պիտի լքեր իր գերմանահպատակութիւնը՝ եւ իր երկու զաւակները պիտի մեծօցներ որպէս իսկական հայեր, Լեւոնը՝ որուն կնքահայրը եղած էր Կոմիտաս վարդապետը, եւ Շամիրամը՝ որուն կնքահայրը եղած էր Օսմ. պետութեան թղթատարական նախարարը, Ոսկան Մարտիկեան:

Այս բոլոր մանրամասնութիւնները տանջալի փնտռուքներէ ետք կրցած էր գտնել Յովհաննէս Չիլինկիրեանը՝ եղբորորդին Ռուբէն Սեւակի, որ բոլորվին վերջերս 2016-ի Մարտին՝ Լիւսն զանգահարելով մեզի կը հաղորդէր այլ յայտնութիւն մը, թէ նահատակ բանաստեղծի ծնողները մեծ եղեռնէն ետք ապրիլ շարունակած են Ֆրիտիոֆ Նանսէնի ստեղծած անցագիրերով:

Ֆրիտիոֆ Նանսէն բեւեռախոյզ գիտնականը որպէս մեծ մարդասէր՝ հայոց ցեղասպանութենէն ետք երբ մեր ժողովուրդը կը գտնուէր անհայրենիք վիճակի մէջ, մեծ պետութիւններու իրաւախիտութեամբը տարագիր հայոց տեղափոխութիւնը ապահովելու համար որպէս հայրենիք վտարուածներ՝ հայերը օժտած էր միջազգայնօրէն ընդունելի փաստագիրով, անցագիրով:

Նոպելեան մրցանակի արժանացած Ֆրիտիոֆ Նանսէն մարդասէրը հայ տարագիրներուն բաժնած էր 250.000 Նանսէնեան անցագիր, որով զինուած էր նաեւ Ռուբէն Սեւակի հայրը: Հոս ինչո՞ւ չհաստատել, որ հայ անուանի գրող Արշակ Չոպանեանն աւելի քան կէս դար ապրելով Փարիզի մէջ՝ չէր ընդունած ֆրանսական հպատակութիւն, եւ ապրած էր Նանսէնեան անցագիրով:

Մեծ շնորհ մը ասիկա՝ տրուած Նանսէնի կողմէ, որով ան կը հաստատէր մեր վտարանդի, հայրենազրկուած ըլլալը, ինչը կը

նշանակէր թէ մենք՝ տարագրեալներս, իրաւականօրէն իրաւունք ունէինք պահանջելու մեր գողցուած հայրենիքը:

Բայց... անգլօ-ֆրանսական քաղաքականութիւնը եղաւ պատճառ՝ որ Մերձաւոր Արեւելքի արաբական երկիրներուն մէջ ապրող մեր զանգուածները պարտադրաբար ընդունէին անցագրերն ու անձնագրերը իրենց հանգրուանած երկիրներուն, կոչուելու համար Սուրիացի, Լիբանանցի, Իրաքցի, Պաղեստինցի, Եգիպտացի, Սուտանցի, Յայպէստանցի՝ որպէսզի միջոց մը ետք ալ Սուրիոյ մէջ մեզ կոչէին ծնունդով Սուրիացի արաբ... եւալն:

Ուրե՛ր կը հացնեն մեզ օտար դիւանագէտները:

Տակաւին Մուստաֆա Քեմալն իր կարգին ամբողջացնելով հայոց ցեղասպանութեան մեծագոյն ժողովրդասպանութիւնը՝ պիտի յայտարարէր.

«Վերապրող հայերուն արգիլուած է վերադարձը Թիւրքական Հանրապետութիւն»:

Նոյն մեթոտը այսօր կը գործադրէ Իսրայէլը՝ վտարանդի պաղեստինցիներու նկատմամբ:

Տեսէք թէ ո՛ր թաղուած է շան գլուխը:

1918 թ.-ին Թիւրքիան պարտեալ երկիր էր: Պարտեալը յաղթողի վերածեցին Արեւմտեան մեծ երկիրներն ու Ամերիկայի Միացեալ Նահանգները, որուն նախագահը հայոց «շնորհած էր» Հայաստան մը՝ Կարինով, Կարսով, Վանով ու մինչեւ Սեւ ծով ելքով, թուղթի վրայ: Արեւելեան Հայաստանը դարձած էր անկախ՝ նշաւակ Քեմալի յարձակումին: Քիչ ետք Հայաստանի այս հատուածը Խորհրդային դարձած էր եւ Ռուսիոյ կից՝ ուստի հայերը ի՞նչ պէտք ունէին ծովափ ունենալու, երբ մեր լիճն անգամ (Վանայ լիճը) գողցած էին թիւրքերը:

Ռուբէն Սեւակ 1914-ի կիսուն կ'որոշէ գալ Պոլիս, լաւ իմանալով երկրին վիճակը, խմորուող դաւադրութիւնը, եւ արդէն իսկ բանաստեղծութիւններով կը յայտնէ իր վրիժառուի հան-

զամանքը: Ան իր ժողովուրդին օգնութեան հասնելու համար երբ շոգեմաւով կը մօտենայ Պոլիսին՝ Սեւակեան ընտանիքի եաննին սրտադող մը ունենալով Սեւակին կ'աղաչէ վերադառնալ Երոպա...

Ռուբէն դասախօսութիւններով հանդէս կուգայ Պոլսոյ մէջ, կը զբաղի դարմանութեամբը իր հայ հիւնադներուն, կ'աշխատակցի «Ազատամարտ» թերթին, կը զբաղի նաեւ գրականութեամբ՝ բանաստեղծութեան քովն ի վեր գրելով նաեւ արծակ, եւ արագօրէն կը շահի համակրանքը Պոլսոյ մէջ ապրող հայ զանգուածներուն: «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր»-ը լայն ժողովրդականութիւն կը բերէ Սեւակին:

Կը բռնկի Առաջին համաշխարհային պատերազմը Սերայեւոյի մէջ արծակուած գնդակէ մը:

Ռուբէն Սեւակ զօրակոչիկ է:

Եւ ահա Ապրիլ 24-ի սեւ գիշերը: Հարիւրաւոր հայ մտաւորականներ կը ձերբակալուին մէկ գիշերուան ընթացքին, ուր յանցանքի սեւ բաժին մը ունին նաեւ հայ մատնիչներ... Կը ձերբակալուի նաեւ Ռուբէն՝ զինուորական տարագով:

Ի՞նչ էր ենթակային յանցանքը...

Քի՞չ բան է հայ ու բանաստեղծ ըլլալը...

Փո՞քր էր այս յանցանքը:

Հայ ձերբակալեալներու զանգուածը Չանդըրը կը տարուի, ուրկէ 1915 թ.-ի Օգոստոսի 26-ին Ռուբէն Սեւակ եւ Դանիէլ Վարուժան կը տարուին անորոշ ուղղութեամբ՝ ճամբան խող-խողուելու եւ վայրագաբար սպաննուելու համար:

Այս ճակատագիրն ի՞նչ սեւ էր Աստուած...

Երբ կը գրուին այս տողերը, տեսադաշտիս դէմ կը բարձրանայ Ռուբէն Սեւակի Էջմիածնահիմք թանգարանը, ուր աչքերուս դէմ կը պարզուի թանգարանի Այվազովսկեան սրահն իր դիմացի պատով, վրան լայնշի պաստառ մը՝ ամբողջ պատը գրաւող: Ահա Այբազովսկի ծովանկարիչի «Սեւաստո-

պոլ», «Խրիմի Պատերազմը» գեղանկարը, «Նաւաբեկում»-ը՝ նկարուած 1856-ին, «Վոսփորը Մառախուղի Մէջ»-ը՝ աշխատուած 1889-ին: Նաւերը կը խորտակուին՝ ու կ'ոչնչանան անգլիական ու ֆրանսական դրօշները, բայց ազատուելու համար կը մնայ նաւակ մը՝ փրկուածներով: Նաւակը լրիւ տրուած չէ, ու քահանայ տէր Սեւակը կը յայտնէ.

«Երեւի հոն մեզի համար ալ տեղ կայ...»:

Այո՞, նաւելու համար դէպի Հայաստան: Փրկութեան այլ ճամբայ չկայ...

Ահա թէ ինչու համամտութեամբը Վեհափառ հօր՝ Յովհաննէս Զիլինկիրեանը այս Այվազովսկիական երփնագրերը նուիրած է հայրենական թանգարանին, որպէս փրկութեան լաստի:

Նոյն այս թանգարանին մէջ հանդիպեցանք Մախոխեան ծովանկարիչի տասնեակ մը գործերուն: Ծով չունենալով՝ ծովը սիրած ու ծովանկարիչներ ունեցած ենք, որոնք ծնած են ծովի կարօտն:

Այժմ ծովեր չունինք՝ բայց գէթ մեր ծովանկարիչները չխլեն մեզնէ: Ծով չունինք՝ բայց ծովակալ ունինք, Յովհաննէս Իսակովը, գիւղակիցը Մարշալ Բաղրամեանի, որ իր զօրականի նախափորձերը կատարած է զօր. Անդրանիկի ֆիդայական զօրքին մէջ, եւ օր մըն ալ գտնուելով Փարիզի Փէր Լաշէզի գերեզմանատան մէջ՝ բարեւի կանգնած է իր Անդրանիկ Զօրավար ծիաւորի անդրիին առջեւ, յետ մահու յարգելով զայն: Մեծերը գիտեն յարգել մեծութիւնները: Հեքիաթ չեն այս բոլորը, այլ դարերու համար ապրուած կեանք՝ դարերէ եկող նախորդներու ոսկէ շղթան համալրող օղակներ: Ե՞րբ եւ ո՞ր ծնած է Սասունցի Դաւիթը: Զայդ գիտէ ինքը՝ երկնաւորը, եւ հայ հողն ու եկրագունդի հնագոյն նախապատմութիւնը:

Ծուռ Սասունը գողցուած է՝ բայց ոգին կը շարունակուի, զի ոգին անմեռ է, դարերէն կուգայ՝ դարերու երթալու համար:

Այժմ սուրբ Էջմիածինի Ռուբեն Սեւակի անունը կրող թանգարանի ապակեպատ դարակեն մեզի կը նայի կարծեք կարօտի նայուածքով մը Ռուբեն Սեւակի «Կարմիր Գիրքը», տպուած Պոլիս 1910-ին, եւ եղեռնէն յետոյ տպուած Ա. Գիրքը՝ «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջերը», Գողթան տան հրատարակութիւն, տպուած 1925-ին Սելանիկի տպարան «Ալիք»-ին մէջ:

Էջմիածնայ այս թանգարանին մէկ սենեակը յատկացած է Ռուբեն Սեւակի թողոններուն, ուր հօրենական ժամացոյց մը՝ նահատակին կորսնցուցած ժամերը հաշուելէն յոգնած:

Ամէն իր ու առարկայ մեզի անդուլ յիշել կուտայ Ռուբեն Սեւակի հպած առարկաները, եւ իր ոգեշունչ խօսքերը՝ այդ առարկաներէն, լուսանկարներէն, բացիկներէն, սիրոյ քարթերէն, եւ իր վրձինէն եկող: Ահա Պեթիովէնի եւ Վիկտոր Զիւկոյի կենդանագրերը՝ վրձինովը Ռուբեն Սեւակի, եւ ինչքա՛ն կենդանութիւն, տեսլապաշտութիւն այդ գործերուն մէջ:

Քահանայ հայրը բացատրութիւններ տալէ յոգնութիւն չունի, ու մենք ալ յոգնիլ բառը կ'որանանք անդադար լսելով ցուցադրուած գործերուն բացատրութիւնները:

Ահա Ռուբեն Սեւակի վերջին հեռագիրը քսոտրավայրէն.

«Վարուժան իլէ Այաշայեա կիտիորըզ մէքթուպլարընըզա օրաեա կէօնտէրիմազ - 25 Օգոստոս 1915»

..... -
Ռուբեն -

(«Վարուժանին հետ Այաշա կ'երթանք, ձեր նամակները հոն դրկեցէք - 25 Օգոստոս 1915» - Ռուբեն-)

Աքսորի ճամբայէն ստացուած պատասխան քարթը նաեւ.

-«Մեկնած են առանց հասցէ տալու»:

Գիտի՞նք թէ սպաննուելու կ'երթան...

Բայց ահա հոս են, հայրենի հողին վրայ՝ ու մեզի հետ ժամերով կը խօսին Ռուբեն Սեւակի անուան թանգարանին մէջ: Հողը կը պահէ ձեզ, նահատակներ, հողը՝ հայրենի հողը դարերը պահել գիտէ, իսկ յափշտակեալ հողը կարօտով իր տերերուն վերադարձը կը սպասէ...

Հոս, այս թանգարանին մէջ կը հանդիպինք նաեւ Ռուբեն Սեւակի տունէն երկու պաստառներու՝ զորս բանաստեղծը գնած կ'ըլլայ 1910-ին:

Այդ պաստառներէն մէկը գործն է Յակոբ Կիւրճեանին, իսկ միւսը՝ Լեւոն Ազնաւորեանին:

Սոռոցուա՞ծ է կը կարծէք թիւրքիոյ ներքին գործոց նախարարութեան շէնքին լուսանակարը, շէնք՝ որուն մէջ առնուած է Ռուբեն Սեւակը ոչնչացնելու որոշումը, շէնք՝ որուն լուսանակարը պահած է Եաննի Սեւակը, որպէս սեւ յիշատակ:

Սեւակեան այս թանգարանին մէջ կը գտնենք Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի 1943-ին կազմած ու հրատարակած «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջերը» Ռուբեն Սեւակի, եւ 1944-ին հրատարակած «Յրիւ Քերթուածներ» ու «Կարմիր Գիրքը» գործերը:

Երուսաղէմի Թորգոմ Մանուկեան Պատրիարքը անհուն սէր կը տածէր Ռուբեն Սեւակին հանդէպ, եւ ապացոյցները հոս ներկայ են:

Ապակիներու տակ ու ապակիէ դուրս կը տեսնենք նաեւ ի Գիւմրի հայրենադարձ Գէորգ Հատիտեանի «Ռուբեն Սեւակ» մենագրութիւնը, տպուած Երեւան 1957 թ.-ին, 85 էջանի: Եղիշէ Պետրոսեանի «Ռուբեն Սեւակ» մենագրութիւնը «Երկեր» խորագիրին տակ, խմբագիր Սողոմոն Տարօնցիի յառաջաբանով նաեւ, տպուած Երեւան 1955-ին, 260 էջանի: Կը տեսնէ՞ք վաղեմութիւնը հայրենիքի մէջ Ռուբեն Սեւակի գրականութեամբ զբաղողներուն: Վերոյիշեալ գործերուն հետեւեած են այլ հրատարակութիւններ՝ այլ ստորագրութիւններով:

Թեև Ռուբեն Սեւակի անծով ու գործով զբաղողներուն ռահվիրան եղած է նահատակին եղբորորդին՝ Յովհաննէս Չիլինկիրեանը, որ իր կեանքն ու ունեցուածքը կէս դար ու ատելի նուիրած է Ռուբենի կեանքի ու գործի ընդունելութեան, մեզի ըսել տալով.

–«Երանի ամէն հայ գրող, մանաւանդ հայ ազգին ու հայ մշակոյթին անվերջ նուիրեալ գրող՝ ունենար Յովհաննէս Չիլինկիրեանի հենքէն հայ մարդ մը, որուն նուիրումը Ռուբեն Սեւակին եղած է իրապէս Մեծարենցեան, այսինքն՝ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ:

Երանի՛ այն գրողներուն, որոնք իրենց կողքին Յովհաննէս Չիլինկիրեան մը կրնան ունենալ»:

....Սախոխեան՝ կանգնած է Այվազղովսկիի կողքին: Բացակայ չեն Սարգիս Խաչատուրեանը, Շապանեանն իր ծովանկարներով, Ադամեանը, Ալխազեանը՝ կողքի սրահին մէջ:

Մէկ խօսքով, հայրենադարձի իր թանգարանին մէջ մենք երեք օրերու ընթացքին հանդիպեցանք յիսուն հայ գեղանկարիչներու 120 պաստառներուն՝ ոգեղինացումի պահեր ապրելով, երանելիութեան օղակներ կազմելով բոլոր անոնց հասցէին՝ որոնք երկիր հասցուցին յիշեալ գանձերը, որովհետև հայ արժէքը իր հողին վրայ կրնայ պահել իր ունեցած արժէքը:

Վերադարձէ պահ մը Եգիպտոսի բուրգերը՝ ու զետեղեցէք զանոնք Փարիզի մէջ: Փարիզ եւ բուրգ՝ անհամատեղելի են:

Վերցուցէք Փալմիրը Սուրիոյ անապատէն՝ ու դրէք Ուաշինթընի մէջ, ի՞նչ կ'ըլլայ:

Էրեբունին Երեւանի մէջ կը պահէ իր արժէքը:

Հալէպի բերդը իր արժէքը կը պահէ Հալէպի մէջ:

Բայց ուրիշ են երգն ու երաժշտութիւնը, գրականութիւնը նաեւ, որոնք երկրէ-երկիր հասնելով սեր ու գորովանք կրնան տարածել, հաւատք սեղծել:

Կոմիտասի «Գարուն ա»-ն հաճելի է ինչպէս հայուն՝ նոյնպէս ճաբոնցիին համար, Ազնաւուրին «Անոնք Ինկան»-ը ա-

ռանց գիտնալու թէ ինչու համար՝ լսելի կը մնայ թէ՛ ֆրանսացիին թէ՛ հայուն, թէ՛ բոլորին համար, քանի որ այդ երգը դէմ է ցեղասպանութեան: Ո՞վ սիրել է պիտի դադրի Փապլօ Փքաստ-յի «Կեռնիքա»-ն, կամ ո՞վ պիտի չուզէր ունենալ հերոս մը՝ Միսաք Մանուշեանի նման, Ֆուճի եաման պաշտող ճաբոնցի՝ Արարատը եւս կը պաշտէ: Քանզի գեղեցիկին պաշտամունքը համընդհանուր է:

Հայաստանը կոնտոլներ չունի՝ բայց կը սիրէ Վենետիկի կոնտոլները, հոլանտական գեղանկարչութիւնը:

Մէկ խօսքով, ինչ որ գեղեցիկ է՝ բոլորին կը պատկանի, ազգայինը պահելով հանդերձ:

Հակասութիւններ կա՞ն մեր ըսածներուն մէջ: Եթէ կան՝ մենք կ'ըսենք... հակասութիւններու մէջէն կրնան ծնիլ միասնութիւններ՝ իրարու զարնուելով:

Մեր Ջուարթնոցէն օրինակ առէք, դէմ չենք:

Հռոմի սուրբ Պետրոս գեղահիւս եկեղեցին յօրինուած է օսմանցիներու կողմէ քանդուած հայոց Բագարանաի եկեղեցիին յատակագիծին օրինակովը:

Օրինակեցէք սուրբ Հռիփսիմէ տաճարը հայոց՝ դէմ չենք: Դէպի երկինք թեւածող այդ հրաշք եկեղեցին իր բոլոր դիտորդները ոգեղինացումի կ'առաջնորդէ: Նոյնպէս մեր խաչքարերը՝ որպէս ինքնուրոյն հայկական ստեղծագործութիւն: Բայց ի՞նչ ըսենք ազրպեյճանցի թիրքին՝ որ հայկական հազարաւոր խաչքարեր ջարդեց, եւ աշխարհը լուռ մնաց... Էշն ի՞նչ գիտէ նուշը... մարդ կը ջարդէ...: Բայց խաչքարի՞ ջարդ կազմակերպել, գեղեցիկը ստեղծողն ու գեղեցիկը ջարդել... որո՞նց - գործն է: Պիտի ըսէք ճիւղներո՞ւ... այդ եզրը քիչ է՝ շատ քիչ:

Օ՛, ուրե՛ր գացինք: Ծանրածանր խորհրդածութիւնները մեզ գիծէն դուրս կը շարտեն: Ռուբէն Սեւակի սրահի նախամուտքին Տիգրան (Արմանտ) Մութաֆեանէն երեք գեղանկար կայ, այսինքն Մութաֆեանը նուիրած է զանոնք թանգարա-

նին՝ Վարդան Մախոխեանի գործերէն: Մութաֆեանը Ֆրանսայի Պատուոյ Լեգէոնի մրցանակին արժանացած է:

Նկատեցինք, որ մուտքի առաստաղէն կախուած ջահը խաչածեւ է՝ իր ճաշակով ուրախացնող:

Ահա Պէրպէրեան վարժարանէն շրջանաւարտներու լուսանկար մը՝ որուն մէջ անմիջապէս կը ճանչնանք Ռուբէն Սեւակ պատանեակը:

Գրչանկար մը՝ «Պոլիսը մայրամուտին», Քրիստիան Սալերիէն, որ բանաստեղծի քրոջ աղջիկը կը պատկերէ: Թանգարանին մէջ անկէ կան նաեւ այլ գործեր:



Ռուբէն եւ Եաննի Սեւակներ

Հապա Եաննի Սեւակի գիրքե՞րը: Բոլորն ալ բանաստեղծութիւններ են՝ նուիրուած իր սիրելի ամուսնոյն, Սեւակին:

Ու նամակնե՛ր, նամակնե՛ր, ու հոն ծրարուած սիրտեր՝ ծրարուած երջանկութիւն:

Ապա Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրերն են: Նաեւ 1905 թ.-ին բանաստեղծի Պէրպէրեան վարժարանէն ստացած

շրջանաւարտութեան վկայականը: Զինուորական տարագով Ռուբէն Սեւակը՝ որ երկրին համար պիտի կռուէր, բայց զինք վայրագօրէն սպաննեցին:

Նաեւ երկու գեղանակար՝ մէկը աղքատ գիւղացի, միւսը հարուստ գիւղացի:

Փարիզի մէջ ապրող Վանեցի գեղանկարիչ Փափազը եւս ներկայ է այս թանգարանին մէջ, իր «Մայրը» գեղանկարով, որ մեզ երկա՛ր խորհրդածութեան կը մղէ՝ քանի որ մենք Փափազի Փարիզեան տան մէջ քանիցս տեսած ենք, թէ այս Վանեցին միայն ջարդի տեսարաններ կը նկարէր:

Մէկ խօսքով, աշխարհ մը կայ մեր աչքերուն դիմաց, ու այդ աշխարհը Ռուբէն Սեւակի աշխարհն է՝ փոխադրուած Զայաստան, Սեւակն ու անոր հողը պաշտող հարագատին՝ Յովհաննէս Զիլինկիրեանին կողմէ:

Վերածնունդի սրահին մէջ ենք: Ահա գեղանկար մը 1920 թ.-էն եկող՝ «Ծաղիկով կինը», գործը Սիմոն Յակոբեանի, նկարուած հեղինակի մահէն տարի մը առաջ:

Արեւ Անդիպեանէն երեք մեծղի աշխատանք, «Զայ կինը»՝ որպէս դաստիարակ, որպէս նոր սերունդին հայկականութիւն փոխանցող: Նաեւ գործ մը՝ «Զայ ճարտարապետութիւնը»: Ուրեմն երկու գեղեցկութիւն՝ համադրուած: Երկրորդ գործը «Առիւծի Սաստունը» հայ կնոջ կողմէ, «ուժի սանձահարում»՝ այսինքն հայ կինը խաղաղութեան մարմնացում:

Ապա հինգ գեղանկար Քրիստիան Սալիերիէն: Ահա «Ձուկը Առանց Ջուրի»՝ ինչպէս հայը առանց հայրենիքի: Նախ ձկնորսները՝ ձուկի վերածուած:

Արամ Կուսէրցեանէն՝ մէկը «Սպասում», մայր ու որդի հայրիկի գալուն կը սպասեն:

«Ֆրանսահայ Կնոջ Դիմանկար»՝ գործ Արիէլ Աճեմեանի, «Զայ Իշխանի Դիմանկար»-ը Ժպտուն՝ բաց շապիկով, եւ տակաւին՝ տարբեր երկիրներու տաճարներ, ճարտարապետա-

կան կառոյցներ (Իտալական, պարսկական, ապա՝ Սանահին եւ Սեւանայ վանք):

«Պոլսոյ Ոստիկանութեան Շէնքը»՝ ուրկէ Ռուբէն Սեւակը Չանդըրը տարին, զոր Եաննի Ապէլ-Սեւակը նկարած է որպէս սեւ յիշատակ: Ան այլ նկարածներ եւս ունի՝ Արեւելքի մշակոյթը ներկայացնող:

Ահա եւ Ռուբէն Սեւակի մէկ գծանկարը՝ «Շաթօ Տը Շէլոն»: Հոս են նաեւ բանաստեղծի հօր ու մօր իրեն ուղղած նամակները:

Արսէն Շապանեանէն գեղանկար մը՝ «Մայրը եւ Որդին». առանձին-առանձին՝ մօրը աչքերուն մէջ ցեղասպանութիւնը ապրած տխուր աչքեր, իսկ որդւոյն աչքերուն մէջ լոյս, յոյս, փրկութիւն՝ նոր կեանքի յոյսը եւ սպաննուածներու մասին վերյուշը:

Վերջապէս քահանայ հօր աշխատասենեակին մէջ ենք:

Ան իր նստատեղիի պատէն կախած ունի փայտէ չորս դարակներ՝ իր կեանքին փուլերը պատկերող, զոր յանձն առած է պատրաստել Իտալիոյ մէջ, իր ուսանողութեան վերջին շրջանին:

Իր կեանքի Ա. շրջանը կը սկսի Յովհաննէս Թումանեանի հեքիաթներով, եւ կը տարածուի ամբողջ աշխարհի տպագրութիւններու գրողներուն՝ Հոմերոս, Տանթէ, Անթուան տը Էքզուբերիի «Փոքրիկ Իշխանը», ճըպրան Խալիլ ճըպրանի «Մարգարէն», չինացի, պարսիկ, ռուս ստեղծագործ մարդոց աշխատանքներուն:

Վերին երկրորդ դարակին մէջ՝ «Հայաստան Նոյի Երկիր» հաստափոր գիրքը, ապա «Ծաղիկ Սրբոց Վարուց»-ը, ուր կ'ափովուին սուրբ վարքով ապրած մարդկանց ինծի համար օրինակ ծառայող կեանքեր, օրինակ «Կէիշայի Օրագիրը»:

Առաջին դարակին մէջ՝ հայ արուեստի փիլիսոփայութիւնը, Արամ Խաչատրեան, Կոմիտաս եւ Սայաթ Նովա:

Մեզի ներկայացուածը թալլօ մըն է՝ զոր կը նուիրէ իր վաղաթառամ հօրը անմար յիշատակին:

Իսկ վերջին դարակին մէջ հաստափոր գիրքեր՝ Աստուածաշունչ, Համապատում, Ազգապատում, Նարեկ, Տաթևացի, Էջմիածնի գանձերը, Իտալիայի երեք տարիները, Ֆլորիտա 2013...

Կը տեսնէք ինչերով կ'ապրի հայ նորօրեայ քահանան, որ յստակ կատարելիք շատ գործեր ունի: Ազգային գիտակցութեամբ զինուած հովի:

Թանգարանին ելքի դուռը դարձեալ կ'ազդարարէ «Ռուբէն Սեւակի Թանգարան»՝ մարմարի վրայ արծանագրուած: Կեցցես Յովի. Չիլինկիրեան, դուն կ'ապրիս ոչ միայն Ռուբէն Սեւակով՝ այլ նաեւ ու մանաւանդ Հայաստանով, Հայաստանի այսօրով, անցեալով ու գալիքով, ու քեզի հետ Հայաստանի մէջ կ'ապրի Ռուբէն Սեւակ բանաստեղծը՝ իր անունով կոչուած այս թանգարանով, որ մշակոյթի նոր օճախ մըն է:

Կ'ողջագուրուինք տէր Սեւակի հետ՝ շնորհակալութիւն յայտնելով իրեն մեր երեք օրերու վրայ տարածուող այցելութիւնը պայծառացնելուն համար: Մեղմ ժպիտ մը իր կողմէ:

Կարծէք մեկնիլ չենք ուզեր: Կը դանդաղինք: Արդեօք մեր այս տեսած հարստութիւնը գէթ մտքով պիտի կրնա՞նք տանիլ մեզի հետ, որ հետագայ օրերուն բաշխենք մեզի հանդիպողներուն:

Աւելի ճի՛ղը՝ մեզի հանդիպողները դէպի այս թանգարան ուղղելն է: Մէկ անգամ տեսնելը տասը լսելէն լաւ է կ'ըսեն: Թող այդպէս ըլլայ, թող գան ու տեսնեն, հմայուին ու գեղեցկացնեն իրենց կեանքը:

Արարատեան դաշտին մէջէն կը սուրանք դէպի Երեւան, քիչ մը հարստացած, Ռուբէն Սեւակով հարստացած, իրեն նուիրուած գեղանկարներով հարստացած, մանաւանդ ծովանկարներով, ու այն հաւատքով որ հայը ծով ալ պիտի ունենայ, ինչ-

այն մեծն Տիգրանի օրով, ինչպես Ռուբինեաններու օրով: Հեռուն՝ սահմանապահը Արարատն է: Բաւ է սահմանապահ մնայ Արարատը, թող սահմանապահը Կարիկէն անդին աշտարակուի ո՛չ թէ ինքնաբերաբար մեր երազներով՝ այլ մեր ձեռքով, մեր իսկ երազները մեր ձեռքով գործի վերածելով:

Սա պատմութեան թելադրանքն է, մեր Պատմահայր Խորենացին վկայ, պատմութիւնը կ'ատէ սուտը, սուտ չի՛ խօսիր՝ ինչպէս եռամեծ Խորենացին:

Ս. Սարգիս եկեղեցին մեզ կը դիմաւորէ: Իրմէ առաջ՝ կոնեակի Արարատ ֆապրիքը, կոնեակը՝ Նաւասարդեան տօներու համար, խունկը՝ սուրբ Սարգիս եկեղեցւոյ համար, ուրկէ հեռու չէ այլ թանգարան մը՝ անկրկնելի Փառածանովի թանգարանը: Ողջոյն երեքիդ, հայեր՝:

Հիմա որ ծաղկաւտ այգիի մը պտոյտէն վերադարձած ենք՝ կը ներուի՞ մեզի, թէ այս անգամ մտնենք Ռուբէն Սեւակի գրաւոր-գրական պարտեզի այգիին մէջ, ուր մեղուններու պարսեր բիր ծաղիկներէ ծաղկէ-ծաղիկ թռիչք կատարելով դէպի փեթակ կը թւեն, որպէսզի բաժակ եղջիրները կոնեակի հետ մեղրով ալ լեցուին՝ յանուն ծաղիկ բաշխող Ռուբէն Սեւակին:

Ուրեմն թոյլ տուէք բացատրութիւններու շարքէ մը ետք՝ լայն բանանք Ռուբէն Սեւակի այգիին դռները, վասն կենսաբեր պտոյտի...

Հիմա բացատրութիւններ

Ռուբէն Սեւակը զիս կանչեց Հալէպի Պողոսիկ Կիւլպէնկեան դպրոցի երրորդ դասարան:

Մեր ուսուցիչներէն մէկը՝ մայրենի լեզուի եւ հայոց պատմութեան դասատու Սասունցի Սիմոն Սիմոնեանն էր: Ձիւնք կը կոչէինք որդի Օվէի՝ որ հեռուն Հալէպ քաղաքի Քուլք գետին վրայ ջաղացք մը կը բանեցնէր: Հալէպի Սասունցիները կամ փռապան կ'ըլլային՝ կամ ջաղացպան: Օվէի որդի Սիմոնը մեզի հոգեկան հաց կուտար՝ թեւ շատ քիչ սնունդ կ'առնէինք

մեզի բաժնուած հոգեկան հացէն, բայց մեզի համար Ռաֆֆիի, Գամառ Քաթիպայի, Վարուժանի, Ռուբէն Սեւակի անուններուն կողքին՝ Արտաշէս Աշխարհակալը, Մեծն Տիգրանը, Արշակն ու իր որդին՝ տիրական անուններ էին:

Դադարներուն, որ քառորդ ժամ կը տեւէր՝ «Հայերուս թուքը» կ'արտասանէինք եռանդով, կամ «խաչէն ուժեղ է զէնքը»: Մեզ ուրախացնողը զէնքն էր՝ կամ «Կարմիր Լուրեր Բարեկամն»-ը, քանզի հոն արիւն կար:

Հայոց պատմութենէն քաջ Վարդանն էր մեր հերոսը, յետոյ Անդրանիկը պիտի ըլլար՝ քանի արծիւի պէս թռիլ գիտէր, մեր երեւակայութեան թափ տալով: Այս էր մեր մանկութեան պատկերը, որուն մասին անելի ուշ բանաստեղծ Շիրազը պիտի ըսէր՝ «Անգիտութեամբ բախտաւորներ...»:

Բայց մենք սփիւռքի մանուկներս մէկ շաբթուան մեր կեանքին մէջ ամիս մը կ'ապրէինք՝ երբ մեր մամիկներուն, տատիկներուն բերնէն վախճալիք պատմութիւններ լսելով հասակ կ'առնէինք, եւ ինչ որ կը լսէինք Սիմոն Սիմոնեան գերազնի ուսուցիչի բերնէն տասնամեակներով այդ սնունդով կը մեծնայինք:

Հոգի մարդիկ էին մեր ուսուցիչները՝ եղեռնը տեսած մարդիկ: Անոնցմէ մէկն ալ մեր դպրոցին մէջ Վարդան Երամեան Վանեցին էր, այո՛, այո՛՝ Վանի Համբարձում Երամեանի որդին, որուն հայրը Վանի մէջ Երամեան վարժարանի կոյր տնօրէնն էր, բայց սերունդ պատրաստող մէկը:

Եթէ Սիմոն Օվէի որդի Սիմոնեանը Ռուբէն Սեւակն ու Վարուժանը կը պանծացնէր՝ Համբարձումի որդի Վարդան Երամեանը ջատագովն էր Սիամանթոյի: Ան է, որ ինծի սորվեցուց արտասանել Սիամանթոյի «Ափ Մը Մոխիր Հայրենի Տուն» քերթուածը:

Մենք, մեր սերունդը՝ այդ պատմութիւններով հասակ առինք, եւ արդէն պատրաստի գինուոր էինք հայկական բանակի համար:

Եկեղեցիէն կը վախճայինք՝ քանի մեր օրերուն Զալէպի 500-ամեայ մայր տաճարը, Քառասուն Մանկանց եկեղեցին իր հսկայ մէկ պատին վրայ ունէր սատանաներ՝ որոնք ժողովուրդը դժոխք կը տանէին: Յետոյ այդ պատճառ եղաւ, որ սիրէինք մեր երիտասարդ Պապ թագաւորը, որ գիւղերու բազմաթիւ տէրտէր-վարդապետները բանակ տարած էր՝ «Մէկ գիւղին մէկ տէրտէր կը բաւէ, յառաջ դէպի բանակ» ըսելով: Զայն տեսնել կ'ուզէինք: Յետոյ հայոց պատմութեան մեր ուսուցիչը՝ Երանելի Սիմոն Սիմոնեան, պատմեց թէ բիւզանդացի նուիրակ մը, հոգին ելլէ՝ թունաւորեց մեր Պապ թագաւորը: Ե՛հ, մեր թագաւորն ալ այդ թոյնով սուրճը չխմէ՛ր... Արշակ թագաւորն ալ կը սիրէինք: Արշակաւան քաղաքը կառուցած էր մեզի պէս չարածիճիներու համար, որ կռուիլ սորվէինք, զէնք գործածել սորվէինք:

Այդպէս մեծցաւ մեր սերունդը՝ յետոյ կեանքի ընթացքին նորովի ճանչնալով մեր պատուական բանաստեղծներն ու թագաւորները:

Ուրեմն նոր էջ: Մօտէն ճանչնալ ուզեցինք մեր գրողները: Այս պարագային՝ Ռուբէն Սեւակը:

Ովքեր ինչե՛ր ըսած են Ռուբէն Սեւակի մասին

Զէ՞ որ մօտէն ճանչնալ կ'ուզէինք նահատակ այս բանաստեղծը, որ Զանղըրիի մէջ թուրք արջիկ մը բուժելուն՝ անոր հայրը բանաստեղծին առաջարկած էր թրքանալ, որ մահէն՝ ստոյգ մահէն փրկուէր:

Ռուբէն Սեւակ մերժած էր թրքանալ:

Կը բաւէր այդ: Ան մեր հերոսն էր՝ եւ անոր անունով երգում կ'ընէինք:

Զերթը տանք ուրիշներու.

1.Պոլսոյ «Ազատամարտ» թերթը 1913-ին գրած է, թէ Ռուբէն Սեւակի գրած նիւթերը՝ «Բժիշկի Գիրքէն Փրցուած էջեր»-ը նորութիւն են մեր գրականութեան մէջ:

-«Ռուբեն Սեւակ օժտուած է բանաստեղծական ձիրքերով: Ունի աշխոյժ, արագահոս հաճելի ոճ»:

2.Բանաստեղծ Ահարոն Տատուրեան 1922-ին Պոլսոյ «ճակատամարտ» թերթի 23 Ապրիլ թիւին մէջ գրած է.

-«Գանգրահեր շարժանկար, կանգ առ գարնանային կածաններուն վրայ՝ եւ պատմէ մեզի քու սրտագրաւ պատմութիւնդ: Գիտենք որ մեզի ծանօթ ես, եւ տակաւին չե՛ս աւարտած հեւ ի հեւ զրոյցդ լուսնին ու արեւին տակ՝ եւ դալարաւէտ հովանոցներու ներքեւ»:

-«Ես ոսկեվանդակ մը ունիմ՝ մէջը արտոսրաշիթ դեղձանիկով, ու դեղձանիկս կերգէր ու վանդակս կը ճոճէր կտուրիս ստուերին մէջ: Օ՛, ամէն կին վեր կը նայէր, ամէն մոռցուած կամ չհասկցուած՝ կը սփոփուէր վայրկեան մը իմ երգիքիս տակ: Կտոր մը ճերմակ հաց կը ստանար մուրացիկը, եւ բաժակ մը գինի՝ յոգնատանջ պանդուխտը: Ես լռեցուցի դեղձանիկս՝ երբ արիւն տեսայ, ու քնարս ցաւին մռունչէն փշրուեցաւ...»:

Գանգրահեր շարժանկար, ի՞նչ է անունդ:

-«Անունս երգեցէք քառավանկ մը միայն՝ Ռուբեն Սեւակ»:

Գրական էջ մը ստորագրած է վերի բանաստեղծը՝ քնքոյշ պատկերներով:

3.Անդրանիկ Ծառուկեան Հալէպի մէջ 1951-ին հրատարակած «Հայ Գրողներ» գրքոյկին մէջ գրած է.

-«Ռուբեն Սեւակ մեր գրականութեան տուաւ կեանքով, մտածումով եւ ապրումով թաթաւուն արծակ էջեր, վիպակներ եւ քերթուածներ, որոնք կը մատնեն բանաստեղծի զգայուն հոգի մը: Սեւակ, համամարդկային զգացումներու բանաստեղծ է, այսինքն՝ մարդոց կեանքին եւ կեանքի զանազան երեւոյթներուն մէջ կը փնտռէ ինչ որ ազնիւ է, բարի ու գեղեցիկ»:

4.Արմէն Սեւան 1930-ին «Հայրենիք» ամսագիրի 9-րդ տարի թիւ 1-ին մէջ ստորագրած է 18 էջերու վրայ տարածուող յօդուած մը՝ ուր Ռուբեն Սեւակի մասին ըսած է.

-«Եթէ Դուրեան, Մեծարենց, Վարուժան ժայթքումներ էին... ապա Սեւակը ամէն օր քիչ մը աւելի բարձրացող երելոյթ»:

5.1943-ին Երուսաղէմի Թորգոմ Մանուկեան սրբազան Պատիարքը գրած է.

-«Ռուբէն Սեւակ հեղինակ մըն է, որուն թէ՛ գրական եւ թէ՛ ներքին անհատական աշխարհը, անսովոր թափանցումով ապրումներ, սելեռումներ տուած է մեր գրականութեան: Բացարձակ գնահատանք մը չէ, որ կը փորձենք՝ անոր արժանիքներուն: Բայց դժուար է զինք մօտեցնել իր սերունդէն իր կաղապարը ունեցող ուրիշ գրողի մը, որուն մօտ գիտնականի մը անհրաժեշտ ցամաքութիւնը, մարդկային ցաւերուն տագնապը, բանաստեղծի մը հոգիին քաղցրութիւնը այնքան համերաշխօրէն իրար պաշտպանէին»:

6.Յակոբ Օշական իր «Պատմութիւն Արեւմտահայ Գրականութեան» երկասիրութեան մէջ գրած է.

-«Իր վիպակները գրուած են լրագրի համար: Ունին օգտապաշտ զօրաւոր նկարագիր: Անոնք գրողին խղճմտութիւնը, փառասիրութիւնը, խօլ ու անորակելի ձգտումները փորձի ենթարկելէ աւելի՝ պայմանաւոր են զանգուածները լուսաւորելու առաքելութեամբ:

...Շրջանակ, տիպարներ, տռամա՝ հոս կը մնան իրենց իրաւունքներուն տէրը, ու կը կառուցանեն վիպակը: Շքեղ էջ մըն է "Կռունկը", ուր ցաւերուն ամենէն երիտասարդը կը զարնէ՝ տարիներով դարանակալ սպասելէ վերջ, իր ուսումը աւարտած ու հայրենիք վերադառնալու պատրաստուող համալսարանականը: Չեմ պատմեր վիպակը, բայց կը ղրկեմ ընթերցողը այդ քանի մը էջը լայնցնող գլուխ գործոցին, որուն մէջ ամբողջ ժողովուրդի մը դարաւոր փորձառութիւնը՝ անցնող թռչունին սպասելու, ինչ որ գետինը պիտի չտայ իր աչքերը գոցելու հարկադրուած պանդուխտին քովիկը՝ սանոր փորձառութեան՝ որ մեր գրականութեան ամենէն մեծ քա-

նի մը անունները արեւատիպ պարտադրեց մեր հիացման սիրոյն, կը գտնեն իրենց ամենէն յուզիչ կերպարանք: Սեւակ գրագէտ մըն է հոն»:

7.1983-ին Ակադեմիկոս եդ. Մ. Ջրբաշեան Երեւանի մէջ հրատարակած «Գեղագիտութիւն եւ Գրականութիւն» գիրքին մէջ (էջ 256-257) Ռուբէն Սեւակի մասին կ'ըստ.

«Իսկ Ռուբէն Սեւակը, որը յայտնի դարձաւ պարբերական մանուկում տպագրուած գործերով եւ “Կարմիր Գիրքը” ժողովածուով (1910), արտաքուստ շատ աւելի տուեալներ ունէր իրապաշտ բանաստեղծ կոչուելու: Այդ են վկայում մանաւանդ, ժամանակի սոցիալական կեանքի անլուծելի հակասութիւնները պատկերող “Մարդերգութիւն”, “Այս Դանակը”, “Փողոց Աւլողը”, “Կարմիր Դրօշակը” եւ այլ գործեր, ինչպէս նաեւ բժշկական աշխարհի ցաւալի իրողութիւնները բացող պատմուածքները “Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր”: Ի զուր չէ, որ նամակներից մէկում նա գրում է.

“Ես աւելի իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը զիս կը գրաւէ: Ամէն իրականութենէ վեր մէկ իրականութիւն կը ճանչնամ ես, ապրուած, զգացուած կեանքը եւ ոչ թէ երեւակայուած կեանքը”:

Թէեւ կարելի է ասել, որ սա ռեալիզմի բաւական յստակ սկզբունք է, բայց Սեւակի բուն ստեղծագործութեան մէջ իրապաշտութիւնը հիմնականում մնաց առանձին նկարագրութիւնների սահմաններում, եւ չվերածուեց քիչ թէ շատ ամբողջական համակարգի: Կեանքի իրական տեսարանները Սեւակը ենթարկում էր որեւէ գաղափարական կանխադրոյթի, որն իր բնոյթով իրօք ռոմանտիկ է, քանի որ ելնում է ոչ թէ իրականութիւն-օբեկտի իրաչափութիւններից, այլ կեանքին հակադրուող բանաստեղծական իդէալից: Ռոմանդիզմն աւելի եւս որոշակի է Սեւակի լաւագոյն երկում՝ ոսկու բուրժուական համատարած իշխանութիւնը արուեստագէտի հզօր երազան-

քով յաղթահարող «Թրուպատուրները» բանաստեղծութեան մէջ, ինչպէս նաեւ ազգային դժբախտութեան դրուագներ պատկերող գործերում («Ջարդին խենթը» եւ «Թրքուհին» պոէմները, մի շարք բանաստեղծութիւններ): Ի զուր չէ, որ այդ պոէմներում որոշակիօրէն գծագրուում են հայկական ռոմանտիզմի ամենավառ երկերի՝ Ռաֆֆու «խենթը» եւ «Ջալալդդին» վէպերի մի շարք կերպարների եւ սիւժետային վիճակների ուղղակի անդրադարձումներ»:

8.1986-ի Մայիսին Արմէն Դարեան արծակագիրը խօսելով Ռուբէն Սեւակի մասին՝ ըսած է.

-«Արտոյտի առաւօտեան խեղդամահ երգ մը, իր թռիչքին մէջ ջախջախուած սլացք մը, որուն անունն է Ռուբէն Սեւակ: Իր քսանին մէջ իսկ ան տրուած անուն մը, ոչ այնքան իր տուածին՝ որքան իր տալիքին համար:

Մեր նոր ոսկեդարու խոնարհ գրիչ՝ Ռուբէն Սեւակ տազնապեցաւ իր ժողովուրդին համար ու քալեց դէպի մահ իմացեալ, վասն իր ժողովուրդին: Քիչ անգամ գրիչն ու մարդը այնքան հարազատ են ընթացքը իրարու հետ կեանքին մէջ՝ առաջին օրէն մինչեւ պահը վերջին, որքան Ռուբէն Սեւակի պարագային»:

9.Փարիզի «Աշխարհ» շաբաթաթերթը 16 Դեկտ. 1989-ի թիւին մէջ կը յայտարարէ թէ Ռուբէն Սեւակի անունը կրող գրական մրցանակ մը հաստատուած է Յովհաննէս Զիլինկիրեանի կողմէ:

Հաղորդագրութիւնը կը հաստատէ, որ.

1985-ի մրցանակը յատկացուած է Գեորգ Գապառաճեանի:

1986-ի մրցանակը՝ Անահիտ Թովճեանի:

1988-ի մրցանակը՝ Անդրանիկ Ծառուկեանի:

1989-ի մրցանակը յատկացուած է «Արարատ» օրաթերթի խմբագրապետ Ժիրայր Նայիրիին, նաեւ Անթիլիասի Հայոց եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութեան՝ 1986-ին Պէյրութ հրատարակուած «Ռուբէն Սեւակ - երկեր» հատո-

րին համար, ու միաժամանակ Վարդան Ապտոյին՝ որ Նիւճըր-գիի հայկական ռատիոժամէն 1988-էն սկսեալ շարունակաբար իր ունկնդիրներուն ծանօթացուցած է Ռուբէն Սեւակը:

Այս առիթով նուիրատու Յովհաննէս Չիլինկիրեան տուեալ հաւաքոյթի ընթացքին ներկայ ըլլալով՝ ըսած է.

-«Ազգ մը իր հերոսներով կ'ապրի: Ազգ մը, որ հերոսներ չունի՝ ապրելու իրաւունք չունի: Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ՝ ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Այս առիթով Չիլինկիրեանը կը յաւելու.

-«Ռուբէն Սեւակի արծակ, չափածոյ եւ հրապարակագրական էջերը՝ յատկապէս Բժիշկին Գիրքէն Փրցուած էջերը՝ եւ ԴՆԱՍԵՐՈՒՄ՝-ը կը բաւեն լիովին արդարացնելու մեծ նահատակին տրուած ԴՊՁԱՅԻՆ Գործիչ՝ կոչումը: Կարդալ այս էջերը՝ ուր Ռուբէն Սեւակ ազգային-յեղափոխական զարթօնք մը կը մաղթ հայութեան, կ'այպանէ մեր ժողովուրդի նկարագրին յռոյ գիծերը, մտաւորական դասին անկումային տրամադրութիւնները, քաղաքական որոշ գործիչներու անհեռատեսութիւնը, հայութեան գոյութեան դէմ դաւադրութեան մը նիւթուիլը, որ բայցայատ կ'երեւի, բայց որուն դէմ ինքնապաշտպանուելու մասին չի մտածեր՝ այլ մինչեւ իսկ Բարեկամութիւն՝ մշակել կը յանձնարարուի հայ ցեղի վաղուան դահիճներուն հետ:

Կարդալ այս տողերը Ռուբէնի եւ իր մէջ չհաստատել յանդուզն, իրատես, սրտացաւ ու յեղափոխական ազգային գործիչի մը կրեպարը՝ կը նշանակէ ըլլալ կամաւոր կոյր, եւ ուրանալ... արեւին գոյութիւնը այս աշխարհի վրայ»:

10.Անդրանիկ Ծառուկեանին խօսքը Փարիզի մէջ՝ Ռուբէն Սեւակի 100-ամեակին նուիրուած հանդիսութեան.

-«Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Սեւակ - այս երրորդութեան մէջ Ռուբէն ամենէն տաղանդաւորը չէ, եւ տաղանդի հարց մըն ալ չկայ: Բայց կայ ուրիշ բան մը՝ միւսները բանաստեղծ են, լաւ բանաստեղծներ, հռչակաւոր բանաստեղծներ՝

բայց Ռուբեն Սեւակ, այս 100-ամեակի առիթով կ'ուզեի որ մեր սիրելի ունկնդիրներու մտքին մէջ այս մէկը ամրանար, խարսխուէր՝ պարզ բանաստեղծ մը չէր, Ռուբեն Սեւակ ինքն իրեն կոչում մը, առաքելութիւն մը, նուիրական պարտականութիւն մը սեպած էր զբաղիլը ազգային ցաւերով: Միւսներուն գործերը կը տեսնենք իրենց բանաստեղծութիւններուն մէջ, միայն Վարուժանի մը կամ Սիամանթոյի մը՝ իրենց բարձր, շքեղ բանաստեղծութիւնը կարդալով կը բաւարարուինք: Ռուբեն Սեւակ իր կեանքին մէջ, կեանքի ընթացքին մէջ, առօրեայ կեանքին մէջ՝ եղաւ իրական գործիչ մը, եւ իր այդ լայն տարածումը ազգային ցաւերով ապրելու, բոլոր ցաւերով հետաքրքրուելու, բոլոր ցաւերուն օգնութեան հասնելու իր այդ ներքին աւիւնը որ շատ զօրաւոր էր... ինձի այնպէս կը թուի, որ բանաստեղծ մը չէ, որ մեռաւ, բժիշկ մը չէ որ մեռաւ, այլ ազգային դրամագլուխ մը... ամբողջական ազգային գործիչ մը...»:

Վկայութիւններու այս թիւը կրնանք աւելցնել, բազմապատկել՝ նոյնիսկ խօսքերովը Զրանտ Թամրազեան քննադատի, Պէպօ Սիմոնեան ուսուցիչ-գրողի, Գարեգին Բ. Կիլիկիոյ Վեհափառի, բայց վստահ ենք, որ վերի տուեալները ընթերցողին միտքին ու հոգիին մէջ վերջնականօրէն թաճուեցան՝ ու մենք, որպէսզի անցնինք ներկայացնելու բանաստեղծ ու արծակագիր Ռուբեն Սեւակը՝ բանանք նոր գլուխ մը այս էջերուն վրայ:

Եւ անցնելէ առաջ մեր խօսքին՝ շեշտենք այն դերը, զոր ունեցան Անահիտ եւ Ալեքսանդր Թովչեանները Երեւանէն մինչեւ Փարիզ ու այլ Եւրոպական երկիրներ, ուր Ռուբեն Սեւակը որպէս բանաստեղծ ու արծակագիր ներկայացնելէ բացի բեմերէն՝ ասմունքով հայ եւ օտար մամուլի մէջ յօդուածներով, դասախօսութիւններով ու վերջապէս Ալեքսանդր Թովչեանի կողմէ ճարտարօրէն հիւսուած վէպով մը՝ «Անգամ Մահից Յետոյ», պատճառ դարձան հետաքրքրութեան ընդլայնումին՝

հանդէպ Ռուբէն Աւեակի կեանքին ու գործին, թարգմանութիւններ կատարելով նաեւ նահատակ բանաստեղծի գործերէն:

Ու այս բոլորէն վերջ նաեւ սակաւ չեղաւ թուփչեան ամուլին դերը Ռուբէն Աւեակի գործերուն հրատարակչական հարցերուն օժանդակութեան մէջ:

Ջայս նկատի ունինք որպէս մեր մշակոյթին նուիրուելու օրինակ՝ փոխանցելի օրինակ:

Այժմ տանք մեր կարծիքը Ռուբէն Աւեակի գրականութեան մասին

Ինչպէ՞ս կարօտով ջիշենք նախակրթարանի երրորդ դասարանը, երբ մենք մատ մը երեխաներ՝ արդէն կ'արտասանէինք Դուրեան ու Մեծարեանց, Աղայեան ու Թումանեան՝ Գիգորին մեղքնալով, մենք զմեզ Տորք Անգեղ կարծելով, կամ արտասանելով Ռուբէն Աւեակի «Ջարդի Խենթը», Վարուժանի «Աղօրիքը», Սիամանթոյի «Ափ Սը Մոխիր Հայրենի Տուն»-ը, Սեւակէն՝

Հա՛, հա՛, հա՛,

Հօրս դիակն ուսիս կը քալեմ ահա՛

Ջարդուածներու դաշտին վրայ լուռ...:

Եւ մտածել՝ որ մեր դասարանի աշակերտներուն մեծամասնութիւնը որքերէ կը բաղկանար:

Այդ օրերուն ո՛չ միայն Ռուբէն Աւեակէն՝ այլ մեր մեծ հայրերէն ու մեծ մայրերէն միայն ջարդի պատմութիւններ կը լսէինք, եւ նոյնիսկ մեր մանկական խաղերուն նիւթը ջարդն էր, այսինքն մեզմէ ամէն մէկը Հայկ Նահապետն էր, ըմբոստ ու լայնալիճ աղեղով ու հաստաբազուկ: Ո՛չ ոք կ'ուզէր Բել կոչուիլ:

Մենք հասակ առինք մշակոյթի սիրով՝ կախուելով մեր ուսուցիչներու շրթներէն, որոնք մեր խմորէն հայկական հաց պատրաստել կ'ուզէին:

Երբեք զարմանալի չէ, որ մեր գրականութեան ակնառու մեծերէն շատերը Եւրոպական կեդրոններու մէջ թրծուած եղան տուեալ երկիրներու գրականութեամբ:

Արեւելահայ գրականութեան առաջին վիպագիրը կուգար Թորփատի համալսարանէն՝ Խաչատուր Արովեան:

Արեւելահայ գրականութեան ազատութեան երգիչը Միքայէլ Նալբանդեան՝ կուգար Մոսկուայի համալսարանէն: Ու այսպէս՝ երկարող շարքը Արեւելահայ գրողներու:

Արեւմտահայ գրականութեան մէջ Դանիէլ Վարուժանը եկաւ Պելճիգայի Կանտ քաղաքի համալսարանէն:

Սիամանթօն՝ Փարիզի համալսարանէն (ազատ ունկնդիր):

Ռուբէն Սեւակը՝ Լոզանի բժշկական համալսարանէն:

Բայց ոգին, որ հայ գրողները կը մղէր ստեղծագործելու՝ կուգար երկրէն, հայ հողէն, դարաւոր Հայաստանէն՝ որ մշակոյթը մօր պէս պահել գիտէր:

Ահա թէ ինչո՞ւ հայ գրողները երբ հետեւեցան Եւրոպայի ժողովրդային շարժումներուն՝ տեսան տուեալ երկիրներու զարգացումի այլ ընտրանք, երբեք կուլ չգացին մոտայիկ շարժումներու՝ ինչպէս այս օրերուն կը պատահի քիչ մը ամէն տեղ, այլ ստեղծեցին ինքնուրոյն գրականութիւն՝ տալով կեանքը մեր սեփական ժողովուրդի, անոր անցեալովն ու ներկայովը, անոր տառապանքներովն ու մաքառումներովը, նաեւ յոյսերովը:

Ո՞վ տեղեակ չէ, որ Դանիէլ Վարուժանը գրեց նաեւ ընկերային բանաստեղծութիւններ՝ սիրելով էմիլ Վերհարնը, բայց երբեւէ չկրկնեց Պելճ բանաստեղծը:

Ո՞վ տեղեակ չէ, որ Սիամանթօն ունի ընկերային բանաստեղծութիւններ: Ան գիտէր իր երկրին, իր ժողովուրդին ուզածը: Այդ կեանքն էր զոր պիտի տար:

Իսկ Արփիարեանը հայ արձակի մէջ եղած է առաջին Արեւմտահայ գրողը՝ որ խօսած է դասակարգային պայքարի մասին (Ոսկի Ապրջան):

Բայց ահա մեր տեսադաշտին դէմ կը բարձրանայ անունը Ռուբէն Սեւակին, որ եթէ Պոլսոյ «Ազատամարտ»-ին մէջ կերելի սկիզբը քնարական բանաստեղծութիւններով՝ ապա ար-

ծակով, ուր շեշտուած կը գտնենք ճակատային խօսքով զանգուածներու դիմող, ժողովուրդին համատարած ցաւերովը եռեւեփող գրողը:

Ոմանք Ռուբէն Սեւակը կոչեցին նեօռոմանտիկ, բայց ան մնաց գերազանցապէս իրապաշտ բանաստեղծ ու արծակագիր, թուղթին յանձնելով այն ինչ որ կատարուած է կեանքին մէջ, անտեսելով յերիւրածոն:

Ռուբէն Սեւակի ապրած օրերուն հայ կեանքը իսկական գեղէն մըն էր՝ մեր երկրին զոյգ բաժիններուն մէջ:

Բայց ահա ան՝ ինչպէս Ջապէլ Եսայեանը, Սուրեն Պարթեւեանը, Վարուժանը, Սիամանթօն ու Թէքէեանը՝ գրեց եղեռնի մասին: Անշուշտ այդ օրերու Ատանայի ծրագրեալ ջարդին մասին՝ որ այլոց գործը չէր, Իթթիհատի ճիւղային գործն էր, փորձը՝ ծրագրեալ ցեղասպանութեան:

Հայ գրողները արծանագրեցին մղկտացնող պատմութիւններ: Բայց այս բոլորին մէջ Ռուբէն Սեւակը նշտրակ ի ձեռին եղաւ ամենէն յախուռն գրողը, իր ժողովուրդին նոր արեւելում տուող առաջնորդը՝ թէ՛ իր պոեմներով, թէ՛ իր արծակ գրականութեամբ ու հրապարակագրական յօդուածներով:

Ռուբէն Սեւակ թէւ կարճ միջոց մը (գրականութեամբ զբաղելու իր ժամանակը եղաւ միայն տասը տարի) գրեց քնարական բանաստեղծութիւններ, երգեց սերը, բնութիւնը՝ բայց միաժամանակ անվարան գրեց նաեւ արծակ էջեր, որոնցմով կը ձգտէր մեր ժողովուրդը մղել ընդհանուր զարգացումի: Իսկ որպէս բժիշկ՝ Սեւակ իր գրիչին միացուց բեմական խօսք, եւ հանդէս եկաւ օգտաշատ դասախօսութիւններով:

Այդ դասախօսութիւնները ժողովուրդի առօրեային մէջ յաճախ բուժիչ դեր կը կատարէին՝ այնքա՛ն ըմբռնելի:

Մեր հրապարակախօսութեան, նոյնիսկ գրականութեան մէջ Ռուբէն Սեւակը եղաւ առաջինը, որ բժշկական նիւթեր մշակեց՝ անմիջականօրէն ժողովուրդին ծառայելու համար:

Իր ոճով՝ Ռուբեն Սեւակ եղաւ ու մնաց այն ստեղծագործողը, որ արձակով ու բանաստեղծութեամբ այլազանութիւն ստեղծեց գիրի ճամբով: Անոր միտքը ժողովուրդին ծառայելն էր: Անոր բոցավառ գրիչը կափարիչ չընդունող այն կաթսան էր՝ որուն եփած ապուրը ժողովուրդը կուշտ պիտի պահէր:

Ռուբեն Սեւակ մեր ժողովուրդին դարաւոր ընդվզումները փորձեց օրուան հարցերու լուծումին ծառայեցնել՝ բայց ան յաճախ մնաց առանձին:

Մեր ժողովուրդը տուեալ շրջանին կ'ապրէր օրհասի օրեր, եւ ան շտապ անհրաժեշտ օգնութեան մը պէտքը ունէր:

Ահա թէ ինչո՞ւ Ռուբեն Սեւակ՝ Լոզանի իր հանգիստ կեանքը լքելով՝ աճապարեց հասնիլ իր ժողովուրդին, որպէս շտապ օգնութիւն:

Ըսողներ եղան՝ քիչ մը փսփսուքով, որ Ռուբեն Սեւակի անունը բարձրացաւ պատուանդան՝ քանի ան նահատակուեցաւ քստմնելի պայմաններու տակ:

Միթէ ա՞յդ էր ողջ ճշմարտութիւնը:

Նման կարծիք տարածողները հաստատած կ'ըլլան՝ թէ իրենք լրիւ անտեղեակ են Ռուբեն Սեւակի գրականութենէն...:

Ի՞նչ Ռուբեն Սեւակը՝ այո՛, պաշտելի է ինձի համար, մեծ է նաեւ օրինակելի իր նահատակութեամբը, որ պիտի խնայուէր իրեն՝ եթէ ինքը թիրքանալ ուզէր:

Բայց ան արեան ճամբով կուգար Արա Գեղեցիկէն՝ որ չդաւաճանեց իր Նուարդին:

Հայը դարերու մարդն է: Հայուն մէջ դարեր կան: Ու դարերուն դաւաճանողը՝ արժանի է մի՛այն քարկոծումի:

Բայց նակտի ունեցէք, լաւ պահեցէք ձեր մտածումի պաստառին վրայ՝ որ Ռուբեն Սեւակը մեծ է նաեւ որպէս բանաստեղծ ու արձակագիր:

Ահա թէ ինչո՞ւ մեր յաջորդ էջերուն վրայ Սեւակի ստեղծագործութիւններուն ընդմէջէն՝ ձեզի ալ հաստատել պիտի

տանք, որ այո՛, Ռուբեն Սեւակ մեծ է նաեւ իր գրականութեամբ:

Եիշո՛ւ է, որ Սեւակ հեքիաթներու հերոսներուն պէս քայլ առ քայլ յառաջացաւ դէպի կատար՝ իր բանաստեղծութիւններով: Եթէ կ'ուզէք՝ ան կոկոն մըն էր, որ պէտք ունէր բացուելու, ողողելու համար իր շրջապատը բոյրերովը վարդի ու մեխակի: Սեւակ աճապարելու պէտք չուներ, իր կոկոն երգերու շարքերը պիտի բացուէին՝ ու իրենց բոյրով պիտի հաստատէին ներկայութիւնը իրենց:

Ի գուր չէ, որ ռուս բժշկական գրականութեան մէջ կայ հետեւեալ օրինակը.

«Եթէ բժիշկ մը այցելած ու քննած է հիւանդ մը, գրած դեղագիրը ու... մեկնած, եթէ բիշկին մեկնումէն ետք ենթական օգտուած չըլլայ՝ թելադրուած դեղերէն՝ ինքզինք անմիջապէս հանգիստ չզգայ, որովհետեւ բժիշկի մը այցելութիւնը ստացած չ'ըլլար այդ հիւանդը»:

Ընթերցողներ, երբ կարդալու ըլլաք ռեւէ հեղինակի գործերը՝ այս պարագային Ռուբեն Սեւակի գործերը, վստահ եղէք թէ բժիշկ մը այցելած է ձեզի, ուստի օգտագործեցէ՛ք բժիշկին դեղատոմսը, որ այս պարագային Ռուբեն Սեւակի բանաստեղծութիւններն են ու պատմուածքները...:

Իսկ եթէ Ռուբեն Սեւակին տրուէր ապրիլ երկա՛ր՝ այգի մը, նոյնիսկ այգիներ քիչ պիտի ըլլային անոր գրութիւններուն ծաղիկները յարատեւօրէն ընդունելու համար:

Ռուբեն Սեւակի տուածն ու տալիքները պիտի գային հայկական գէնի ամրապինդ ըլլալէն, որուն մէջ միշտ դարերու կուտակումներ կան:

Անցնինք նոր նիւթի:

Ա. ԲԱԺԻՆ - ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ռուբեն Սեւակի գործերուն վերլուծումին սկսելու պահին՝ կը ծագի բանաստեղծի գրութեան ընթացքին հաւատարիմ

ըլլալու հարցը: Սկզբունքով հաստատած ենք արդեն, որ ան իր ողջութեան հրատարակած է միայն մէկ գիրք՝ որպէս բանաստեղծութիւն:

Բայց նակտելով, որ Լիբանանի մէջ Հայ Համալսարանականներու Միութիւնը լրջագոյն աշխատանքով, կաթողիկոսարանի հրատարակութեամբ 1986-ին «ԵՐԿԵՐ» խորագիրին տակ լոյսին բերած է գիրք մը (գրեթէ ամբողջական) Ռուբէն Սեւակի մասին՝ հատորը սկսելով բանաստեղծի «Սիրոյ Գիրքը» հատորով, որոշեցինք հաւատարիմ մնալ լաւ կազմուած այդ շարքին:

Այժմ մեր խօսքը:

«Սիրոյ Գիրքը» կը բաղկանայ վաթսուն բանաստեղծութիւններէ, որոնք յիշեալ հրատարակութեան մէջ գրուած են 89 էջ:

Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները այս հատորին մէջ ընթողգրկած ըլլալով սիրոյ զեղումներու հարցը՝ ըսել կուտան մեզի ընդփոյթ, որ Սեւակի բանաստեղծութիւնները՝ անոնք ըլլան առաջին զեղումներ, թէ սիրոյ ցանցին ենթակայ երիտասարդ հոգիի մը յոյզերը՝ երբեք կոչուած չեն կիրք յարուցելու ընթերցողներուն հոգիներուն մէջ:

Անոնք բոլորը անձնապէս ապրուած պահեր են, ուր լրջութեան շղարշին ընդմէջէն մեզի կը մատուցուին խոր ապրումներ՝ պատկերաւոր խօսքի առաւելութեամբ ակադծուն:

Ռուբէն Սեւակը խոր ապրումի բանաստեղծն է, իր սիրոյ արտայայտութիւններուն մէջ սերը բարձրացուցած անմերձեմալի պատուանդանի մը վրայ, ձգտելով հասնիլ հոն՝ այդ բարձունքին:

Հաստատելու համար ըսուածը՝ տանք օրինակներ վերոյիշեալ հրատարակութեան «Սիրոյ Գիրքը» բաժինէն:

Ահա քառեակ մը՝ «Արցունքին Քերթուածը» բանաստեղծութենէն.

Այտերն ի վար, այտերն ի վա՛ր, ուր յաւետ
Կը տոչորուի հետքը վերջին համբոյրին,
Իջի՛ր, արցունք, զովութեանդ մէջ երկնաւետ՝
Թող սէրերու յետին բոցերը մարին:

Այլոց մօտ պիտի առաւել բորբոք դառնային սիրոյ այդ բոցերը, մինչ այստեղ՝ մարելու հրաւեր կայ:

Հաստատենք անմիջապէս, որ վերի մէջքերունը որպէս բանաստեղծական կառոյց ընդունելի է, ու յետոյ՝ յստակ են մտածումները, ուր սէրը պահելով իր ջերմութիւնը՝ բանաստեղծը մղած է յուսախաբութեան մը, այլապէս ինչո՞ւ յանգէր տխուր եզրակացութեան մը:

Բայց հոս, նկատի ունենալով Ռուբէն Սեւակի ներաշխարհին փոթորկումները, որոնք հայ խիզախ գրողը ընդմիշտ կապած են մեր ժողովուրդի դժխեմ ճակատագիրին, գուցէ մղած է բանաստեղծը, որ երգէ մեր ժողովուրդին անկռելի տուայտանքը՝ քան թէ սեփական սիրոյ ապրումները:

Չաճապարենք, ինքն իսկ յայտնած է այդ քերթուածին մէջ իր յուսահատումին պատճառը.

Համբոյրներու թերթերուն վրայ ցիրուցան,
Անոնց վրայ որ «կը սիրենք քեզ» ըսին,
Անոնց վրայ, որ ժպտեցան ու անցան,

Ու խեղճ սրտին մոխիրներուն վրայ տրտում,
Փլատակներուն վրայ Տենչին ու Յոյսին՝
Իջի՛ր, արցունք գորովանքովդ անդադրում:

Նախ նկատի ունեցէք այս քերթուածին լոյսին գալու վաղեմութիւնը՝ 1907 թ., երբ հայ կեանքի ժամանակի քերթողութեան մէջ լացը, յուսահատութիւնը մեծ տեղ գրաւած էին թէւ, բայց թէ՛ հայ կեանքին, թէ՛ գրականութեան մէջ ըմբոստացու-

մի ալիքներ բարձրանալ սկսած էին: Ահա թէ ինչո՛ւ Ռուբէն Սեւակի գրականութիւնը եւս չվարակուեցաւ ողբասացուեամբ, ինք՝ իրմէ ըմբոստ նկարագիրի տէր:

Այդպիսին էին Ռուբէն Սեւակի ժամանակակիցներէն Վարուժանն ու Սիամանթօն: Արդեօք օսմանեան պետութիւնը, ամբողջատիրական պետութիւնը գողունի չէ՞ր հետեւէր հայ գրողներու հրատարակած գործերուն, անոնց մերկապարանոց խիզախ արտայայտութիւններուն:

Մամուլը կը յայտներ, թէ հայ ժողովուրդը անկախութիւն ուզած չունի, դէմ է երկրի բաժանումին, կուսակցութիւն մըն ալ կը ստորագրէր Իթթիհատականներու մեղսակցութեամբ՝ թէ ինք դէմ է երկրի բաժանումին, բայց ահա՛ հայ բանաստեղծներ ուրիշ երգ մը կ'երգէին ազատագրական պայքարի երգեր: Իրարմէ լուր չունէի՞ն բանաստեղծ ու կուսակցութիւն:

Բայց համենայն դէպս Ռուբէն Սեւակ կ'ապրէր նոյն տխրութիւնը՝ «Յոգիս» քերթուածին մէջ.

Սիրտս անհուն ցաւով լի, ես ծռեցայ սգահար,
Մատենրուս մէջ առի զայն, ու իր մարմինը նիհար,
Գուրգուրանքով, արցունքով մօտեցուցի շրթունքիս:

Իսկ «Կարապները» քերթուածին մէջ.
Բերան բերնի, վիզը վիզին անբարբա՛ռ,
Կարապները կը մնան լո՛ւռ քարացած:

Սէրը կ'ապրուի, յաճախ պէտք չունի որեւէ արտայայտութեան՝ օրինակովը կարապներուն, որոնք դուրսէն քարացած էին՝ բայց «վիզը-վիզին» ապրումներու մէջ:

Չարե՞նցի Սոման եւ Պարոյրի Նաւակիկէն յիշեցնող քերթուած մըն է Դաիանային նուիրուած բանաստեղծութիւնը, ուր իւրաքանչիւր համարին առաջին եւ վերջին տողերուն վրայ պահուած կրկնութիւնը երգեցիկ կը դարձնէ գրութիւնը:

Սեւակ յաճախ դիմած է քերթուած մը կրկնութիւններով երգունակ դարձնելու վարպետութեան: Ահա նոյն միջոցին դիմած ըլլալը կը հաստատենք «Լեւնան» անուանուած քերթուածին մէջ՝ ուր կայ կրկնութիւնը «Ի՛նչ անոյշ է հանդարտիկ հովն իրիկուան» տողին:

Կը զգանք թէ քերթուածն ամբողջ մեր ռունգերուն կը բուրվարէ Մեծարենցեան բուրմունք մը: Ռուբէն Սեւակ նոյնիսկ իր սիրոյ բորբոքուն պահուն չի մղեր ընթերցողը կրքայարոյց ապրումներու.

Ժամն է, աղու՛ր, երանութեան ժամն է աս,
Շրթներուս վրայ դիր շրթունքներդ բոցէ,
Մոռցի՛ր կեանքը, աղուոր աչքե՛րդ ալ գոցէ...
Ի՞նչ, կ'արտասուե՞ս, ու յուզումե՛ղ կը դողա՞ս,
Ժամն է, աղու՛ր, երանութեան ժամն է աս...:

Տակաւին, բանաստեղծը կը տենջայ թաղուիլ սիրոյ աղբիւրի «երջանկութեան պատրանքով», թեւ վտակը իր վազքով կը վազէ դէպի իր մահը: Սիրոյ վազքը եւս կը վազէ դէպի իր մահը՝ բայց ի՛նչ փոյթ, չէ՞ որ այլ բանաստեղծ մը երգած է «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ»: Ապրուած սերը կեանքն իսկ է՝ նոյնիսկ երբ մահուան կ'առաջնորդէ:

Ռուբէն Սեւակ բանաստեղծին մօտ ընտրելագոյն բառերու օգտագործումը իր քերթողական արուեստին մէջ քմայքի մը երեւումը չունի երբեք: Բանաստեղծը յիրաւի իր հարուստ բառապաշարը՝ ինչպէս ժամանակակից մեծերը, տեղին կը գործածէ՝ խուսափելով անելորդաբանութիւններէ:

Հաստատելու համար վերոգրեալը՝ տանք հնգեակ մը բանաստեղծին «Երգ երգոցը» քերթուածէն.

Երա՞գ, տեսի՞լ, անգոյ ստուե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ,
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդեօք ցընորքի,

Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ,
Երա՞գ, տեսի՞լ, անգոյ ստուե՞ր մ'անհոգի:

Վաղագնայ Մեծարեմքը պիտի երգէր.
Չամբոյրիդ, գիշեր՝ պատուհանս է բաց...:

Իսկ ահա Ռուբէն Սեւակի «Չամբոյրը».
Չոգի՞ս, դո՞ւն, հո՞ս... Ու տեսայ որ ոչ հեռո՞ւ,
Գետափին մօտ, յանկարծաթա՛փ, ո՛ւժգնովին,
Չովերու պէս որոնք իրա՛ր կը ծուլուին՝
Երկու ստուեր կը նետուէին իրարու...:

«Տրտում ոգի...»-ին ուղղուած իր սիրերգին մէջ, ահա թէ
ինչ կ'ըսէ «Լոյսի աղբիւր»-ին գացող բանաստեղծը.

Ես խոյացայ նուիրումէ՛ս տենդահար՝
Չո՞ն ուր նիհար ճառագայթ մը կայ լոյսի,
Չո՞ն ուր սիրոյ վըտիտ երգ մը կը դողար,
Չո՞ն ուր դողդոջ ծիածան մը կայ լոյսի...

Ոեւէ մէկը կրնա՞ր աւելի լաւ ներկայացնել վերի ապրումը՝
քան Ռուբէն Սեւակը ինք, որ իր ամբողջ կեանքը վերածեց
վազքի՝ դէպի յոյսն ու լոյսը, ու՝

Մեռնի՛լ, մեռնի՛լ... անմահանալ մահուան մէջ:

Այդպէս ալ անմահացաւ ան մահուան մէջ:

«Կեանքը երգ մէ քեզ» գրած է բանաստեղծը՝ երբ իր կեանքը
եղաւ երգ, երգ սիրոյ, լոյսի՝ վասն կեանքի, վասն մեր ժողովուր-
դին, երբ ան կը տառապէր եաթաղանին տակ թիւրքին:

Չայ գրողը միայն պիտի երգէր սէրը ու լա՞ր արտասուա-
հեղծ, պիտի չծառանա՞ր յելուզակներու դէմ որպէս նոր Խա-
չատուր Աբովեան, ու բալասան փնտռէր իր ժողովուրդի խո-
րախոր վէրքերուն համար:

Այո՛, այդպես ալ պիտի ըլլար, սակայն մինչ այդ սիրոյ ցե-
տի հարուածին տակ վիրաւոր՝ բանաստեղծը պիտի գրէր.

Բայց տարիներով քեզ համար վերքես
Հաներ եմ քանի՛ երգեր սիրակեզ...

Ու վերջապես.

Իմ կեանքս թող առուին երգին պէս ըլլայ,

Ու երգս թող մո՛լթ ջրուէժին պէս ըլլայ,

Ու դէպի քեզ անկուն մ'ըլլայ՝ գահապէ՛ժ,

Իմ կեանքս թող առուի երգին պէս լըլլայ...:

Ու երգս անուանդ կրկնումը ըլլայ թող յաւէ՛րժ:

Եւ ահա երգի պաղպաջուն աղբիւրէն սիրոյ զուլալութիւնը
երգող բանաստեղծութիւն մը Ռուբէն Սեւակէն.

Ինչո՞ւ, ինչու զիս սիրեցիր,

Փոքրիկ աղջիկ քեզի մեղք էր,

Փոքրիկ ծոցիդ թիթեռ պէտք էր,

Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր:

Կապոյտ աչուիդ երբոր բացիր,

Կապո՛յտ աղջիկ՝ պլպուլն երգէ՛ր,

Քե՛զ ալ սիրոյ մընունջ պէտք էր,

Դուն զուժկան մռունչս ընտրեցիր...

Ես կ'երթամ միշտ անծայրածիր,

Դամբաններն են ոտքիս հետքեր,

Քեզ սիրոյ սի՛ւք մը պէտք էր,

Դուն փոթորկի՛ն կուրծքդ բացիր...

Կ'այրի՛ն աչքերդ սեւածիր,

Պիտի մեռնիս՝ այդպէս մ'երգեր,

Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,

Դուն Սէր Աստուածը սիրեցիր...:

Գոհար բանաստեղծութիւն մը ահա, որ մեզի յիշել կուտայ
Մաթեոս Ջարիֆեանի նոյնահունչ բանաստեղծութիւնը, որով
ան աւելի ուշ արծագանգեց իր «Պզտիկ աղջիկ» քերթուածով.

Պզտիկ աղջիկ մ'իմծի կ'ըստ,
Թէ զիս խենթի պէս կը սիրէ,
Պզտիկ աղջիկ մը զիս սիրէ"...

Ռուբէն Սեւակը կ'ուզէ, որ իր սիրածը գայ իրեն՝
Երգի մը պէս, քրոջ մը պէս՝ մօր մը պէս:

Ահա այսպիսի՛ն է բանաստեղծին սերը, որ անհիմանալի,
գերագոյն ապրում է, որ մարդուն մարդկայնացումը կը հեղի-
նակէ, հեռո՛ւ անասնային ցոփասիրութենէ: Ռուբէն Սեւակին
համար սերը տաճար մըն է՝ ուր ենթակային ոգեղինացում կը
տրուի երկիւղածութեան մը մէջ, երբ երկու սիրող էակներ մէ-
կի՛ կը վերածուին՝ անբարբառ բայց մշտնջենի պահի մը:

Ու ահա բանաստեղծին թելադրանքը.
Տապանիդ վրայ ծըլող բոյսին
Մի՛ պատմեր սերըդ անյոյսի,
Կը կոխտտեն զայն, ունայն է՝
Պահէ քու մէջ... ճիշդ սերն այն է:

Շքեղ բանաստեղծութիւն մը արդարեւ, որ մեզի յիշել կու-
տայ Աւետիք Իսահակեանի նոյնիմաստ այն քերթուածը, ուր
ըսուած է.

Լսի՛ր տղաս, ինձ կը թաղես անյայտ մի տեղ, աննշան,
Որ չիմանան, մարդիկ չզան՝ շիրիմիս քարը գողանան:

Ինչերո՛ւ ատակ է սերը: Ահա բանաստեղծին զգացողու-
թեան վաւերագիրը սիրոյ մասին.

Սէրն հեթանոս երջանկութիւնն է խաչուած,

Սէրն այն կուռքն է, որուն առջեւ ծնրադրած՝
Որքի մը պէս պիտի ողբար ինքն Աստուած...:

Ի՞նչ զուգադիպութիւն Ռուբէն Սեւակի այս բանաստեղծութեան, երբ օր մը Փարիզի Լիքսէնպուրկի պարտէզին աջակողմեան ժայռափոր պատին բարձունքէն՝ կոփածոյ սիրոյ մը համբոյրներուն Աստուած նախանձոտ աչքերով վայրայակ կը նայէր...

Չէ՞ որ Դուրեանը զԱյն այդպէս ալ կոչած էր:

Իսկ ի՞նչ կ'երգէին Ռուբէն Սեւակի ժամանակակիցները, ու եթէ կ'երգէին սէրը՝ ինչպէ՞ս կ'երգէին: Թէեւ հանճարեղ Դուրեանը կանխելով բոլոր սիրերգակները՝ գրած էր մեծատառով գրուելիք «Սիրել» քերթուածը.

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

Սինչ Մեծարենց ամբողջական քնարերգուն գրած էր «Սիրերգ» բանաստեղծութեան մէջ.

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով,
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին...

Մաթեոս Չարիֆեանը (1894-1924) կը մահանայ 30 տարեկան հասակին: Նոյն տարիքին բազմաչարչար կը նահատակուի Ռուբէն Սեւակ՝ Վարուժանի կողքին:

Չարիֆեանի «Երգեր» ժողովածուն լոյս կը տեսնէ Երեւանի մէջ բանաստեղծի ծննդեան 70-ամեակին եւ մահուան 40-ամեակին առիթով: Գիրքը կազմած ու խմբագած է բանաստեղծ Վաղարշակ Նորենցն ու յառաջաբանը գրած մեր մայ-

րենի լեզուի դասատուներէն Սարգիս Եափուճեանը, որ մանկավաժ ու գրող ըլլալուն արծանագրած է.

-«Ստեղծագործել Դուրեանի, Մեծարենցի, Տէրեանի, Թէքեանի նման այնքան ժողովրդականացած ինքնատիպ մեծութիւններից յետոյ, եւ գտնել այնքան ջերմ ու սրտամօտ ընդունելութիւն, երբեք եւ ոչ մի դէպքում չկրկնելով նրանց՝ ինքնին փաստն է Ջարիֆեանի ինքնատիպ բանաստեղծական խառնուածքին»:

Մեծնալու կոչուածները դարերու ընթացքին կը հանդիպին իրարու՝ առանց կրկնելու գիրար:

Եւ ի՞նչ գրած է Մաթոս Ջարիգեանն իր «Ինչ շուտ» քերթուածին մէջ.

Վիշտի մը լուռ համբոյրէն
Երազներս դեղնեցան,
Ի՞նչ շուտ, ի՞նչ շուտ դեղնեցան՝
Սէրերս մահ կը բուրեն...:

Եւ «Յովոտ գիշեր» քերթուածին մէջ.

Մոմս տակաւ կը մարի,
-Յոգիս դատարկ է նորէն -
Գիշերուան հովն ուժգնօտն՝
Յին ցաւերուս կը փարի...

Սիկառս յուշիկ կը սպառի,
- Յոգիս դատարկ է նորէն -
Կերազկոտի, կը ցնդի...

Ինչ պիտի գրէր երիտասարդ բանաստեղծ մը՝ որուն թոքերը կը բզկտուէին այդ օրերուն տակաւին անբուժելի հիւանդութեան մը սուրսայր ճիրաններովը: Նոյն այդ օրերուն անբուժելի հիւանդութեամբ այս աշխարհէն մեկնած էին Մկրտիչ

Պէշիկթաշլեանը, Պետրոս Դուրեանը, Միսաք Մեծարենքը, Վահան Տէրեանը, Սկտիչ Պէշկէօթիւրեանը եւ այնքան ուրիշներ... Եւ ահա Անդրանիկ Ծառուկեան՝ տակաւին նախակրթարանի աշակերտ, առանց իմանալու հիւանդութեան մահաբեր ըլլալը, կ'ըսէ իր տարեկիցներուն.

«Երանի թոքախտ ըլլայինք, որ բանաստեղծ դառնայինք»:

Ա. Ծառուկեանը բանաստեղծ դարձաւ առանց թոքախտ ըլլալու:

Նոյն Անդրանիկ Թորոսի Ծառուկեանը հաստատած էր սրտազեղ շունչով մը, թէ «Հայ բանաստեղծութիւնը ունի երկու թշնամի, թիրքը եւ թոքախտը»:

Արդարեւ եթէ Ռուբէն Սեւակը տանջամահ եղաւ ձեռքովը թիրքին՝ ապա Զարիֆեանը հնծուեցաւ մանգաղովը թոքախտին:

Եթէ Զարիֆեանը մեծերու հոյլի մը երեւնալէն ետք գրիչ վերցուց՝ ապա Ռուբէն Սեւակ գրիչ առաւ մեծերու շարքին: Երկու պարագային ալ բարձրութիւն պահելը դիւրին չէր: Ու երկուքին պարագային ալ պահուեցաւ այդ բարձրութիւնը:

Ռուբէն Սեւակէն առաջ եւ յետոյ Թէքէեանը եւս երգած է սէրը՝ ապրելով ցաւը, ողբերգութիւնը 1894/96-ի ջարդերուն, 1909-ի Ատանայի ու 1915/1923 երկարող բռնեքտող վիշտը մեծ եղեռնի՝ ու իր գրիչը վար չէ դրած:

Մինչ Ռուբէն Սեւակ՝ իր գրիչին ու մարմինին հետ բռնեքտուած է ձեռքովը Իթթիհատի ոճրային գործակալներուն:

Թէքէեանը համբերատար, հաւատալով իր երկրի եւ ժողովուրդի տեսելու կամքին՝ բիր ոճիրներու ականատես ըլլալէ ետք անգամ, անդու կորովի տէր Թէքէեանը սէրը երգած է այսպէս՝ իր «Ես սիրեցի» քերթուածին մէջ.

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցաւ թէ՛
Զինքը որքա՛ն սիրեցի...
Ո՛վ կարդալ սիրտը գիտէ:

.....
Սէրս կարծես այն գետն էր՝
Որ իր հրաշքը անբաւ
Առաւ լերան ծիւներէն
Ու լեռը զայն չտեսաւ:

Սէրս այն դուռն էր կարծես,
Ուրկէ ոչ ոք մտաւ ներս
Ծաղիկներով ծածկուած
Գաղտնի պարտէզ մըն էր սէրս:

Ու եթէ սէրս ոմանք
Երկինքին վրայ անսահման
Տեսան ծուխի մը նման,
Կրակն անոր չտեսան...

Կա՞յ բանաստեղծ մը, որ շոշափած չըլլայ, ապրած չըլլայ
նիւթը սիրոյ, տիեզերական սիրոյ՝ որ կը բնաւորուի անհատի
մը սիրտին խորը: Վարուժանն անգամ երգած է սէրը այլաբա-
նական վարակածում ու խորախորհուրդ.

Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեն,
Իրենց կաւատն է ոսիկին,
Ձիրենք սիրողը կը սպառեն՝ եւ իրենք
Տան շնիկէն կը սպառին:

Հիմա դառնանք Ռուբէն Սեւակին, որուն սիրոյ երգերը ա-
ռաւելաբար որպէս նիւթ ունին մարդն ու կեղեքուած բզկտո-
ւած մեր հայրենիքը, ինչպէս եւ Վարուժանին սէրը, որ պարու-
րուած է ժողովուրդին ու հայրենիքին սիրովը: Չայդ չե՞ն հաս-
տատեր իր «Կարմիր հողը», եւ տառապանքէ կեղեքուած
ապրող «Բանուորուհին»:

Նոյն օրերու մէջ ապրած՝ տարիքային փոքր տարբերութիւններով, եղեռնի զոհ երրորդութիւնը մեր բանաստեղծութեան՝ Ռուբէն Սեւակ, Սիամանթօ ու Վարուժան, դաշներգեցին սուրսայր բառերով մեծ եղեռնին նախորդող ջարդերը: Ահա թէ ինչո՞ւ Սիամանթօն կոյսի մը սէրը երգելու փոխարէն «Կոյսին ճամբան» քերթուածին մէջ դառնաշունչ երգեց.

Ու դեռ արիւնին նուիրական պղծումէն չկարմրած՝
Սա՛ փայլակէ սուրը կտրիճօրէն ձեռքդ առ,
Ու անով մեր ամէնուն սուրերը ա՛յս աստղերուն մաքրութեան տակ,
Երդումներուն երդումը ընելէն խաչածել՝...

Ու զէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս գահավիժելէն՝
Եթէ կրնաս, մեզի հետ քալէ՛: Ահաւասիկ ճամբան:

Ապառաժներու վրայ սուրսայր կայծակներով վիպագրուած բառեր՝ յաւետ երկիւղածութիւն յառաջացնող:

Ի գուր չէ, որ հայրենի գրականագէտ Զեկտոր Ռշտունին հեղինակելով մեծ բանաստեղծին մասին ստուար հատոր մը՝ ըսած է.

«Սիամանթոյի բանաստեղծութիւնները Նարեկեան շնչառութիւն եւ Շէքսպիրեան թափ ունեն»:

Ահարոն Տատուրեանը եւս եղած է ժամանակակիցը Ռուբէն Սեւակի: Ան եւս երգած է սէրը: Բայց աւելի կարեւոր՝ իր գիւղին եւ օտարութիւնը անբաղձալի կեանքէն իր բաժինը եղաւ: Ահարոնը իր «Մշուշային գիւղակ» քերթուածին մէջ գրեց.

Յոգնած քայլերս ինչո՞ւ, նորէն գիւղ եկան,
Ո՞վ կանչեց զիս մրրիկէն վերջ ահեղ:
Դէպի աղբիւրն արտասուքին մայրական
Խմել սիրտէն եւ համբոյրէն լուսագեղ՝

Օտարութիւն, ինչ վեհ ես դուն հաւտայի,
Բանաստեղծին որ կը տենչայ անհետիլ,
Առհաւկան գիւղակ, ժպտէ դուն ինծի,
Ճամբուդ վրայ թող նորէն գայ սիրտս ի գիլ:

1939-ին Փարիզի մէջ տպուած Ահարոնի «Պոռեմականք» գիրքէն տանք երկու նմուշ եւս: «Կակաչներ» քերթուածին մէջ ան կը գրէ.

Ես անծանօթ ճամբորդ օտար աշխարհին
Դէպի անհուն փախուստիս չեմ ուզեր կայք:

Այս բոլորէն ետք մոռնա՞լ Ինտրան՝ Տիրան Չրաքեանը, երբ յիշուող ու տակաւին այստեղ չյիշուած բանաստեղծներու գործերուն մէջ շնչող հանգիտութիւններ կան սիրոյ թէ այլ նիւթերու ընկալումին ու մշակումին մէջ:

Այդ իսկ պատճառաւ այս բանաստեղծները մեր գրական երկինքի նշուլագեղ աստղերն են՝ եւ ուղեկիցները սերունդներու քայլարշաւին:

Ու այդ բոլորին մէջ առաջին շարքերուն վրայ երեւցողներն՝ մուսաներուն կախարդական սրինգը ուսած Ռուբէն Սեւակը:

Ծնունդով տասը տարիով մը Ռուբէն Սեւակը կանխած Ինտրան իր «Նոճեստան»-ով ու «Ներաշխարհ»-ով՝ բանաստեղծութիւն ու արծակ, խորունկէն հերկեց հայ բանաստեղծութեան արգասաբեր հողը, եւ ատոք հասկեր հասցուց որպէս հունձք:

Բնութեան սիրահար այս իմաստասէրը զարտուղիին երկրպագու՝ ծուռ տեսնուած քանակով ուղի՞ղ ակօսեց մեր գրականութիւնը:

Չրաքեան իր «Գութ եւ սէր» քերթուածին մէջ կը գրէ.

Ձի քերթողին կիրքը ոչ այլ ինչ է երբեք,
Քան որք մը գութի վաղանցութեանց համար հէք,
Եւ անմահ իրաց համար ալ՝ երգ մը սիրոյ:

Երբ Ռուբէն Սեւակ Լոզանի մէջ իր սիրոյն կայծերովը կը
ծգտէր լուսաւորել իր շուրջ բոլորը՝ ասդին, Պոլսոյ մէջ նոյն օ-
րերուն Ինտրան կը նկարագրէր «Երեկոյ մը», այսպէս.

Արեւն իջեր է արդէն նոճիներու ետին,
Կը ծաւալի վերն անբիծ իրիկունն աղուոր,
Եւ հիր ու հուպ իր փաղփուլմն այնքան սուրբ է որ
Լոյսին թախիծն է կարծես ու ժպիտը մութին:

Մըթընշաղը կը տիրէ նոճեաց սաղարթին,
Եւ ոպսիտէ կոներուն ծալքերն հեշտօրօր
Կը հեռու նսեն զմրուխտով մը խորհրդաւոր
Մինչ աւելի կը սեւնան վիհերը չորս դին:

Հրաժեշտ այլեւս տըվընջեան ու ցայգին ողջոյն
Ան է, որ դաշն ի խաւարն ահա կը հեղու՝
Միաւորելու ամէն յոյզ անդորրին մէջ նոյն:
Ո՛հ, դա՛ր այսպէս մեծ գիշերն ալ երանաւետ,
Գաղափարց անթարշամ կեանքն ինձ է շնորհելու
Նոյնացնելով զիս ընդմիշտ խղճմտանքին հետ:

Թիւրքը Ինտրային եւս չներեց: Հայ բանաստեղծին մարդ-
կային զգացումները խտտորնակ էին անոր բնազդին:
Ինտրայէն տարիով մը մեծ Մալաթիա ծնած Ռուբէն Որբերեա-
նը գիտէ՛ր, որ իր կեանքին բազում տարիները պիտի անց-
նէին Ափրիկէի մէջ... ճիպութի:

Որբերեանին վիճակուեցաւ ողբալ մեր բանաստեղծներուն
ահալի կորուստը, որոնց աւագ եղբայրն էր ինք. - Վարուժան,
Ռուբէն Սեւակ, Սիամանթօ -:

Որբերեանի «Գիւղիս ճամբան» բանաստեղծութիւնը՝ մենք
ու մեր սերունդը մեր մանուկ հասակէն կ'արտասանէինք.

Կեանքի նաւակն հետք չթողուց իր ետին,
Սոռացունը ինձմէ առաւ ամէն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:

Դանիէլ Վարուժանը սիրած է Որբերեանի «Գընա» բանաս-
տեղծութիւնը, որմէ կուտանք քառատողն այս.

...Ես կը մխամ մինչ կարօտով,
Հոգիիս բոցը չի մարած,
Որ կ'որոնեմ սրտախռով
Ձիւնն ու մշուշն իմ հայրենեաց:

Ռուբէն Որբերեան 14 Ապրիլ 1919-ին դէպի անդենական
նամակ մը կը գրէ՝ ուղղուած Ռուբէն Ջարդարեանին: Ահա այդ
նամակը.

...Սիելի Ջարդարեան,
.....երկինք,

Սեւ ծովէն Միջերկրական, Մասիսէն Տորոս, պիտի ազա-
տագրուի Հայաստան: Վերէն կը տեսնես հիմակ, եւ ազատու-
թեան դրօշը ծաւալուն՝ այնչափ սիրած հայրենեացդ վերեւ:
Հայ բանթնին մէջ պիտի կանգնուի արծանդ, որուն վրայ ա-
նապատներու բանաստեղծը պիտի գայ դրոշմել երկու տող.

Ինկալ՝ շիրիմին վայրը մնաց անծանօթ,
Հայրենիքս եղաւ իրեն գերեզման...:

Արեւելահայ բանաստեղծներէն շատերը եղած են Ռուբէն Սեւակի ժամանակակիցը՝ Թումանեան, Իսահակեան, Տէրեան, Չարենց եւ այնքան ուրիշներ:

Տակաւին 1892-ին՝ Իսահակեանը կը գրէր իր սիրոյ բանաստեղծութիւններէն մէկը, որ հեղինակուած է Իգդիրի մէջ, 14 Յունուարին.

Հոգի կուտամ, հոգի տուր ինձ,
Իմ նազելի աչագեղ:
Սիրտըս սեւ արտ, սերդ՝ ալ վարդ,
Թո՛ղ բողբոջի նա այնտեղ,

Սիրտըս գիշեր, սերդ՝ վառ աստղ,
Թո՛ղ շողշողայ նա այնտեղ...

Իսահակեանը ի վերջոյ կրցաւ վերջակիտել իր թափառ կեանքը, վերադառնալ հայրենիք (Չարենցը ըրած էր այդ առաջարկը Վարպետին՝ Ռավէննայի կամուրջին վրայ), նուիրուիլ մեր ժողովուրդին՝ դառնալով խորհրդատու նահապետը հայ քերթողներու:

Տէրեանը Ռուբէն Սեւակի ժամանակակիցը չէ՞ր: Տէրեանը եւս ինկաւ թոքախտի տապարէն: Ան՝ որ մահուամբ զմահ կոխեաց, եւ իր քնարական քերթողութեամբը մեզ զկեանս պարգեւեց...

Տէրեան՝ հասակակիցը Ռուբէն Սեւակի (ծնեալ 1885 թ.-ին), գրեց.

Ես սիրում եմ քո մեղաւոր աչքերը խոր,
Գիշերի պէս խորհրդաւոր,
Քո մեղաւոր, խորհրդաւոր աչքերը մութ,
Որպէս թովիչ իրիկնամուտ:
Քո աչքերի ծովում մեղքն է դողում,
Որպէս գարնան մթնշաղում:

Քո աչքերում կայ մի քնքուշ բախտի վերյուշ,
Արբեցումի ոսկե մշուշ:
Մոլորուածին անխօս կանչող փարոսի շող,
Քո աչքերը հոգի տանջող:
Ես սիրում եմ գգուող անգութ աչքերըդ մութ,
Որպէս գարնան իրիկնամուտ:

Որքան հոգեհարզատ եմ ու գարնանաբոյր Տէրեանի երգե-
րը՝ հոգի տանջող բայց փրկող:

Իսկ Թումանեանը՝ Չարենցի ասոյթով «Անհաս կատարը
մեր քերթութեան», գրեց հոգեհմայ երգեր, քաղելով մեր ժո-
ղովուրդին անվերջանալի ու հոգեշէն ծաղկաստաններէն,
այնքան պարզ, իմաստալի, հոգեհմայ... Հոն եմ մեր հեքիաթ-
ները՝ պաշտպանուած մեր դիւցազներգութիւններով:

Աղբիւրները հընչում եմ ու անց կենում,
Ծարաւները տենչում եմ ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներուն երազուն՝
Պոռտները կանչում եմ ու անց կենում:

Եւ.

Գործն է անմահ լա՛ւ իմացք,
Որ խօսում է դարձ դար,
Երնեկ նըրան, որ իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար:

Տակաւին.

Մեր ճամբէն խաւար, մեր ճամբէն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլոյս մըթնում
Երկար դարերով զընում եմք դէպ վեր
Հայոց լեռներում:

Տանում ենք հընոց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձր լեռներում:

Ահա այս դժուար կեանքին վերադարձաւ Ռուբէն Սեւակը՝ Եւրոպայի իր հանգիստ կեանքը թողլով, եկաւ իր ժողովուրդին՝ քաջ գիտնալով անոր դժոխսային պայմանները, օգնելու, զօրաւիք կանգնելու եւ բաժնելու իր ժողովուրդին անտանելի պայմանները, զորս ստեղծած, նիւթած էին օսմանցի բարբարոսները...: Որպէսզի ի՞նչ ըլլար ինք... որպէսզի ստանար նահատակի փշեպսակ՝ Վարուժանի ու մեր ամբողջ նահատակ մտաւորականութեան կողքին:

Ռուբէն Սեւակ իր գործերով ու մահով հարթեց շարունակելի ըլլալու հանգամանք մը, որ ընտրեալներու տրուած է: Անոր շարունակելիութիւնը մե՛ր շարունակելիութիւնն է՝ պահելով մեր դարաւոր, հոգեղէն մշակոյթը, մեր զէնքին փարիլը յանուն քաղաքակրթութեան պահպանումին, յանուն բարբարոսութեան դէմ ժայռաբերդեր կառուցելու անկոտրում կամքին:

Հոգիի եւ երկաթի կռիւին մէջ՝ հոգին կրանիթ որպէս պահելու կամքը, ազատութեան հասնելու ուղին:

Հապա մրրկաւոր Չարե՞նցը՝ քնարական ընմիշտ.

Ամէն պոէտ գալիս՝ իր հետ մի անտես նետ է բերում,
Եւ նետն առած, խոհակալած՝ որս է անում երգերում,
Բայց դառնում է պոէտ նա մեծ, ոչ թէ նետի մեծութեամբ՝

Այլ նշանի ահագնութեամբ, որ հանճարներ է սերում:

Չարենցը աշխարհ եկաւ Ռուբէն Սեւակէն 12 տարի յետոյ: Երկու բանաստեղծներ այսպէսով ժամանակակից դարձան: Ու եթէ Չարենց յեղափոխութեան մը թելերը զգեցաւ, ու հզօր թափով երգեց մարդն ու եղբայրութիւնը՝ առանց կտրուելու իր բնաշխարհէն ու ժողովուրդէն, առանց մոռնալու «Լուսամփոփի պէս աղջիկ, Աստուածամօր աչքերով»-ը, ապա Ռուբէն Սեւակ ըլլալով նոյն խմորէն՝ Չարենցի նման հոգեհացով հարստացուց մեր ժողովուրդը իր «Կարմիր Գիրքը»-ով, մեհենագրելով ազատութեան գաղափարը հայոց դժուար լեռներու ապառաժներուն վրայ:

Մաս Բ. - «Վերջին Յայերը - Կարմիր Գիրքը»

Ռուբէն Սեւակ իր հեղինակած «Ջարդի խենթը» երկը նկատի ունեցած է որպէս բեմական մենախօսութեան յատուկ գործ:

Խիզախ քայլ մը մեր բանաստեղծութեան մէջ, ո՛չ միայն զգօն պահելու համար մեր ժողովուրդը՝ այլեւ զինավառելու մեր հոգիները:

Հրաբխային ժայթքում մըն է բանաստեղծին այս գործը, ուր նուրբ արուեստագէտը նշտրակը կը հասցնէ հոն՝ ուր ուրիշներ կը լռեն, օգտագործելով շամփրող լեզու: Նիւթը՝ կոտորածն է եւ հայ ու օտար որոշ ու անորոշ տարրերու իբր թէ չէզոք կեցուածքը աղաղակող իրականութեան մը դէմ, իրականութիւն՝ ուր մարդկային հրկիզուած մարմինները երկինքներու կողերուն կը հասնին, աստղերը երկիր իջեցնելու համար, որ մութը փարատի, լոյս ըլլայ.

Կիրակին անգամ բերանով ծոմ
Տիրամօր առջեւ կը սպառէին մոմ,
Շաբաթ մը ամբողջ, անվախ, անհամար
Շնալու, սրելու, գողնալու համար:

Ռուբեն Սեւակ սուր իր խօսքը որպէս հաստաբազուկ Յայկի աղեղէն արծակուած նետ՝ արդարօրէն կը մխրճէ բոլոր դարերու ոճրագործներու սիրտին, նախ ըսելու համար թէ մեռածները ինչո՞ւ դարձեալ կը մեռցնեն, ապա՝ յայտարարելու համար, որ երէկի որբերը որպէս ոճիրներու ոճիրին հետեւանք, այսօր ու վաղը պիտի գան ո՛չ թէ աղօթելու իրենց «տէր»-երուն համար՝ այլ.

Ահա մենք կուգանք ու մենք՝ նզովք ենք,
Վրէժներու Յիդրան ենք փայփայելի,
Մե՛նք՝ սարսափահար ու սարսափելի...
Մենք՝ հին ուխտերու նոր ուխտագնաց,
Մենք՝ սուսերը բիրտ ու գիրքն օրինաց,
Մենք՝ ցասման ջրվէժը սարի կողէն,
Մենք՝ աղջամուղջի ժնունդ լուսեղէն...»:

Յայրը ըսած էր իր որդւոյն՝ թէ դրախտին հասնելու կարճ ճամբան հլու հետեւելին է խաչի արահետին: Բայց ահա խօսքը բանաստեղծին.

Յայր, է՛ն կարճ ճամբան՝ խանջերն է քուրդին:

Կիլիկիոյ կոտորածն է: Բանաստեղծը կը խօսի Սիհուն գետի մասին, որ եթէ ջարդի օրերուն դիակներ տարաւ՝ ոայու դիակներ, վաղը նոյն գետի վրայ.

Դարաւոր ալեացող վրայ սիրուն
Ճերմակ կարապներ կը թելեն սահուն:

Ու տակաւին Դուրեանական համարձակութեամբ մը՝ եւ սակայն առանց զիջջի առ Բարձրեալն ուղղեալ.

Ու չես հաճիր ա՛չքըդ անկարեկիր
Ուղղել մարդկութեան զոր յերկիր թուքիր...:

Ու քիչ յետոյ առանց ապաշաւի աւելի սուր արտայայտութեամբ.

...Խեղճ յիմար: Որքա՞ն կը խօսիմ փրփրա՛ծ:
Չե՞ որ դուն վաղո՛ւց մեռեր ես Աստուած,
Ու քու հսկայի դիակըդ անբա՛ւ,
Գարշանքի ժահրո՛վն արիւնաթաթաւ,
Ապականե՛ր է երկնից անապակ
Ծիր կաթիններուն երազն անյատակ...:

Այս բոլորով հանդերձ սակայն՝ Ռուբէն Սեւակը յուսահատ յռռտես մը չէ, այլ Վարուժանին նման գալիք կարմիր գարուններու բուրմունքը կ'առնէ:

Յաջորդը՝ «Թրքուհին», զոր գեղջուկ եղերերգ կոչած է հեղինակը, եւ որ կը բովանդակէ.-

«Ասեղի Հիւսկը», «Ա՛յ աղջիկ», «Հայդուկը», «Հայուհին», «Առեւանգունը», «Կարմիր Սկրտութիւնը», «Պուտ Սը Արիւնը», «Կուսերգութիւն», «Ա՛յ Զի ժպտեց», եւ «Վրէժը»:

Խաչատուր Աբովեանի «Վերքը» յիշեցնող պատում մը, ուր բռնի թիրքացած հայուհին եղբօրը գանգը տեսնելով՝ մոլեգնօրէն կը յարծակի բէկին վրայ, ու անոր ձեռքէն խլելով արիւնոտ խանջէրը՝ կը մխտ բէկի կուրծքին:

Եւ ահա «Մարդերգութիւն»-ը բանաստեղծին, եւ անոր ենթաբաժինները՝ «Գիւղական եկեղեցիին մէջ», «Ծնունդը», «Գիւղական ճամբուն Վրայ... Կեանքը», «Գիւղական Գերեզմանատան Մէջ», «Մահը»:

Ահա առաջին բաժինը.

Անցեալ տարի էր: Յոգնած ապաքէն,
Շատ քաղաքակիրթ այս Արեւմուտքէն՝
Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքենայ,
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխնայ,
Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ.

.....
Կարօտն ունեցայ հին-հին դարերու,
Եւ հիւանդ հոգիս տարի ես հեռո՛ւ,
Յեռո՛ւ, խնկաւէ՛տ, լո՛ւռ, մշտնջենի,
Արեւելքի իմ գիւղըս հայրենի...

Յեղինակը, հոս կը նկարագրէ երկու կնունքի պարագայ ե-
կեղեցուոյ մէջ, մէկը ի ծնէ հարուստ՝ երկրորդը անտուն.

Ոչ: Երկու թափօր, երկուքն ալ ժպտուն,
Մէ՛կը նորածին որդին մեծատուն,
Միւսը աղքատի ծնունդը անտուն,
Մէկը բեհեզով քնած, միւսն արթուն,
Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,
Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն,
Մէկը տէ՛ր արդէն, միւսը գրա՛ստ:

Միջնադարեան մեր տաղերգու Ֆրիկը յիշեցնող՝ հաստա-
տուն, որ 21-րդ դարուն եւս կը շարունակէ մնալ աղաղակող
իրողութիւն, երբ մարդ արարածը ծրագրած է գրաւել Մարսը՝
միլիոններու մարսողութեան գործարանները անգործութեան
մատնելով:

Բանաստեղծի արդար ընդվզում ի տես այն պատկերին՝
երբ «Կենաքի իրաւունք» պոռագողներուն բաժինը բանտն է,
կառափնատը, կախաղանը:

Ի՞նչ ընէ ի լուր այդ բոլորին՝ մեր սիրած բանաստեղծը.

Ու ե՛ս ալ գացի իմ սուգիս դարման՝

Յաւասարութեան դաշտը - գերեզման...

Ուրբէն Սեւակը «Գիւղական ճամբուն Վրայ» երգ երգօցին
մէջ կուտայ արեւելքցիին ու արեւմուտքցիին բնութագրերը,

վերլուծելով կեանքի վախճանական ըլլալու կողքին՝ յատակոց վերածնունդի կարելիութիւնները:

Այստեղ բանաստեղծը օրէնքը կ'անուանէ հտախտ, քանի ով չի գիտեր թէ օրէնքը ուժեղի ձեռքին՝ անկարը ճգնելու համար է: Քեզ ճնշողին դէմ դատ բանաս պիտի՝ դատողը ո՞վ է, դատաւորը ճգնողին բաժնընկերն է: Գնա՛ բողոքէ՛ բայց... բողոքագիրդ բազուկիդ, ուղեղիդ յանձնէ: Այդ է ելքի ճամբադ:

«Գիւղական Գերեզմանատան Մէջ» բաժինը, ուր գործը երկնողին համար՝ մեծ վարպետը վիշտ կը կոչուի, ու սէրն ալ՝ դողողոջ դժխոյ, կը զարմանայ թէ ինչպէ՞ս, մարդը մահուան ծոցին մէջ՝ սակայն ուղեղին մէջ անմահութեան յոյս մըն է դիտցուցեր: Մարդը յուսակտուր եղողը չէ, կառչած կը մնայ հողին, հողի ազատագրումին՝ որքան ալ յելուզակները յամառին: Յամառին՝ «յամառ ու կէս» կ'ըսէր մեծ մայրիկս...

Յաւիտենական նիւթ՝ կեանքի ու մահուան հարցը, որ կը մնայ անլոյծ, քանզի մեր փնտռած Աստուածը՝ ինքը՝ մահն է:

«Կարմիր Կարօտը» բանաստեղծին հոգին ալեկոծող իր գիւղին պատկերն է, որուն կարօտն՝ հեռուներու մէջ կը մխայ:

«Ահազանգները» բանաստեղծութեամբ Ռուբէն Սեւակ կուտայ այն կոշմարային գիշերներու ապրումները, երբ իր ունկերուն կուզան նահատակներուն ցաւագին ճիչերուն կանչերը:

Ուրեմն, բանաստեղծը ի տուումընէն եւ ի գիշերի, անդադրում՝ իր ժողովուրդին ցաւերովը կը ճենճերի, ու մերթ «Ինչպէս Երբեմն» քերթուածով՝ երկրին հին փառքերը կ'երազէ:

«Կիլիկիոյ Արիւնին» նուիրած «Ո՛վ Իմ Հայրենիքս» բանաստեղծութեան մէջ հակառակ սպանդի բոցերու ճարճատումին՝ բանաստեղծը հայ հերոս մը կը փնտռէ եւ անոր մասին կը գրէ գոչելով.

Երնէ՛կ հայ այն արգանդին՝ որ քեզ ծնաւ...»:

«Ձանգակներ, Ձանգակներ...» բանաստեղծութիւնը, մեզ
զարթնելու կը հրաւիրէ՝ քանի դարերով.

Հոգիիս հազար խուլ զանգակներով,
Գոռացէք, զանգե՛ր, ու կատաղօրէն
Գահավիժեցէք ձեր երկաթ թառն,
Ուրկէ միայն լալ գիտցաք դարերով...
Օ՛, ղօղանջեցէ՛ք, Աստուածն է մեռեր...

Վարուժանը նոյն ջարդերուն ի լուր՝ պիտի գրեր.

Օն, լըսեցէ՛ք, լըսեցէ՛ք այս, ով մայրեր,
Վաղն երբ անոնք թամբեն իրենց նըժոյգներն
Ու անոնցմով, գերթ պողպատի ջըրդեղում,
Վրէժին մէջ մկըրտուին,
Երբ թուրք արեան բարկ ծարաւէն մոլեգնած

Լեռներուն վրայ մըռընչեն,
Ոհ, այն ատեն՝ այսօրուան
Մեր մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց,
Ու անհամբեր հեռո՛ւն հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալոյսի մ'Արշալոյսի մը՝ որուն
(հաւատացէք ինձ մայրեր,)
Ես ոտնաձայնը կ'առնեմ...

Այս երգերով պիտի վարդահեղեղ գարունը դիմաւորէին
մեր բանաստեղծները, երբ մօտէն հնչեց Սիամանթոյին ծայ-
նը՝ իր «Դարերու վրէժ» քերթուածէն.

Յոյսերու երկաթէ սանդուխին կատարներէն է որ աւետիս
կ'արձակեն,

Մոխիրներու, դիակներու եւ վիշտերու հովիտներէն է որ ա-
հաւասիկ դեռ կը թորայ,

Բայց քայլերս անխոնջ են եւ կամքս գերազօր
եւ ձայնս դաժանօրէն ամեհի...

Գլուխս սուգերէն եւ վրէժէն եւ ճակատագրէն թեւ ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դիւցազնի մը աչքերուն չափ կարկիր
եւ կերպարանքս է սոսկատեսիլ:

Եւ ի՞նչ պիտի գրէր Ռուբէն Սեւակը նոյն օրերուն, իր «Վրէ-
ժին Սերմնացանը» բանաստեղծութեան մէջ.

Քե՛զ, ցասունի վայրագ հեղեղ գահավէժ,
Արդարութեան փայփայելի մութ հըրէշ,
Խաւարներու ահեղ ծնունդդ վըրէժ,
Ողջո՞յն, տաղերըս քեզի...:

.....
Ու ես կուգա՛մ, -մութ շանթերու սերմնացան-
Այդ ակօսէն, ուր տարիներ լճացա՛ն,
Գիշերներով, չար հովերով ցիրուցան.

Ձօնել տաղերըս քեզի...

Բաբէ՛, եթէ այս իմ բազուկս կարեվէ՛ր,
Չը սորվեցաւ զարնել... Գոնէ անվեհե՛ր
Ցաւերէս, մահու առաքեալնե՛ր, հսկանե՛ր
Կը ծնին տաղերս քեզի...

«Կիլիկեան երգեր» շարքին մէջ նման այլ երգեր ալ կան,
ուրկէ կը բարձրանան վրէժին բոցերը:

Երեք բանաստեղծ, իւրաքանչիւրը իւրովի, սակայն ոգիի
նոյն տագնապներէն ելեքտրականացած՝ կ'երգեն ահաւոր ա-
ղէտը, արդէօք նախազգալո՞վ, որ իրենք երեքն ալ ամենա-
մեծ աղէտին զոհերը պիտի դառնային սոսկատանջ:

Ռուբեն Սեւակի «Վերջին Օրօր» եւ «Հայաստան» բանաստեղծութիւնները հոգեկան նոյն ժանգ երկաթ շղթային օղակներն են: «Օրօր»-ին մէջ.

Ահա կ'իյնամ...: Հայաստանը մայր քեզի:
Կտակ կուտամ այս կոտորած սուրն երկսայրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...:
Օրօ՞ր ըսեմ քնանաս:

Իսկ «Հայաստան» քերթուածին մէջ՝ խորապէս ապրուած գործ.

Ո՞վ կուլայ այսպէս խշտեակիս շէմքին,
-Քո՞յր, դարիպն է բաց:
Կմախք մը կ'անցնի դուրսէն լալագին
-Սովն է, դուռդ բաց:

Մեծարենցն անգամ, մեր քնքոյշ քնարերգուն չէ՞ գրած.
Քո՞յր, մօտեցո՛ւր իմ ձեռքին
Աստուածաբոցն հըրացան,
Ձի ամէն բան ինձ կրկին
Կը յիշեցնէ վրէժն արեան...:

Արիւնի ջարդ տեսած չեղողներն անգամ քնարակիր՝ վրէժ կ'երգեն:

Իսկ վերապրող Թէքեանը կրնա՞ր չգրել.
Կարենալու համար ապրիլ այսուհետեւ -
Օդի, ջուրի, հացի նման՝
Մենք պէտք ունինք հպարտութեան:

«Թուրքին» մասին չգրե՞ց բանաստեղծը, ըսելու համար.
Պիտի իյնաս, իյնաս դուն՝ եւ ալ ի սպառ, անյարիր...

Ու չգրե՞ց տակաւին.

Թօթուած ինչպէս ցուրտն ու ձմեռն այսօրուան,

Ես կը խորհիմ առաւօտին այն գարնան՝

Ուր հին կոճղէն նոր բողբոջներ պայթեցան:

Ջարդ ու լաւատեսութիւն, ճնշումի դէմ հակաճնշում՝ հա-
յուն անկոտորում զրահը, քանի երբ ճնշումը կը զօրանայ՝ հա-
յը յաղթանակի դռները լայն կը բանայ, ինչպէս Վարդանանքի,
Սարդարապատի եւ Արցախի օրերուն: Այո՛, մի՛շտ, Սունքայի-
թի դէմ՝ Արցախի յաղթանակ:

Այսպէս ապրեցան, այսպէս նահատակուեցան մեր քնարա-
կիրները՝ մահուան պահին անգամ լսելով՝ գալիք գարուննե-
րուն ոտնաձայնները...:

1910 թ.-ին, Ռուբէն Սեւակը գրեց իր 16 տուննո՞ւ «Վերջին
Հայերը» բանաստեղծութիւնը՝ որուն եզրափակիչ տունին մէջ
գրչեց.

Ո՛չ, ո՛չ: Արշալոյսն իրենց պիտի գայ...

Ու եթէ չի գայ աւօտն ապագայ՝

Պիտ կռուին: Մինչ ե՞րբ...: Մինչ յաւիտեա՛ն:

Ու երբ դեռ երկրի վրայ Ազատութեան

Համար մեռնին ա՛փ մը մարդեր չնչի՛ն,

Անոնք պիտ՛ ըլլան մարդկութեան վերջի՛ն,

Վերջի՛ն հայերը...:

Անդրադառնա՞նք կամքի ուժին:

Հակառակ դաժան պայմաններուն, եւ մեր ազգին բնաջնջու-
մը նիւթող թիրքին որոշումին՝ մեր բանաստեղծները մարգա-
րեաբար Ազգին գոյատեւումն ու զարթօնքը կը հաստատեն:

Ներկայացնենք նաեւ «ՔԱՈՍԸ» գիրքը

«Դրամին Աղօթքը» այն բաց լուսատու դուռն է՝ ուրկէ
մուտք կը գործենք Ռուբէն Սեւակի այս այգին:

Բանաստեղծը խորաչափելով աշխարհի ուղիները՝ «եղբարութեան տաքուկ շունչը կը փնտռէ», բայց ամեն քայլափոխի կը հանդիպի փարթամ մեծատունին դրան քով աղքատ մօր մը: Ու հարց կուտայ դրամին.

«Ըսէ՛, քու կամքդ պիտի իշխէ՞ յաւիտեան»:

Տնանկին բարեկամը ազատութեան երգիչն է: Ռուբէն Սեւակ իր այս գործին իւրաքանչիւր բանաստեղծութեան մէջ ապտակ մը շառաչեցնողն է «Բող Արեւմուտքին», երգելով նաեւ «Պոռնիկը»՝ որուն հանդէպ.

Գութի, կիրքի պէս տարտամ բոց մ'զգացի սրտես ներս՝
Ու թերեւս այդ գիշեր նուիրուէի քեզի քո՛յր,
Եթէ կաթիլ մը արցունք չը սառեցնէր իմ այտերս...
Կէս գիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անծրելի...:

Իսկ «Կարմիր Տօնը» քերթուածին մէջ բանաստեղծը ընդվզումի կոչ կ'ուղղէ բանուորին.

Բանուոր, անբա՛ն, ծե՛ր, ո՛րբ, անտո՛ւն,
Ընդվզումի մը մէջ հըզօր
Քանդեցէ՛ք կուռքը մեծերուն,
Ձերին կարմիր տօնն է այսօր...

Իր հերթին Վարուժանը պիտի երգէր «Բանուորուհին»՝ այսպէս.

Պատուհանիս տակէն, ամեն առաւօտ,
Ուրուականի պէս կ'անցնիս,
Եւ կուսագեղ գլուխիդ վրայ կ'արտասուէ
Տերեւաթափ վարդենիս:

Բանաստեղծի արցունք՝ վարդի ինկող թերթերու ձեւ առած: Փրքնիկ գիւղի հողաշերտը եւս արցունքով ցօղուէ բանուորուհի, քանի եթէ հայ գիւղացին թիւրքի ճնշումին տակ

կճուող հայն էր՝ Եւրոպական երկիրներուն մէջ կորաքամակ դարձողները քաղաքկրթութեան անունով բարբառող սինքլորներ են իրենց շուայտ կեանքին գերի:

«Կարմիր Դոշակը» քերթուածով Ռուբէն Սեւակ «Ի զէ՛ն, ի կռի՛ւ կը հրաւիրէ» «անգործներու կուռ բանակը», մինչ «Այս Դանակը» քերթուածով կ'աւաղէ վիճակը մարդոց, որոնք երջանկութեան յո՛րդ քրտինքով՝ հլո՛ւ, կը մեռնին առանց ունայ մը ջուր ըմպելու:

Բանաստեղծին թելադրանքով հացի դանակը պէտք է դառնայ օրէնքի դանակ, իսկ օրէնքը ծառայէ ո՛չ թէ տէրերու՝ այլ մարդկութեան:

Ներկայացէ՛ք թրուպատուրներ, դուք Ռուբէն Սեւակի բանակի վաշտերուն անդամներն էք:

«Թրուպատուրները» բանաստեղծին 17 տուներու վրայ բարձրացող երգիչ-գեղօրներ են, բանաստեղծութիւններ՝ ծնած կարծէք Գողթան գաւառին մէջ: Ահա՛ անոնք.

Եռանդուն, անվո՛յթ, գո՛հ կը նուագեն

Հրակէզ արեւուն տակ հրապարակին:

.....

Փողոցի ստոյգ հանճարներ բոլոր,

Նուագելու համար պէտք չունին նոթի,

Կ'ապրին երգելով, կը մեռնին նօթի՝

Թրուպատուրները:

Աշխարհն հեգնելու հով մ'ունին աղուոր,

Թրուպատուրները:

Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,

Ազատ բնութեան որբե՛րն հարազատ՝

Թրուպատուրները:

Ազատ բարբառի ասպետներ անա՛հ՝

Թրուպատուրները:

Վա՛խ, արծաթն արուեստն հանեց կախադան,
Հի՛ն, աստուածբընակ դարերը մեռան,
Ու հիմա պետք է խնդացնե՛ն, մուրա՛ն

Թրուպատուրները:

Թրուպատուր մըն ալ Ռուբէն Սեւակը չէ՞, որ ոչ միայն արծաթով չփոխանակեց իր երգերը՝ այլ անգոսնեց կեանքն անգամ, իրեն ընծայուելիք կեանքը՝ ու գերադասեց նահատակուիլ ու իր երգերովը ապրիլ, մեր ժողովուրդի յաւերժագնայ կեանքին մէջ:

Բանաստեղծը գրած է «Փողոցը Ալլոդի» մասին, «Պատերազմ»-ի մասին, «Մեծն Աստուած»-ի մասին, նկարագրած է «Մինակ Մարդը», գրած է «Բասթել»-ը, եւ ինչ ալ գրած է՝ հո՛ն, իր մարդկայնական հոգին է, որ խորաչափած է մարդու հոգին ու անոր մաղթած երջանկութիւն:

Իսկ խօսքն ուղղելով Աստուծոյ՝ յայտարարած է.

Ահա՛ մարդերդ: Ահա՛ մարդերդ ալ, Աստուած,
Տխուր հիւրերն այս հրաշագեղ աշխարհին,
Թափառական, վաղորդայնե՛ն ընկճուած,
ճղճի՛մ, թշուա՛ր, հողի՛ն կառչած, ախտագի՛ն,

Ճակատագրին մտրակին տակ խելայե՛ղ,
Անոնք կուլան ու կը վազեն մտացի՛ր,
Իրենց ճակտին վրայ մահուան գիրն ահեղ՝
Անոնք զոր դո՛ւն պատկերիդ վրայ ձեւեցիր...:

Եւ «Անտիպներ» շարքը գիրքին, ներառեալ թարգմանութիւնները

Առաջինը կը բովանդակէ 18 բանաստեղծութիւն, իսկ երկրորդը՝ 15: Ռուբէն Սեւակ թարգմանութիւններ կատարած է Լը-

գոնդ Տը Լիլեն, Ալպեռ Սամեն, Յենրիխ Յայնե, Անտոնեն Բրիւն, Փօլ Վերլեն, Յանրի Պերկսոն եւ Մ. Տրիւրեր բանաստեղծներէն, որոնց գործերը համահունչ էին իր հոգեխառնուածքին:

Իսկ անտիպ բանաստեղծութիւնները իր հարազատ զաւակներն են, ուր սէրը, լոյսը որպէս երգ կը թեւածեն պարուրելու համար այս տխուր աշխարհը՝ խոստանալով պուտ մը ուրախութիւն բոլորիս:

Օտարութիւնը մաշեցնող իրականութիւն է: Ռուբէն Սեւակ կ'երգէ նաեւ օտարութեան պատճառած ցաւը, թէ՛ իր եւ թէ՛ ամէն մէկ հայու կամ հայուհիի համար:

Ռուբէն Սեւակը հայ քնարերգութեան մէջ մնալու սահմանուած այն բանաստեղծն է, որ ապրեցաւ իր ժողովուրդին ցաւերովը, այն բանաստեղծն է, որ ի պատիւ իրեն, բոլորէն առաջ ճանչցաւ ու հրապարակեց բարձրածայն՝ Արեւմուտքի պոռնիկութիւնը, յատկապէս քաղաքական գետնի վրայ, ու հնչեցուց զարթեցնող իր զանգակները՝ պաշտպանելով մարդ արարածի իրաւունքները, ու փնտռեց մարդոց եղբայրութիւնը՝ ծաղկելով Օսմանցիին ճիւղաւորութիւնը, ու իր ժողովուրդին մահուան մէջ անգամ՝ տեսաւ անոր վերածաղկման հաւատքը, ու գոչեց, որ մարդկութեան լինելութեան համար՝ պայքարող պիտի մնան աշխարհի վերջին հայերը:

Եթէ իր երգերը սիրոյ մասին եղան ախորժալուր ու մեղեդային՝ եղան սուրսայր ու սպաննիչ երբ խօսեցաւ թիրքի մասին ու մարդ արարածի անիրաւութիւններուն մասին: Սպաննիչ էր իր խօսքը նաեւ երբ կը գրէր դրամապաշտներու եւ արուեստը ստակով առետուրի վերածողներու մասին:

Երէկ Ռուբէն Սեւակը թանգարան էր Նիսի մէջ:

Այսօր ան թանգարան ու դպրոց է մայր հողին վրայ՝ նուերովը Յովհաննէս Զիլինկիրեան խորապէս հայ մարդուն, ու հոգածութեամբը Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետ Գրեգին Բ. Կաթողիկոսին:



Յովհաննէս Չիլինկիրեան
Բարերարն ու Նուիրատուն

Իրաւ բանաստեղծները չեն մեռնիր: Հողն հայրենի կը պաշտպանէ գիրենք: Այսօր վերջնականօրէն՝ իր ողջ ստեժագործութեամբ հայրենաբնակ դարձաւ օտարութենէ դժգոհ Ռուբէն Սեւակը:

Յաւետ ողջունելի վերադարձ՝ երբ ան միշտ հողին հետ եղած է:

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԱՐՉԱԿԸ

«Բժիշկին Գիրքէն Փրցուած էջեր» -

Այս խորագիրը արծակագիր Ռուբէն Սեւակին անունը ընդգծուած ձեւով կապեց մեր գրականութեան՝ երբ գիրքի մը խնամքոտ կափարիչը չունէին Պոլսոյ «Ազատամարտ» թերթին մէջ հիւրընկալուող այս պատմուածքները, վերի խորագիրին տակ:

Նորութիւն էին այս գրութիւնները, որոնք ծափողջիւններով ընդունուեցան պոլսաբնակ ոչ միայն պարզ ընթերցողներուն կողմէ, այլ նաեւ մտաւորականութեան:

Պատմութիւնները ընթերցասէր հասարակութիւն մը ունեցան, որովհետեւ Ռուբէն Սեւակը տառապող ժողովուրդի ցաւերուն մասին կը գրէր՝ ցաւին դարմանն անգամ ներկայացնելով:

Որովհետեւ երբ Ռուբէն Սեւակ եւրոպայէն գալով հասաւ Պոլիս՝ մէկ իրողութիւն բացայայտ դարձաւ, բանաստեղծը Պոլիս եկած էր իր ժողովուրդին ծառայելու համար, թէ՛ որպէս բժիշկ, թէ՛ որպէս գրող:

Ու երբ իր խօսքն ու գիրը ընդունուեցան խանդավառութեամբ՝ երիտասարդ մտաւորականը առաւել գօտեպնդուեցաւ:

Այդ օրերուն՝ ու ինչո՞ւ չըսել ամբողջատիրութեան ողջ դարերուն, թիւրք իշխանութիւններուն համար հայու մը յառաջատար մտաւորական ըլլալը աններելի էր, որքան ալ տուեալ հայն ու հայերը մեծապէս օգտակար եղած ըլլային այս հողերուն, յիշատակելի կոթողներով: Զա՞յ էր՝ ուրեմն ընդունելի չէր:

Մէկ օրինակով փակենք այս էջը՝ Զրանդ Տինքի պարագայով: Զայ էր Զրանդ Տինք, անշուշտ: Ուրեմն, Զրանդ Տինքը աղանի ըլլալով՝ հրացանագարկ ըլլալու էր: Պետական վարձկան թիւրք պատանեակ մը կատարեց այդ զագրելի դերը, որպէսզի հարիւր հազարներ երկրի բնակչութեան բոլոր տարրերէն աղաղակէին՝ «Բոլորս ալ Զրանդ Տինք ենք, բոլորս ալ հայ ենք»:

Աշխարհը ապշանքով կը հետեւէր այս անսպասելի շարժումին: Թիւրքիոյ մէջ ոչինչ փոխուած էր:

Պոլիս ծնած եւ Պոլսոյ մէջ կայք հաստատած հայ գրողներու հոյլը նոր ոսկեդար մը հիմնեց հայ գրականութեան համար:

Շատ էին երեւելիները անոնց մէջ, որոնք Արեւմտահայերէնը բիրեղացուցին: Անոնց մէջ էր նաեւ Ռուբէն Սեւակը: Զոս, այս էջերուն վրայ բոլորը ներկայացնել դիւրին չէ, ու եթէ տեղ-

ւոյս վրայ սակաւ թիւ մը որդեգրենք՝ աչառութեան չվերագրեք, քանի որ արդէն մեր բուն միւթը Ռուբէն Սեւակն ու անոր գրականութիւնն է:

Ըսած եղանք արդէն վերը, որ Տիրան Զրաքեան-Ինտրան՝ թեւ տասը տարիով Սեւակէն մեծ, ժամանակակիցը եղաւ բժիշկ բանաստեղծին, եւ Ինտրային «Ներաշխարհ»-ին հրատարակութիւնը երեք տարիով կանխեց Սեւակին «Կարմիր Գիրքը», որ լոյս տեսաւ 1910 թ.-ին:

Ահա երկու ժամանակակից գրողներ՝ որոնք արտայայտուեցան թէ՛ բանաստեղծութեամբ, թէ՛ արձակով:

Ինտրան 1898-1900-ին կը գրէր իր «Ներաշխարհը», եւ 1905-ի Սեպտեմբերին «Ծանօթութիւն» յառաջաբանը այդ գործին, ու 1906-ին կը հրատարակէր՝ առանց վերատառութեան ենթարկելու պարունակութիւնը իր գրածին, որ կը սկսէր այսպէս.

«Հովին ծայնն է, նոճիներուն խորունկ գիշերուան ծայնը: Գոց պատուհանին ետեւ լամբարիս կէս գիշերուան լոյսին հետ, որ անխլիրտ կը վառի հովին մեծ շրջանին մէջ, մենաւոր ու անշարք կերագեմ իր բոցին յառած, ծխախոտի եղկածուփ շղարշներուն մէջէն, որ զայն կը պարուրեն՝ իր լուսեղէն ապակին ի վեր կը յածին օրօրուն, մենութեանս ճրագին մեկնոյշ բարութեանը մէջ ցնդելու: Քնացող տունին խորքերը ծայն չկայ: Վարագոյրներուն ծալքերը տարտամօրէն կը ծփան: Բնականոն հիքութեան մը խաղաղութեան մէջ՝ բնականոն ու հանդարտ վիշտի յայտակերպումներուն մէջ: Իրերուն ու կահերուն, սենեակին բնակիչին անաշխարհայնութիւնը, խոկուն անոնց զանազանութեանց ետեւ աղատապէս միացած եւ անսահման զրկանքի մը մէջ հեռացած անշրջագծուած երանական հաղորոյթի մը կը ձգտի»:

Առաջին տողերն են «Ներաշխարհ»-ին, որ այնքան աղմուկ բարձրացուց Պոլսահայ մեր մամուլին մէջ, տեղի տալով թեր ուղէն կարծիքներու, բայց միաժամանակ մեր գրականութիւնը

օժտելով անմոռանալի երկով մը, ուր իմաստասէրն ու նկարիչը՝ ու բանաստեղծը մանաւանդ, արծակի մը մեղեդայնութեան յանձնեց թեւաւոր հայերէն մը, որուն թռիչքը առ այսօր չէ կասեցուած հակառակ գրեթէ դարու մը իր թեւածութեան:

Թոյլ տուէք, որ կարկաչէ Ինտրայի արծակը, երբ ինքը չէ նիւթը մեր այս հրատարակութեան, բայց ըլլալով եղբայրակիցը Ռուբէն Սեւակին, մեզ կը մղէ ոչ թէ բաղդատութեան մը՝ այլ ըսել կուտայ մեզի, որ եթէ Ինտրան հասանելի էր մտաւորական դասուն՝ ապա Ռուբէն Սեւակը հասանելի էր մեր ժողովուրդի բոլոր շերտերուն, իր ոճին պարզութեամբը եւ նիւթերուն անմիջական օտգապաշտութեամբը:

Զրաքեանը քննադատողներէն շատեր մոռցուած անուններ են. ոմանք ալ կ'ապրին մեր պատմութեան իրենց բերած վկայողի արժանիքով...: Բայց Ինտրան կը մնայ ինչպէս իր սիրած յաւերժական նոճիները՝ մշտադալար, հայուն համար պահելով լոյս ու ջերմութիւն, գոյատեւելու յամառութիւն, եւ աւելին՝ ձգտում գերեզմանէն անգամ մատչելու Ամենակալին:

Զրաքեանին աղերսը Ռուբէն Սեւակին, որքան Ինտրա խորատուգուած է մարդկային հոգիի անելանելի բաւիղներուն մէջ՝ Ռուբէն Սեւակը նոյնքան խորատուգուած է հայ մարդուն տառապանքներուն մէջ, ու ջանացած է դառնալ բալասան հայ մարդոց ցաւին՝ ինչպէս որպէս բժիշկ, նոյնպէս որպէս արծակագիր, միշտ նախընտրելով Արփիարեանի «Պարզին վսեմութիւնը» ուղիին՝ որպէս իր արծակ գրութիւններուն ոճ ու արագ հաղորդականութեան միջոց: Ռուբէն Սեւակ ընդմիշտ մնաց խրտնաբանութենէ հեռո՛ւ, քանզի ան գիտէր թէ հեռանալ խրտնաբանութենէ՝ կը նշանակէր մօտենալ ժողովուրդին, ու մտնել անոր հոգիին մէջ, ու անմիջապէս օգնել անոր ցաւերու մեղմացումին:

Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը՝ անհրաժեշտ բոլորիս:

Այգեպան Ռուբէն Սեւակ՝ Բա՛ց Այգիիդ Դռները

Ահա այգին՝ որուն դռները բացուած են, ճակատին գրուած.

«ԲԺՅԻՆ ԳԻՐՔԵՆ ՓՐԵՍԻՆ ԵՆԵՐ»:

1911 թ.-ին Լոզանի մէջ գրուած «Այլասերում» պտղալի ծառն է մեզ առաջին դիմաւորողը: Այս էջերը կարծեք գրուած ըլլան այսօր: Այնքա՛ն այժմեական են: Կրնաք անուանումին կողքին աւելցնել Ամերիկայի որոշիչ անունը:

Լսեցէք, այգեպանն է խօսողը.

-«Ձգոյշ, զգոյշ»

«Եթէ Եւրոպան է, որ կը հնչեցնէ այլասերումի ահազանգը, մի՛ սոռնաք, որ այդ սարսափելի ախտը ամենէն առաջ մեր - ցեղին կը սպառնայ իբրեւ հին ցեղի մը»:

«Ու մենք՝ փոխանակ արմատախիլ ընելու, տգիտօրէն կ'ընտրենք է՛ն ախտավարակ ծիւերը, զիրենք միայն կը մշակենք: Ու կը պատահի մեզ այն ինչ որ ո՛չ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած: Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի՛ մտացի է քան այն, որ մտաւորական կը կոչուի: Ընթերցողը աւելի ողջամիտ է քան գրողը, առաջնորդուողը աւելի հեռատես է քան առաջնորդողը, ուիրշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է քան ուղեղը»:

Որպիսի՛ ախտաճանաչում եւ համարձակ մատնանշում:

Այդպէս ալ մենք ունէինք համեստ քահանայ ընկեր մը Հալէպի մէջ՝ տէր Գալուստը, որ մեր նոյն քաղաքին մէջ ապրած օրերուն՝ եկեղեցւոյ խորանէն, Ռուբէն Սեւակէն աւելի քան երեք քառորդ դար ետք յայտարարեց.

-«Այսօր, մեր ժողովուրդը կը ղեկավարուի գրպաններով լեցուն, բայց ուղեղներէ պարպուած մարդոց կողմէ»:

Եւ երեք քառորդ դար ետք պատահա՞ծ է փոփոխութիւն:

Այլապէս, հայկական բարձրավճարակը ինչո՞ւ պարպուէր՝ ու ջարդերով պարպուէր մեր երկիրը իր հազարամեայ բնիկ տարրէն, հայ ժողովուրդէն:

Այգեպանը կը շարունակէ.

-«Չեռու մենե՛ փխտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը»:

«Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք»:

«Մեզի կարմիր ու մսոտ շրթներով, ուժեղ ու ժպտուն գրանակութիւն մը պէտք է»:

«Մեզի ոսկեղար մը պէտք է, նո՛ր ոսկեղար մը»:

«Այլասերո՞ւմ, ո՛չ, վերածնունդ...»:

Ահա թէ ինչ ուզած է Ռուբէն Սեւակ հարիւր տարի առաջ, նստած Լոզանի մէջ 1911 թ.-ին, ու ի:նչ կ'ուզենք մենք այսօր Յայաստանէն եւ սփիւռքէն: Ոչ թէ լաց ու կոծ, այլասերում ու յուսահատութիւն՝ այլ նոր վերածնունդ, երբ կայ հողը՝ ակնաղբիւրը մեր գալիք բոլոր յաղթանակներուն, ինչ որ 2016-ի Ապրիլի սա օրերուն պարզուեցաւ ուժովը բանակի արի կեցուածքին:

Ի զուր չէր, որ Յովհաննէս Չիլինկիրեանը՝ եղբորորդին նահատակ բանաստեղծին, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակին առիթով 1985-ին հրատարակեց «Ռուբէն Սեւակ եւ Փրցուելիք Ուղեղներ» գիրքը, եւ զայն ձօնեց.

-«Այս գիրքը կը ձօնենք անունով հայ այն կեղծ ազգասէր առաջնորդներուն՝ որոնց սխալ քաղաքականութիւնը 24 Ապրիլ 1915-ին յանգեցաւ»:

«Այս գիրքը կը ձօնենք՝ անունով հայ, սփիւռքի այն կեղծ ազգասէր առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը նոր 24 Ապրիլներու կրնայ յանգիլ»:

Չիլինկիրեանի այս պոռթկումը ինչո՞ւ, որովհետեւ ինչպէս «Այլասերում» շարադրանքին մէջ՝ Ռուբէն Սեւակ գրած էր.

-«Գառնուկի պէս անզէն ցեղ մը ամեն օր, ամեն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբռերը խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրութեան մը խօսքը կ-

ընեն մեզի, ու կ'երագեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին»:

Աւելի ճակատային խօսք ո՛վ կրնար ըսել՝ եթէ ոչ Ռուբէն Սեւակը:

«Մի՛ Շնար» - պատմուածքը գրուած է սիֆիլիսով (կարծր շանքր) տառապող մարդու մը մասին, հեռու քարոզչական բնոյթ ունենալէ, հոգեբանական նրբագոյն մօտեցումով: Ինչ-պէս միշտ՝ փայլուն մայրենիով:

«Կեղծ Խենթը» - Պատկերաւոր ոճ, պարզութեամբ գրաւիչ՝ երբ հեղինակը մասնագէտի մօտեցում ցոյց կուտայ հիւանդին, հիւանդ՝ որ ի վերջոյ վերջ կուտայ իր կեանքին, ինքզինք նետելով ջրհորի մը մէջ:

«Սակայն լաւագոյն չէ՞ հոր մը աղտոտել՝ քան տարիներով նուիրական բոյն մը թունաւորել»:

Ու եզրակացութիւնը հեղինակին.

-«Թող կրօնագէտներն ու բարոյագէտները անձնասպանութեան վրայ վիճին, թող իմաստսիրական հատորներ արձակեն իրարու գլխուն, մէկը պիտի գտնուի՞ ինծի բացատրելու համար, որ մարմնապէս ու հոգեպէս ի՞նչ պիտի արժէր այդ կեանքը՝ խօսելու, զգալու, շարժելու, սնանելու, մտածելու անկարող, մէզի մէջ փտած մսի կտոր մը, որ շանը նետես չ'ուտեր...»:

Իւթնէզիին համաձայն չէ՞ք գտներ Ռուբէն Սեւակը, որ կարծէք համաձայն ըլլայ Ամերիկեան քաղաքացի հայ բժիշկ ճէք Գեորգեանի կարծիքին իւթնէզիի հարցին մէջ:

Ամերիկեան պետութիւնը ազատագրկեց բժիշկ Յակոբ Գեորգեանը երկարաժամկէտ բանտարկութեամբ, որ մահացաւ հասակ առած տարիքին: Այդ հայը գիտնական էր:

«Ապրիլը Յաղթել է» - Պայքար մահուան դէմ: Իսկ ո՞ր գրողը չէ պայքարած մահուան դէմ: Իսկ երբ գրողը բժիշկ է՝ ա-

ռաւել եւս: Ահա այգեպանին իրագործունի կարօտ թելադրանքը.

-«Ծնողներ, ուսուցէք ձեր տղաներուն թէ իրենց մէջ Աստուած կը քնանայ»:

«Բժիշկներ, սորվեցուցէք ձեր հիւանդներուն, որ քաջ ըլլան, ապրիլը յաղթել է, յուսահատներուն համար այս կեանքին մէջ տեղ չկայ»:

Իսկապէս ալ ռուս գրականութեան մէջ անդամալուծուած Օսթրովսկին յուսահատութիւնը անգոսնելով գրագետ դարձաւ՝ ու մեզի կտակեց իր գլուխ գործոցը, «Ինչպէս էր կոփուում պողպատը» ուսանելի հատորը, որ տարբեր լեզուներով տպագրուեցաւ:

«**Տէր Ողորմեայ...**» - Այստեղ եւս ինչպէս միւս՝ հեղինակը անմիջապէս կը մտնէ իր նիւթին մէջ, ու ճակատային համարձակութեամբ կ'ըսէ իր ըսելիքը, երբ նիւթը դարձեալ ֆրանկախոսն է, ու այս հիւանդութեան ենթակայ ընտանիքին հայրը ունի երեք խուլ զաւակներ, այսինքն երեք անգամ դաւաճանած է կեանքին, ու ահա թէ Սեւակ ինչպիսի պատկերներով կը ներկայացնէ հիւանդը.

-«Թեւերը իրանին վրայ ծալած էր, հաւնոցի մը մէջ բանտուած արծիւի մը պէս: Ակռաները կճրտացին բերնին մէջ՝ մանրախիճեր փշրելու պէս»:

Իրը՝ կեանքի, լուսաւոր կեանքի համար պայքար:

«**Գինովին Աղջիկը**» - Սա լուսնոտ մըն էր: Գեղեցիկ, սիրուն աղջիկ մը տխուր վախճանով՝ երբ կ'իյնայ կրակի վրայ ու կ'այրի վերէն մինչեւ որովայն...

Պատկեր մը՝ աղջնակէն.

-«Ու յանկարծ տժգունեցաւ, ճիչ մը արծակեց եւ ուժգնօրէն ինկաւ՝ երկինքէն ինկող քարի մը նման»:

«Ձեռքերը, ոտները, ամբողջ մարմինը յանկարծ-յանկարծ կը դողային՝ վիզը կտրուած անասունի մը պէս»:

Բժիշկ գրագետին եզրակացուիւնը.

-«Մէկ կողմէն կը հաւաքեն ամենէն առողջ երիտասարդները՝ պատերազմի մէջ հարիւր հազարներով մեռցնելու համար, միւս կողմէն կը ստիպեն որ բժշկութիւնը գերմարդկային ճիգեր թափէ ապրեցնելու համար տառապագին մսակոյտ մը, որ իր ամբողջ ուժովը մահը կը կանչէ»:

Հեղինակը գրկեալներուն հետ է միշտ՝ ու պաշտպան ամբողջ անոնց ցաւերուն:

«Կռունկը» - Ղարիպութեան գացած հայ ուսանողի մը մահն է որ կը նկարագրուի այստեղ: Վերջին րոպէին այդ երիտասարդը կ'ուզէ լսել մեր ժողովուրդի տխուր երգերէն՝ «Կռունկ»-ը:

Ո՞վ աւելի լաւ պիտի հասկնար ղարիպ ու մահամերձ ուսանողին վիճակը՝ եթէ ոչ ղարիպ ուսանող Ռուբէն Սեւակը, որ մահացողին մասին կուտայ հետեւեալ պատկերը, երբ արդէն ան չկար...

-«Դուրսը սառած հովը մրրիկներու պէս կը շաչէր անցորդներու վրայ»:

Մահացողին համար կարծեք:

«**Հրաշալի Բժշկութիւն**» - երբ մենք երեսանի մէջ բժշկական ուսանող էինք՝ մեր դասախօսներէն մէկը ըսաւ մեզի.

-«Ապագայ բժիշկներ, դուք հիւանդութիւն չէ որ պիտի բուժէք՝ այլ հիւանդը: Ամէն անհատ աշխարհի մըն է՝ հոգեկան հարուստ աշխարհով մը»:

Ելլելով այս ճշմարտութենէն՝ Ռուբէն Սեւակ իր խօսքը ուղղելով երիտասարդ բժիշկի մը, կ'ըսէ.

-«Աւա՛ղ, քու ուսումնասիրած մարդդ դիա՛կ մըն է միայն: Զգուշացիր իրեն նմանելէ: Մարդը որ կ'ապրի, մարդը որ կը խորհի ու կը զգայ, մարդը որուն բարոյկան տառապանքները բիւր անգամ աւելին են քան ֆիզիքական տառապանքները,

այն մարդը ուրիշ բան կը պարունակէ իր մէջ՝ քան ճարպն ու ոսկորը...»:

Ու կը կրկնէ Ռուբէն Սեւակ.

-«Ամէն մարդու մէջ Աստուած մը կայ... Ահաւասիկ թէ ինչ բան կը մոռնան քեզի ուսուցանել»:

Իր այս պատմութեան քննարկող գրական նոր սեռ մը բերաւ մեր գրականութեան՝ Ռուբէն Սեւակ արծակագիրը:

Հետեւորդներ ունեցա՞ւ իր բեւեռացումին հասնող:

Եղան գրողներ Տիգրան Վարժապետեան բժիշկին ու փրոֆ. սրտաբան Տոլապեճեանին պէս, եղան նաեւ ուրիշներ, բայց այդ նիւթերը մշակողները չհասան այն շիկացումին՝ որուն հասած էր Ռուբէն Սեւակ իր մշակած նիւթերուն մէջ:

Հետեւիլ՝ չի՞ մշանակեր նոր ճամբայ բանալ...:

«**Ահաւոր Տարակոյս**» - Հեղինակը ինչպէս բազում գրողներ՝ կը կանգնին կեանքի ու մահուան յաւիտենական հարցականին առջեւ, երբ կը կորսնցնեն իրենց եղբայրը: Հակիրճ այս էջերը տրուած են զգացումներու շիկացած, ատրաշէկ փունջով մը:

«**Անհծուած Գանձը**» - Երիտասարդ թոքախտաւոր հայ աղջիկի մը պատմութիւնն է մեզի հրամցուածը: Աղջիկ մը՝ որուն հայրը հարուստ է, իսկ ամուսինը՝ տղէտ:

Ամուսինը կը սպասէ, որ ժառանգէ աներիօր գանձը... Եկած են երեքով Երուպա՝ աղջկան բուժման համար...

Հեղինակը այս ողբերգութիւնը սեղմած է տողի մը մէջ.

-«Այս քսան տարու կնոջ մէջ համայն մարդկութիւնը թուաւորելու չափ դառնութիւն կար»:

Ի զուր չէ ըսած Գէորգ Էմին.

«Երզը հեռագիրի նման լինի պիտի»:

«**Ստամոքսին Չոհը**» - Այդ զոհը այս պատմութեան մէջ շատակեր մարդ մըն է: Պատմութիւնը ունի անոյշ զգեստաւորում:

«Մանչերուն Գերեզմանը» - Անկրկնելի պատում՝ հոգեբանական խորունկ վերլուծումով, պատանեկան չարաճիճիութիւններու վերյիշումով եւ պատկերներու առատութեամբ:

Գեղարուեստական գրականութիւն հիւսող մըն է Ռուբէն Սեւակ, իրեն չեն պակսիր նիւթ ու յուշ, լեզու ու ոճ.

-«Լաւ կը յիշեմ որ օր մը ողջ մկնիկ մը լուցկիի մը մէկ տուփին մէջ մտցնելով՝ չորս թաթիկները չորս ծակերէ դուրս հանեցինք ու ազատ արծակեցինք: Երբ գիրուկ դասատուն ու բոլոր աշակերտները տեսան, որ փոքրիկ տուփ մը սրահին մէջ ինքնիրեն կը վազէր խենթի մը պէս՝ ամէնքն ալ սարսափահար դուրս խոյացան...»:

«Փոխան Զարսանիքի» - Կը ներկայացնէ իր ամուսնութիւնը: Քաղաքական պսակը նախ, ապա Փարիզի մայր եկեղեցիին մէջ հայկական արարողութեամբ՝ երագի մը իրականացումը, տրուած իւրովի պարզ, յուզիչ եղանակով:

«Մեղքին Պտուղը» - Որդեծնութեան, աւելի ճիշդը՝ մարդու աշխարհ գալու մասին է խօսքը:

Սեկնաբանութիւնները կարօտ չեն որեւէ բացատրութեան: Ուրեմն կարդանք հեղինակին գրածը, որ կեանքի գոյութեան վերլուծումն է.

-«Մարդը, որ Աստուծոյ պէս կրնար ստեղծագործել՝ իժի պէս կը թունաւորէ հիմա: Սէրը օրհնութիւն մըն էր՝ անծօքի մը կը վերածուի: Է՛ն տաք համբոյրը կը կեղծեն, Է՛ն անզուսպ կիրքերը կը խարդախեն, Է՛ն բուռն սէրերը կը նահանջեն, Է՛ն արգաւանդ արգանդները կ'ամլանան...»:

Անխուսափելի վախն է ան, բայց անխուսափելի՝ վախը, բոլոր օրինաւոր եւ ապօրէն գիրկընդխառնումներուն վախը, սերնդագործումի վախը...

“Զգո՛յշ...զգոյշ...” կ'ըսեն գիշերային զանգակները, որոնց ղօղանջը հալած կապարի պէս կ'անծրելէ ամբարիշտ քաղաքին վրայ»:

«Բայց այս ամուլ քաղաքէն անդին՝ արգասաբեր գիւղեր կան, այս թոքախտաւոր տուներէն անդին՝ յուռթի մարգերը կան, այս սաւլայատակ փողոցներէն անդին՝ թաւշային մարգերը կան, ու ուռճացող հողերը կան, ու ամբողջ երկրագունդը կայ՝ յղի կնոջ մը պէս ուռեցած»:

«Յո՛ն, բնութիւնը իր մայրական գիրկը կը բանայ պարզ ու մաքուր հոգիներու համբոյրին: Յո՛ն դեռ սիրոյ մեծ տռամը կը կատարուի այնպէ՛ս, ինչպէս հազարներով տարիներէ ի վեր մարդկութեան առաջին զոյգը ըմբռնեց ու գործադրեց զայն՝ բնական, ճակատագրական ու յաւիտենական...»:

«Օ՛ր մը պիտի գայ, որ մարդկութիւնը պիտի ըմբռնէ թէ մեղքի տղայ չկայ, ամէն տղայ որ կը ծնի, օրհնեա՛լ է ու նորածին երեխայ մը աւելի կ'արժէ քան իր ծնողը, լաւագոյն բարեշրջումի մը արշալոյսն է ան, որ կը ժպտի եւ որ կը խեղդենք չծնած»:

«Բայց այդ օրը հեռու է»:

Այո, այսօր եւս հեռու է այդ օրը, 2016 Ապրիլ եօթնին:

«Ծերերը» - Պատմութիւնն է ջութակահարի մը եւ դաշնակահարուհիի մը: Աշխարհը շրջած, դափնիներու արժանացած զոյգի մը, որոնք ազատ թռչուններու պէս երկրէ երկիր թեւած ու ամէն երկարմասէ յիշատակ մը պահած են, Չինաստանէն, Յնդկաստանէն, Սիպերիայէն, Սպանիայէն, Իտալիայէն:

Երջանիկ են անշուշտ: Բայց հեղինակը կ'ըսէ.

-«Նախ այդ տան մեծութիւնը աչքիս զարկաւ: Կրնամ ըսել որ ինծմէ զատ մարդու ոտք չէր կոխեր այդ նուիրական սեմէններս: Իրենց յաւերժական ճամբորդութիւններու պատճառով ամէն տեղ հիացողներ ունէին, բայց ոչ բարեկամ»:

Իրենց դժբախտութիւնը, զաւակի մը պակասն էր:

Դաշնակահարուհին կ'ըսէ.

-«Ստիճքներս իր շրթներուն կարօտովը թռռնեցան, իր վարդ մարմինին սպասելէն կոյս արգանդս շիրիմի պէս փակուեցաւ...»

Ամբողջ սիրտս, ամբողջ յոյսս, ամբողջ սերս միայն անորն էր, որ չեկաւ...: Ամուսինս չուզեց որ գայ...: Առատութեան մէջ կը լողամ ու ծարաւս կը մեռնիմ, լողորդիմ պէս, որ ծովուն մէջ կաթիլ մը անոյշ ջուր չունի՝ իր շրթներուն տանելու...:

Ես իրմէ սեր խնդրեցի, ան կեղտ թքաւ արգանդիս մէջ կանացի, ահա ինչո՞ւ առջի օրէն ես լացի...»:

Իսկ դաշնակահարուհիին ամուսինը ջերմամիզութենէ անլացած էր:

Ամբողջ ողբերգութիւն մը, որուն ծալքերը գիտէ վարպետօրէն բանալ ու եղրերգել մեր Ռուբէն Սեւակը:

Հակառակ մասնագիտական ուսում ունենալուն որպէս բժիշկ՝ Ռուբէն Սեւակ երբ կը խօսի հիւանդութիւններու մասին, ընթերցողին քարոզ չէ որ կը կարդայ, Սուրբ Գիրքի նման՝ «Մի՛ շնար» պատուիրը չի տար, այլ կեանքէն քաղուած համոզիչ իրողութեամբ մը կը լուսաբանէ իր ընթերցողը այնպիսի հայերէնով մը, որ աղբիւրի գուլալութիւն կը յիշեցնէ:

«**Թոքախտաւորը**» - Մարտազդեցիկ պատմութիւնը թոքախտաւոր գոյգի մը: Հեղինակը գիտէ արուեստի հանդերձանքը տալ տխուր պատմութեան մը: Մարդկային ցաւը գիտէ գողտր ձեւով ներկայացնել:

«**Նաբուլէոնի Մահը**» - Հեղինակը այս պատմութեանը կորով ու յոյս կը ներշնչէ իր հիւանդներուն, որքան ալ ծանր ըլլայ անոնց վիճակը:

Այն հիւանդները որոնք փոքրիկ ցաւ մը կը յուսահատին՝ թող գիտնան, որ այս աղքատիկ գիւղացիին զաւակը, այս նիհար ու պանդուխտ զինուորը, որ համամարդկային քաղաքակրթութեան հրամայեց՝ աշխարհին տիրապետելէ աւելի իր անծին տիրապետեր էր... Այս փոքրիկ մարդը իր վրայ կը միացներ բժշկութեան մեծագոյն հիւանդութիւնները՝ իր ուղեղը լուսնոտ էր, սիրտը պզտիկ, կուրծքը թոքախտ էր՝ եւ ստամոքսը քաղցկեղ...

Ահա թե ինչպես մեռաւ ան.

-«Մեռաւ կամքերուն հզօրագոյնը»:

Յիրաւի հոգեկան արիւթիւնը կը հարուածէ մահը:

«Մեղքին Տունը» - Կը ներկայացուի գաւառացի հայր մը, որ իր տղուն բարձրագոյն ուսումի համար Եւրոպա կը դրկէ: Անփորձ երիտասարդը կը թակարդուի անբուժելի հիւանդութենէ մը: Հայրը կը փութայ հասնիլ իր գաւակին՝ ու զայն կը ներկայացնէ բժիշկի:

Այստեղ հայր ու գաւակի խօսակցութիւնը հոգեբանական վերլուծումներով կը ներկայացուի:

Տղան իր հօրմէն կը պահէ իր ցաւին իսկութիւնը՝ ու կ'ըստ իր հօր.

-«Հայրիկ, բժիշկը ըսաւ թէ բան մը չունիմ»:

Իսկ հայրը հասկնալէ ետք տղուն ցաւը, ու խորապէս տխրելէ ետք, եւ իր մէջ սպաննուած գտնելէ ետք մեծ հայր դառնալու երազը՝ քովի սենեակէն տղուն կ'առնէ ու կը մեկնի ըսելով.

-«Բժիշկը կ'ըստ թէ բան մը չունիս եղեր, տղաս...»:

«Հարսերուն Գաղտնիքը» - Այս պատմութեան չունի ուժգնութիւնը նախորդներուն: Տեսակ մը կրկնութիւն՝ եւ միւսներուն արձագանգը: Արձագանգ մը՝ որ թէւ անհաճոյ չէ, բայց ծայն մըն է, որ չէ վերածուած մեղեդիի: Տունմնայ աղջիկի մը տագնապներուն հայելին է պարզապէս:

«Մեռելին Նշանտուքը» - Տինամիզմի պակաս մը այս պատմութեան մէջ եւս:

Յոգնա՞ծ է հեղինակը:

«Սաթենիկը» - Ահա վարպետութեամբ գրուած պատմութեան մը, ուր ընթերցողին կը ներկայացուի սնանկացած հարուստ մը, որուն աղջիկը կը ստիպուի դառնալ սպասուի՝ երազելով հին օրերը:

ժամանակ մը ազգականի մը տան ապաւինած աղջիկը՝ օրերէն օր մը դուրս կը շարտուի: Կը մնայ փողոցին մէջ՝ ուր, չար ժամ, երեք զինուորներ սուր մը կոկորդին դէմ տալով Սաթենիկին՝ կը ստիպեն որ յանձնուի իրենց...

Տխուր վախճան՝ որուն նկարագրութիւնը ահա.

-«Կուրծքն ու փորը տափակցած, ծմեռնային թուզի մը պէս խորշոմած, ճերմոտած, բայց դեռ անոյշիկ: Հոգեբանական ժպիտ մը չէր իրենը, այլ մարդակազմական»:

«Յաւի Միսը» - Աղիքային քաղցկեղով տառապող հիւանդի մը տրուած այցելութիւն.

-«Հոն, այս սեւ պատկերով գետնայարկ խուցին մէջ, մարդ ու կենդանի քով քովի սեղմուեր, թշուառութեան մէջ եղբայրացեր, շունչ շունչի տուեր էին՝ իրար տաքցնելու համար»:

Նկատի ունենալ, որ հիւանդին բնական վայրը Արեւելք չէ՝ այլ դրախտային Ջուիցերիան:

Հիւանդին կինը.

-«Երեսը գոգնոցին մէջ պահած՝ սկսաւ կամացուկ հեկեկալ, որպէսզի ամուսինը վերէն չլսէ: Բայց տղաքը՝ հազիւ ծունկիս չափ բարձր՝ սպառնական աչքերով զիս պաշարեցին թէ ինչո՞ւ իրենց մայրը կը լացնեն, կարծես ես ըլլայի իրենց ցաւին պատճառը: Ու որքա՞ն իրաւունք ունէին այդ մանուկ ուղեղները:

Գործուող չարիքի մը ականատեսն ըլլալ՝ այդ չարիքը գործելու հաւասար վատութիւն մը չէ՞...»:

Որպիսի՞ մարդկայնական կեցուածք հեղինակին կողմէ:

«Մեռցնելու Իրաւունքը» - Համոզիչ պատմուածք մը, ուր կայ պատերազմի ճակատին վրայ գերի մը վայրագօրէն սպաննելու ահաւոր տեսարանը, երբ ենթակային վիզը կը կախուի սուրի հարուածէն, ու երբ ան մայրի՛կ կը պոռայ՝ ափսոսանքով տակաւ կը շարունակուի հոսիլ ուժգնօրէն...

Հեղինակը.

-«Ընդմիջեցի: Բայց եթէ նոյնիսկ հիւանդն ուզէ, մենք չունինք զայն մեռցնելու իրաւունքը: Որով կը պատկանի կեանքը. ո՛չ հիւանդին, ո՛չ բժիշկին: Կեանքն Աստուծոյ կը պատկանի...»

Աստուծո՞յ... Աստուծո՞յ - ըսաւ ռամիկ խօսակիցս փրփրելով:

Մէկ կողմէն ահագին ծախսեր - շէնքեր ու դարմաններ անդամալոյծներու, ցաւագարներու, հոգւով, մարմնով փտածներու, անբուժելի զառամեալներու կեանքն ամէն զնով պահպանելու համար... Մինչդեռ անդին, կռուի դաշտին վրայ, էն - խոստումնալի ու էն առողջ երիտասարդները հազարներով, տասը հազարներով գետին կը փռուին. յետոյքէն զարնուած նապաստակներու պէս գլտոր դառնալով... Ասոնց կեանքն ալ Աստուծոյ չի՞ պատկանիր տոքթոր...»:

Հապա Ռուբէն Սեւակին կեանքը որով կը պատկանէր...

Հեղինակը վերի նիւթին ուրիշ անգամ ալ անդրադարձած է ծաղկելով պատերազմի չաստուածները:

«**Տելիրիում Թրէմէնս**» - Հիւանդութեան այն տեսակը՝ երբ ենթական կը զառանցէ դողահար, կը հասնի ցնորական վիճակի՝ եւ կամ կը մոլեգնի: Այս պարագային հիւանդը ալքուլամոլ մըն է, որ կը հասնի վիճակի մը՝ երբ կը դիմէ անձնասպանութեան:

Անոր թողլըուած կինն ու երկու զաւակները կանգնած դիագնոսական դրան առջեւ՝ ողբագին կը զոչեն.

-«Հայրի՛կ, հայրի՛կ, քեզի նարինջ բերինք հայրի՛կ...»

Վիպային տեսարան՝ որ իրապատում է:

Անգամ մը եւս կը հաստատուի, որ Ռուբէն Սեւակը իրապաշտ գրող մըն էր՝ հեռու հնարովի գրութիւններէ, որոնց անհրաժէշտութիւնը չունէր երբեք, քանի կեանքը կորուստ էր նման դէպքերով:

«**Վեցերորդ Զգայարանք**» - Հեղինակը կ'ուզէ, որ մենք մեր զաւակները պատրաստենք մեծ սիրոյ համար.

-«Արուն ու Էզը, սերն ու սեռը, մարմինն ու հոգին իրար խառնելով՝ միանգամայն տիեզերքին ու Աստուծոյն կը խառնուին»:

«Վայրկեանական ցնցում մը՝ կ'ըսէ Մարք Օրէլ, բայց այդ մէկ ցնցումը անհունները կը դողացնէ ու յաւիտեանները կը բեղմնաւորէ... Այսպէս է սերը, մաքուր, առողջ, բնական սերը:

Իմաստութի՞նն թէ յիմարութիւն, չեմ գիտեր: Կը զգամ միայն, որ մարդկային ամենաբարձր արտայայտութիւնն է ան: Անով է որ Աստուած մեր մէջ կը յայտնուի, Աստուած սեր է»:

Մեզ հոն հասցնել է նպատակը սիրոյ երկրպագուին՝ իր սիրոյն անդաւաճան մնացող, սիրոյ կորուստին փոխան մահը դիմակալող նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակին:

«Զմեռնելու Համար» - Այս պատմութեան նիւթը Սիամանթօն է: Բանաստեղծը թրջախտ կը տառապի, արիւն կը փսխտ:

Զինք փոխադրած են Ջուիցերիոյ մէջ լեռնային բուժարան մը (մենք անձնապէս տարիներ ետք այցելեցինք եւ ստուգեցինք Սիամանթոյին հոն բուժուած ըլլալը՝ Սիմոն Սիմոնեանի աւագ որդի Յովիկին հետ. - Թ.Թ.):

Կը նակարգրուին այդ լեռները:

Սանաթորիումի իր սենեակին մէջ Սիամանթօ նամակ մը կը ստանայ Սիմաս Չերազէն: Ան կը գրէ.

-«Դիւցագնօրէնը գրողը երիտասարդ էր»:

Այո՛, չի մեռնիր՝ բայց թիւրքը մեռցուց Սիամանթօն, երբ ան երիտասարդ էր:

Ռուբէն Սեւակ կը գրէ.

-«Ո՛չ, հայրենիքի այսպիսի մէկ ճգնաժամային վայրկեանին՝ ան պիտի չմեռնէր, ան պիտի չյուսահատէր, ան պիտի ապրէր, պիտի մռնչէր, պիտի երգէր, պիտի բոցավառէ՛ր ռազմիկներու հոգին: Հսկաներու ճակատամարտին մէջ ան իր գրիչին ծանրութիւնը պիտի նետէր՝ արիւնէն խենթեցած սուսերի մը պէս... "Ձարկ, Կովկաս"»:

Այս տարօրէն հիւանդը՝ իր հոգեվարքի անկողիցին մեջէն ուժի ահագին գանձեր պիտի գտնէր ամբողջ ազգ մը գօտեպնդելու համար, «Չարկ, Կովկաս»:

Շնչահատութենէ հիւժող այս երիտասարդը՝ իր հիւանդ կուրծքէն ռազմաշունչ փոթորիկներ պիտի յառնէր Ալպիաններու գագաթէն մինչեւ Արարատի ստորոտը... «Չարկ, Կովկաս»:

Ու կամքի տարօրինակ ուժով մը՝ բժիշկներու պատուէրին անսալու համար՝ այդ ջղուտ ու անհանդարտ երիտասարդը ամբողջ երկու տարի ամէն օր, ամէն ցերեկէ վերջ, երկար-երկար ժամերով, բաց օդին մէջ փռեց, անշարժացուց, քարացուց իր վտիտ մարմինը, արեւուն տակ անմահութեան համար հասունցող մոմիայի մը պէս...

Հնագանդ տղու մը նման առտու իրիկուն կանոնաւորապէս չափեց իր ջերմութիւնը: Միայն թէ ամէն անգամ. որ չափազանց բարձր էր ջերմութիւնը, իսկոյն կը ցնցէր ու կ'իջեցնէր զայն, ոտքերը ուժգին-ուժգին գետին զարնելով:

Ու շաբաթն անգամ մը, երբ իր ծանրութիւնը չափելու համար կը մօտենար ճակատագրական նժարին, չէր մոռնար կանխաւ քանի մը գիրք պահելու իր գրպաններուն մէջ անոնց կշիռովը ինքզինք ու իր բժիշկը խաբելու համար:

Կարելի՞ է սակայն մահը խաբել...:

Ո՛վ դուք, որ այսպէս կը խորհիք, յուսահատներ ու պարտուածներ՝ ձեզի համար են այս տողերը»:

Հերոսապատում մը ինքքին՝ հերոսի մը մասին գրած, հերոսի մը կողմէ՝ երբ թիրքին եաթաղանը չսարսափեցուց նահատակուող բանաստեղծը:

«Ապրելու Կամքը» - Բազմաթիւ հիւանդութիւններու տէր Վօլթեր՝ կ'ապրի հարիւր տարի: Ինչպէ՞ս կ'ըլլայ: Քանի որ մեծ գրողը իրեն համար նշանաբան ընտրած էր չափաւորութիւնը: Չափաւորութիւն ամէն բանի մէջ՝ ուտելու, քնանալու, մաքրութեան, աշխատանքի, ամէն բանի մէջ:

Վօլթեր, որուն մասին հեղինակը կը գրէ.

-«1694-ի Փետրուարի 20-ին ծնաւ - աւելի վիժեցաւ քան թէ ծնաւ, մանուկ մը, որ երեսութապէս մեռած էր: Ո՛չ կը տեսնէր, ո՛չ կը ծչար, ո՛չ կը շարժէր, ո՛չ կը շնչէր:

Կատարեալ կմախք մը: Իր ժամանակին ամենէն նիհար, ամենէն հիւանդ, ամենէն տգեղ մարդը:

Այդ հանճարեղ վիժուկը Վօլթեր ինքն էր»:

Եւ այդ ամէն օր մեռնող մարդը ապրեցաւ հարիւր տարի ու հեղինակեց 70 գիրք:

Ունեցած էր ապրելու կամք՝ ինչպէս Սիամանթօն:

Կամքով դիմել յաղթանակի, ապրի՛լ, ահա՛ թելադրանքը հեղինակին, իր հիւանդներուն եւ ոչ հիւանդներուն:

Որպիսի՞ կենսասէր օրինակ՝ Վօլթերը:

Այդպիսին չէ՞նք ազգովին, զինուած յաւետ ապրելու կամքով:

«Մեռելի Սը Նամակը» - Թոքախտաւոր հայ աղջիկ մըն է նամակը գրողը, Չուիցերական առողջարանէ մը, ուր ան կ'ըսէ.

-«Ու ես հոս, միս-միմակ, իւղատար չունեցող կանթեղի մը պէս, օրէ օր, կաթիլ-կաթիլ կը մեռնիմ...»:

Ապրիլ ցանկացող 18-ամեայ աղջիկ մըն է այս նամակը ստորագրողը, խիստ յուզիչ մեր գրականութեան մէջ, քիչ երեւցող նիւթերէն մէկը, զոր այնքան վարպետօրէն ներկայացուցած է մեզի Ռուբէն Սեւակ:

«Մարաւ Մարդը» - Երիտասարդ տարիքին՝ հիւանդ: Բուժուելու կերթայ ի Լոզան՝ բայց դարման մը չգտնելով կ'ուզէ վերադառնալ երկիր.

-«Հիմա որ մահուան մօտիկութիւնը կը զգար, մէկ փափաք ունէր, հայրենիք դառնալ: Եթէ վաղը յանկարծ մեռնիմ, կ'ըսէր, մարդ մը չկայ, մատուռ մը չկայ, լացող մը չկայ, շան դիակ մը ինձմէ աւելի բախտաւոր է՞»:

Պանդխտութեան մէջ մեռնելու ցաւը, էն խորունկը ցաւերուն, զոր այնքան տպաւորիչ կերպով ներկայացուցած է Ռուբէն Սեւակ:

«Տոբթօր Քօզմօզ» - ժամանակին մեր գաւառներուն մէջ շատ կային տոբթօր Քօզմօզներ, որոնցմէ մէկն էր այս պատմուածքին հերոսը, որ.

«Ձաւակս, կ'ըսէր իրեն դիմող հիւանդին, այս շաբթու պահքդ արեցի՞ր: Ինծի գալէ առաջ մեղաւոր գլուխդ տէրտիրոջ արետարանին տակ դրի՞ր: Տիրամօր պատկերին առջեւ մոմդ վառեցի՞ր: Ուխտդ ընդունական եղա՞ւ: Բոցը շիտա՞կ ելաւ թէ՞ ծուռ ելաւ: Մեծերուդ խօսքը լսեցի՞ր: Մէկու մը սիրտը ցաւցուցի՞ր: Քեզի տալիք դեղս սուրբ է զաւակս, ուտիք բերանով չուտես, Աստուած բերանդ կը ծռէ...»:

Հիմա ճանչցա՞ք տոբթօր Քօզմօզը:

Հարիւրաւոր տարիներ մեր գաւառներուն մութ անկիւններուն ծուարած խեղճ գիւղացիները բուժողները տոբթօր Քօզմօզներն էին, կամ սափրիչներ, կամ տէրտէրի մը աղօթքը: Մինչեւ որ կամաց-կամաց Հիպոկրատի աշակերտներ հասան գաւառ, բայց 1915-ին անոնք ալ հնծուեցան թիւրքին եաթաղանովը:

«Մարտիրոս Պոլսեցին» - Ռուբէն Սեւակի գրականութեան մէջ նորութիւն մը այս պատմուածքը, հիւնըրի զօրաւոր նեցուկովը, ուր կը պատմուի հայ տգրուկի մը առաւփախաւութիւնը այնքան զուարթ ոճով մը, որ սիրով կը կարդացուի:

Այս մուրացկանութիւնը, գողութիւնը, ստախօսութիւնը արհեստի վերածած եւ երբեմն ալ այդ բոլորին «արուեստ»-ի շղարշ հագցուցած հայեր ալ կան, որոնց մերկացումին նուիրած է այս պատմուածքը իմ Ռուբէն Սեւակը:


«Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» գիրքը իր վերջին էջով կուտայ պորտաբոյժի մը պատմութիւնը, իր բովանդակութեամբ մեզի կը ներկայացնէ հայուն ցաւը, տառապանքը, տեսելու ապրելու անկոտորում կամքը եւ անսպառ յոյսը գալիք առաւօտներու:

Թե՛ իր բանաստեղծութիւններով, թե՛ իր արձակով Ռուբէն Սեւակը մեզի ներկայացած է որպէս ամբողջական հայ արուեստագէտ, անմնացորդ նուիրուած իր ժողովուրդին՝ այն խորհուրդը տալով մեզի, որ սխալ է Արեւմուտքին ապաւինիլը, կեանքին օրինակովը ցոյց տալով, որ հողին դառնալը՝ երկրին ապաւինիլն է ճիշդը, որպէսզի իրագործուին իր երազները, մեր երազները.

«Մեզի կարմիր ու մսուտ շրթներով ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է»:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են, մեզի նոր ոսկեդար մը պէտք է, նոր ոսկեդար մը:

Ու մենք հաւատացողն ենք այդ գալիք ոսկեդարին, Ռուբէն Սեւակ նոյնպէս իր գրականութեամբ, կեանքով կը հաւատար գալիք ոսկեդարին, ու ինքն եղաւ այնքան խիզախ նաեւ իր վերջին հերոսական կեցուածքով՝ որ մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրոյ մեզ զկեանս պարգեւեաց:



Այվազովսկիի մէկ ծովանկարը՝
Ռուբէն Սեւակի անուան թանգարանին մէջ, Սուրբ
Էջմիածին

Հատուածներ Տեսագրութենէն՝ Ռուբէն Սեւակի Մասին

Ինչպէս ժամանակին Պարոյր Սեւակն էր ըսած՝ «խումբով են գալիս»: Եւ մեր մեծերը խումբով եկան գրականութեան դաշտը, եւ Արեւելեան Հայաստանի մէջ՝ եւ Արմտեան Հայաստանի մէջ: Չարմանալի է բայց իրաւ:

Եթէ գրականութիւնը սիրող մարդը անդրադառնայ այս հարցին՝ պիտի տեսնէ որ Վարուժաններ, Ռուբէն Սեւակներ, Սիւսանթոներ երբ եկան հրապարակ՝ նոյն օրերուն Արեւելեան Հայաստանի մէջ ալ հրապարակ կուգային Թումանեաններ, Աղաեաններ, Նար-Դոսներ եւ տակաւին շատ ուրիշներ:

Ինչպէս հայերէն լեզուի ուսուցիչ պարոն Սիմոն Սիմոնեանը սիրել տուաւ մեզի մեր բոլոր բանաստեղծները՝ կանուխեն, եւ յատկապէս Ռուբէն Սեւակը, որովհետեւ երբ կը պատմեր մեզի՝ մենք թերատի տղաք, դեռեւս այդ օրերուն չէինք հասկնար արժէքը խօսուածներուն, նոյնիսկ նշանակութիւնը կը դժուարանայինք հասկնալ, բայց մենք խանդավառութեամբ՝ երբ ըսուեցաւ մեզի, թէ Ռուբէն Սեւակ՝ Ջուիցերիոյ մէջ բժշկական համալսարանը աւարտած մարդ, որ եկած էր երկիր՝ իր ժողովուրդին ծառայելու համար, եւ մտած էր Օսմանեան բանակ՝ որովհետեւ զինուորական կոչում ունէր: Ու ծառայեց հոն որպէս բժիշկ, երբ ահա ձեռքակալեցին զինք ու տարին Չանղըրը՝ հարիւրաւոր հայ մտաւորականներու հետ: Հոն՝ որպէս բժիշկ, տեղւոյն պատասխանատու մէկ անձնաւորութեան աղջիկը հիւանդ ըլլալուն՝ կանչուեցաւ, հրաւիրուեցաւ անոնց տունը՝ եւ յաջողեցաւ այդ աղջկան բուժել:

Պատմութիւնը կը շարունակուէր մեր ուսուցիչին բերնովը, ըսելու համար թէ այդ աղջիկը յետագային սիրահարուեցաւ Ռուբէն Սեւակին, եւ անոր հայրը քաջ գիտնալով թէ Ռուբէն Սեւակը արդէն կանուխեն դատապարտուած էր մահուան Օսմանեան իշխանութիւններու կողմէն՝ իրեն ըսաւ.

-«Տղաս, դուն մեծ բարիք մը ըրիր՝ իմ աղջիկս մահուընէ ազատեցիր, աղջիկս սիրահարուած է քեզի: Եթէ իրեն հետ ամուսնանաս՝ այդ ժամանակ կեանքդ կը փրկես: Դուն գիտցիր որ քեզ սպաննելու համար բերած են այստեղ»:

Ռուբէն Սեւակը անմիջապէս պատասխանեց.

-«Ես ամուսնացած եմ, երեխաներ ունիմ՝ եւ չեմ կրնար ձեր առաջարկը իրագործել»:

Մերժելէն յետոյ՝ կարգաւ կը տանէին այդ մեր մեծերը, մեր մեծ գրագէտները՝ եւ կը գնդակահարէին կամ զանազան միջոցներով կը սպաննէին:

Խումբերէն մէկը հինգ հոգինոց էր: Այդ հինգ հոգինոց խումբին մէջ երեք պարզ մարդիկ կային՝ ոչ գրագէտներ: Անոնց հետ էին՝ Դանիէլ Վարուժանն ու Ռուբէն Սեւակը: Միասին տարին՝ պատմութիւնը այսպէս պատմուեցաւ մեզի, եւ ճանապարհին երկուքն ալ իջեցնելով կառքէն ծառին կապեցին՝ եւ խոշտանգելով սպաննեցին մեր այդ երկու բանաստեղծները, մեր վիթխարի բանաստեղծները:

2004 թուականին յանձնեցի տպագրութեան այս ոչ մեծ-կակ «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքը՝ տալով իր կենսագրական որոշ տուեալները, եւ իմ հայեցողութեամբ վերլուծելով իր արծակ լէջերը՝ «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» գործը, որ իսկապէս 1913 թուին առաջին անգամ Պոլսոյ «Ազատամարտ» թերթին մէջ պարբերաբար տպուեցաւ, եւ տեսայ որ յետագային, Ռուբէն Սեւակի վարկը այնքան բարձրացաւ՝ որ տպուեցաւ զանազան երկիրներու մէջ: Հայաստանի մէջ մի քանի գիրքը տպուեցաւ:

Շնորհիւ խումբ մը երիտասարդներու՝ որոնք ջերմօրէն կը սիրէին Ռուբէն Սեւակը, անոնք է որ անոր ամբողջական երկերը կրցան հրատարակել: Ամբողջական երկերը հրատարակուեցան նաեւ Երեւանի մէջ, այդ աշխատանքը գլխաւորապէս տարուեցաւ Ալեքսանդր Թովիչեանի կողմէ, եւ ահա թէ ինչու

ես չզարմացայ՝ երբ լոյս տեսաւ Ալեքսանդր Թովփեանի մէկ վէպը Ռուբէն Սեւակի մասին:

Իր օրին՝ ասկէ մօտ տասը տարի առաջ, Ռուբէն Սեւակի մասին վէպ գրեց նաեւ Անդրանիկ Ճառուկեանը՝ որ սփիւռքի մեր նշանաւոր բանաստեղծներէն, եւ արծակագիրներն եւ հրապարակախօսներն մէկն է:

Իսկ այս բոլոր գործերը, անոնց մէկ կարեւոր տոկոսը՝ անմիջական գնահատանքի ենթարկողը եղաւ Ռուբէն Սեւակի եղբօր տղան, Յովհաննէս Չիլինկիրեանը՝ որ այժմ կ'ապրի ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, որ ո՛չ միայն ինք անծանօր գիրք գրեց Ռուբէն Սեւակի մասին՝ այլեւ քաջալերեց բոլոր այն մարդիկը, որոնք հրատարակած են գիրք մը կամ յօդուած մը Ռուբէն Սեւակի մասին: Ասով չբաւականացաւ Յովհաննէս Չիլինկիրեանը: Եթէ իւրաքանչիւր հայ գրող կամ արուեստագէտ Յովհաննէս Չիլինկիրեանի նման մէկ պաշտպան ունենայ՝ մեր բոլոր հայ գրողները կ'ունենան իրենց անծնական պաշտպանները, եւ կը գնահատուին՝ որովհետեւ գրականութիւնը չի՝ տարածուիր միայն գրողի անծնական շնորհքին պատճառաւ, նաեւ անոնց գործերուն տարածումը ապահովող մարդոց շնորհիւ:

Ռուբէն Սեւակի անուան թանգարանը այցելողները պիտի զարմանան որ, ի՞նչպէս շուրջ 120 նկարչական արուեստի լեզուով նկարուած գործեր՝ կախուած են այս թանգարանի պատերէն, եւ բազմաթիւ են նկարիչները, օրինակ մը տալու համար կրնանք ըսել՝ հայրենի մեր նկարիչներէն Յակոբ Յակոբեանէն նկար կայ այնտեղ, ֆրանսահայ ակադեմիկոս՝ Գեղարուեստի Ակադեմիայի անդամ Գառզուէն նկար կայ հոն, մեր նշանաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիէն, իսկապէս Այվազովսկիէն՝ ոչ թէ շինծու կամ ընդօրինակուած, որուն աւելի քան կէս միլիոն տոլար տալով այդ գործը գնեց Յովհաննէս Չիլինկիրեանը՝ ու գետեղեց Ռուբէն Սեւակի անուան թանգարանին մէջ:

Երբ որ Ռուբեն Սեւակը համալսարանի ուսանող էր Զուլիգերիոյ մէջ՝ սիրահարուեցաւ Եաննիին: Եաննին գերմանացի էր ծագումով, բայց այնքան հայացաւ՝ որ կրնար զարմանք պատճառել որեւէ մէկուն: Այնքան սիրեց իր ամուսինը՝ որ երբ Ռուբեն Սեւակը ծերբակալուեցաւ, Եաննին ներկայացաւ Գերմանիոյ դեսպանին Պոլսոյ մէջ՝ եւ իրմէ խնդրեց որ օգնէ իրեն անոր ազատուելուն կապակցութեամբ: Գերմանացին ըսաւ.

-«Առանց անչնալու եկած ես իր ազատուիլը կը պահանջես կամ կը խնդրես ինծմէ: Դուն որ հայու մը հետ ամուսնացած ես՝ հայ մը որ յանցապարտ է, բանաստեղծ է՝ եւ իր ժողովուրդը կրնայ ոտքի հանել այս երկրին դէմ, ինչպէ՞ս կը համարձակիս անոր ազատուիլը խնդրել ինծմէ»:

Եաննին զայրացած՝ իր անցաթուփըը նետեց գերմանացի դեսպանին երեսին, եւ ըսաւ.

-«Դուք մարդկային խիղճ չունիք: Երկու զաւակ ունիմ ես Ռուբեն Սեւակէս՝ երկուքն ալ որպէս հակագերմանացի պիտի մեծցնեմ ամբողջ կեանքիս ընթացքին»:

Եւ պատահեցաւ անխուսափելիին՝ երբ կատարուեցաւ համաշխարհային երկրորդ պատերազմը, եւ Ռուբեն Սեւակի տղան՝ այդ պատերազմին մէջ կռուեցաւ գերմանացիներու դէմ:

Եաննին իր կեանքի ընթացքին ոչ միայն հոգիով բանաստեղծ էր՝ այլ իսկպպէս իր արտադրութեամբ բանաստեղծ էր, եւ չորս գիրքեր հեղինակեց յաջորդաբար, եւ չորս գիրքերն ալ նուիրեց Ռուբեն Սեւակին, եւ իր զաւակներն ալ մեծցուց այդ ոգիով՝ ընտանեցիութեան ոգիով: Դժբախտաբար արկածի մը հետեւանքով՝ 1967-ին Եաննիի կեանքը վերջ գտաւ Փարիզի մէջ, բայց բերուեցաւ ու թաղուեցաւ Նիսի մէջ, ուր իր Շամիրամ դուստրը կ'ապրեր եւ կ'ապրի մինչեւ այսօր: Հայ բանաստեղծի մը նկատմամբ անոր սէրը այնքան մեծ եղաւ՝ որ անոր նուիրուեցան գրադարան, վեպեր, նուիրուեցան

բազմահարիւր յօդուածներ, նուիրուեցաւ թատերական երկ, նուիրուեցան պատմուածքներ՝ եւ մինչեւ հիմա կը շարունակուի գրական հեղեղ մը Ռուբէն Սեւակի նկատմամբ:

Բանախօս՝ Թորոս Թորանեան

ՆԱՍԱԿ

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ

ԴՈՒՍՏՐԵՆ՝


Նամակ մը ունինք մեզի ուղղուած Նիսէն, 30
Նոյեմբեր 1995 թուակիր, եւ տոմս մը՝ որուն տակ
ստորագրած է Շամիրամ Սեւակ:

Սիրելի Թորոս, շնորհակալութիւն, հայրս այդքան սիրելուդ համար:

Չխորհիս թէ քեզ կը մոռնամ, այդ անկարելի է: Իւրաքանչիւր հանդիպումի բարեկամուհիիս՝ Մոնիքի հետ կը վերյիշենք մեր հանդիպումները, ծանրաբեռնուած յուզումներով, երգերով, խիճոյ ու ծիծաղով: Հայաստանեան արծակուրդները պիտի մնան կեանքիս լաւագոյն յիշատակները:

Թորոս, պարտիմ շնորհակալութիւն յայտնել քեզի յատկապէս այն խօսքերուդ համար, երբ հօրս ուղղելով կ'ըսէիր.- Բարի գալուստ Հայաստան, երբ կը կատարուէր բացումը իր նոր նստավայրին, այն դպրոցի բակին մէջ, որ կը նայէր Արարատին, դպրոց, որուն աշակերտները յուսամբ եղմանուորեն իրենց կեանքը, ինչպէս եղած է քու պարագայիդ:

Քոյդ՝ ՇԱՄԻՐԱՄ ՍԵՒԱԿ



Այվազովսկիի ծովանակարներէն մէկը՝
Ռուբէն Սեւակի անուան թանգարանին մէջ, Սուրբ
Էջմիածին

Վասն Վերջաբանի

Դարձեալ Հայաստանի մէջ եմ: Իսկ ե՞րբ չեմ եղած որ: Բայց այս անգամ մէկ ընդ միշտ: Սփիւռքի մէջ եղած միջոցիս լսած էի այն բերկրալի լուրը, որ յարգելի Յովհաննէս Չիլինկիրեանը Նիսի մէջ իր հիմնած Ռուբէն Սեւակի անուան թանգարանը նոյնութեամբ նուիրած է Հայաստանին, զոր սիրայօժար ստանձնողը եղած է Անէնայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Հայրապետը, նուրիին համար առանձնացնելով Սուրբ Էջմիածնի տարածքին մէջ տեւող վաղեմութեամբ հանդերձ ամրակուռ շէնքի մը յարմարագոյն մասերը:

Հաստատութիւնը վերանորոգուած է, մարմարեայ գետինով սալահատակուած է, պատշաճ լուսաւորումով:

Գալով Երեւան, կարճ միջոց մը ետք յարմար առիթով մը երեք անգամ այցելեցի Ռուբէն Սեւակ անունը կրող թանգարանը: Քիչ է ըսել թէ հիացայ:

Հայաստանը էջմիածնով նոր թանգարան մը ունենալով՝ արուեստի նոր բոյն մը ունեցած է թանգարաններով հարուստ մեր երկրին մէջ:

Յիսունէ աւելի հայ նկարիչներու գործերէն ցուցադրուած գտայ 120 գեղանկար՝ 80 քառ. մեթր տարածութեան մէջ տեղադրուած: Յատուկ բաժին մը յատկացուած է նահատակ բանաստեղծին:

Այս բոլորը ինձմէ ներս բարձրացուցին ոչ միայն խանդավառութեան ալիք՝ այլ ուժգնօրէն թելադրական եղան, որ հրաշք այս հաստատութեան համար հեղինակեմ գիրք մը:

Յովհաննէս Այվազովսկի անունը կրող սրահին մէկ պատէն կը դիտէի աշխարհի մեծագոյն ծովանկարիչներէն Այվազովսկի վարպետին լայնշի մէկ գործը՝ նուրիուած Ղրիմի պատերազմին, նաւակայմին՝ յաղթականի դրօշներ...

Կարծէք այդ դրօշներուն ալեծփող շերտերը համաձայն էին ծրագիրիս:

Հոն ծնունդ առած ծրագիրս ուզեցի վերածել գործի, զոր կը նուիրեմ Հայաստանի մշտնջենական քաղաքացի նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակին:

Ձքեզ հողէդ բաժանել ուզողներ թող իմանան՝ որ դուն հողիդ տէրն ես, եւ հողէդ անբաժան:

Թ.Թ.

Երեւան, 8 Ապրիլ 2016

Յաւելում

Իմ դստեր, Անի Թորանեանի մեծղի մէկ հատորէն հատուած մը՝ նուիրուած Ռուբէն Սեւակի գրականութեան, թէ ինչպէս մենք՝ հայր ու դուստր նոյն վերաբերմունքն ունինք նահատակ գրագէտին հանդէպ.-

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿ

Մեծաքանքար եռեակին տարիքով ամենէն փոքրը Ռուբէն Սեւակն էր: Թէեւ բանաստեղծական տաղանդի հզօրութեամբ քիչ մը կը զիջէր իր աւագ գրչեղբայրներուն, սակայն քաղաքական բարդ իրավիճակներու մէջ անոնցմէ աւելի արագ ու ճիշդ կողմնորոշում ունէր:

Հակառակ երիտասարդ տարիքին, ճանչցուած բանաստեղծի եւ հմուտ բժիշկի համբաւ ունէր: Գուցէ մասնագիտութիւնն էր պատճառը, որ Ռուբէն Սեւակ չափազանց բժախնդիր եւ զուսպ էր ճակատագրական հարցերու վերաբերեալ իր գնահատականներուն մէջ:

Եղերական բոլոր նահատակներէն առաջինը թերեւս ինք էր, որ դէպքերու բերումով շատ մօտ էր փրկարար ափին եւ կրնար խուսափիլ ընկերներուն սոսկալի ճակատագիրէն, սակայն ան առաջինը եղաւ, որ բացառիկ ասպետականութեամբ մերժեց հայոց արեան մէջ թաթախուած բարբարոսի ձեռքէն գալիք «օգնութիւնը» եւ մինչեւ վերջին շունչը մնաց վեհանձն ու անկրկնելի՝ ասպետօրէն անկրկնելի...

Ռուբէն Սեւակ իր նշանաւոր ժամանակակիցներէն աւելի արագ զգաց ու նկատեց արեւմտահայութեան սպառնացող ողբերգութեան հեռանկարը: Այդ տարիներուն ան ինքզինք դրսեւորեց որպէս ազգային-քաղաքական հասուն գործիչ եւ իր ստեղծագործութիւններով զգօնութեան կոչ կ'ընէր:

1909-ի գարնան, երբ Ատանայի մէջ երիտթուրքական իշխանութեան կազմակերպած արինահեղութեան զոհ գնաց 30 հազար հայ, Ռուբէն Սեւակ եղաւ ազգային այն գործիչը, որ երիտթուրքական յեղափոխութենէն «զինով ցածներուն» ինչպէս եւ Արշակ Զօպանեան, Չօրավար Անդրանիկ եւ Փարամազ՝ նախազգուշացուց ահագնացող վտանգի մասին:

Ռուբէն Սեւակի նախազգուշացումը արտայայտուեցաւ իր բանաստեղծութիւններով ու ստեղծագործութիւններով, իր նամակներով եւ հրապարակախօսական ելոյթներով:

Հայ բազմադարեան գրականութեան մէջ թերեւս ո՛չ մէկ բանաստեղծի ստեղծագործութիւն այնքան համաձոյլ է հեղինակի էութեան, կեանքին, վարքագիծին, ապրելակերպին ո-

լանդաւաճան սկզբունքներուն, որքան Ռուբէն Սեւակինը: Դժուար է որոշել, դժուար է սահմանազատել, թէ ո՛ր կ'աւարտի բանաստեղծութիւնը եւ ո՛ր կը սկսի կեանքը: Ի վերջոյ այս երկուքը, իրապէս, համաձուլուեցան եւ դարձան հանճարեղ բանաստեղծութիւն, որ նոյն ուժգնութեամբ շարունակուեցաւ մեծ բանաստեղծի ողբերգական վախճանէն ետք:

Շարունակուեցաւ շնորհիւ Ռուբէն Սեւակի գերմանուհի ազնուազարմ կնոջ՝ Եաննի Աբբելի, գերմանական բանակի բարձրաստիճան սպայի դստեր:

Այն, ինչ Եաննին ըրաւ ամուսնոյն Ռուբէն Սեւակի դաժան սպանութենէն ետք, յիրաւի, իր հաւասարը չունեցող մարդկային ողբերգութեան եւ դասական դիւցազնականութեան շարունակութիւն էր, որ գերմանական ու թուրքական արխիւները անկարող պիտի ըլլան սքօղել:

Եաննիի գերմանահպատակ ըլլալու հանգամանքը շատ պաշտօնական դուռեր կը բանար իր առջեւ: Դուռեր, որոնք հասանելի չէին ուրիշներուն: Սակայն հեռեւողական յամառութեամբ ու միշտ արժանապատուօրէն, ամուսինը փրկելու բոլոր կարելի ու անկարելի փորձերը սպառելէ ետք՝ ան դիմեց խելայեղ ու անձնագրոհ քայլի, որ թերեւս միայն Ռուբէն Սեւակի ջինջ քնարերգութեան արժանի քայլ էր...

Գերմանական դասական փիլիսոփայութեան եւ մշակոյթի աւանդոյթներով դաստիարակուած տոհմիկ գերմանուհին ապտակի պէս եւ ապտակէն զօրեղ, Գերմանիոյ դեսպանի երեսին կը նետէ իր պատռտած անձնագիրը՝ նենգ մեսակցութեան մէջ մեղադրելով սեփական պետութիւնը...


Աւելին, ազնուատոհմիկ գերմանուհի Եաննի Աբբել, որ միշտ կը հպարտանար իր ազգային պատկանելիութեամբ՝ զաւակներուն կ'արգիլէ գերմաներէն սորվիլ, այն յստակ պատճառաբանութեամբ՝ որ «անոնք ձեր հօր սպանութեան մէջ նոյնքան մեղաւոր են, որքան թուրքը...»:

Ռուբէն Սեւակի եւ Եաննի Աբբելի սէրը անոնց բանաստեղծական հոգիներուն ամենայուզական դրսեւորումներէն էր, որ այնքան գորովանքով կը փայփայէր ու կը պահպանէր ասպետօրէն անկրկնելի Բանաստեղծը:

Ան միայն մէկ անգամ ականջալուր չեղաւ իր պաշտելի կնոջ յորդորներուն՝ 1914-ի գարնան, երբ ընտանեօք վերջնական Պոլիս կը վերադառնային... Այդ դժուարին օրերուն Սեւակ պարտաւորուած կը զգար իր ժողովուրդի, իր բարեկամներու կողքին ըլլալ...

«Ռուբէն, դառնանք այս նոյն շոգեճառով, ես շատ չհաւնեցայ այս երկրին... սոսկում եկաւ վրաս, չե՞ս տեսներ, ո՛չ մէկուն դէմքը կը ժպտի...»:

Անի Թորանեան
Պէյրուք, 2015 թ.



Այվազովսկիի ծովանկարներէն՝
Ռուբէն Սեւակի անուան թանգարանին մէջ, Սուրբ
Էջմիածին

Օգտագործուած Աղբիւրներ

- 1.Յուշեր Նիսի թանգարանէն:
- 2.Տպաւորութիւններ Ռուբէն Սեւակի Ա. Էջմիածինի մէջ կեանքի կոչուած թանգարանէն:
- 3.Թ. Թորանեան, «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքը, 2004 Հալեպ, տպ. Կիլիկիա:
- 4.Յովհաննէս Չիլինկիրեանի անսպառ յօդուածները Լիբանանահայ մամուլի մէջ («Արատ» օրաթերթ եւ ժիրայր Եայիրիի խմբագրած «Եայիրի» շաբաթաթերթ):
- 5.«Ճաշակ Նոր Գրականութեան», Ա. հատոր, Պոլիս 1910:
- 6.«Կոհակ» Գ. տարի, թիւ 8, 1912 Փետր. 29/13 Պոլիս, Հայկ Արամեանցի:
- 7.Պետրոս Դուրեան, Նիւ-Եորք 1918:
- 8.«Ովասիս», Ռուբէն Որբերեան, Փարիզ 1920:
- 9.«Հացին Երզը» Դանիէլ Վարուժան, Ա. հրատարակութիւն Պոլիս 1921:
- 10.«Հայ Գողգոթան» Գրիգորիս վրդ. Պալագեան, Ա. հատոր, Վիեննա 1922:
- 11.«Դիցարան», Գիրք Ա., խմբ. Հ.Մ.Պոտուրեան, Պուրտշ 1923, տպ. Մասիս:
- 12.«Նոր Տաղեր - Ծիածան» Միսակ Մեծարենց, Պոլիս 1924:
- 13.«Ռուբէն Սեւակ», Իր Կենաքն ու Գրականութիւնը, Արմեն Սեւան, «Հայրենիք» ամսագիր 1980:
- 14.«Համազգայինի Օրացոյց», խմբ. Գասպար Իփեկեան, Պէյրութ 1940, տպ. «Յոյս»:
- 15.Ռուբէն Սեւակի «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր», Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1943:
- 16.Դանիէլ Վարուժան, Սուրբ Ղազար - Վենետիկ 1947:

17.«Հայ Գրողներ», Անդրանիկ Ծառուկեան, Հալեպ, տպ. Նայիրի 1951:

18.«Դար Մը Գրականութիւն - 1850-1950», Մ. Թեօլեան, Գահիրէ, տպ. «Յուսաբեր» 1955:

19.Ռուբէն Սեւակ «Երկեր», խմբ. Եղիշէ Պետրոսեան, Երեւան 1955:

20.«Անդաստան», խմբ. Բիւզանդ Թօփալեան, 18 հատոր, Փարիզ, մինչեւ 1970:

21.«Պայքար» եռամսեայ, խմբ. Ա. Անդրէասեան, Պոսթօն 1963:

22.Ռուբէն Որբերեանի «Երկեր», Երեւան 1963:

23.«Ռուբէն Սեւակ եւ Փրցուելիք Ուղեղներ, Յովհաննէս Զիլինկիրեան, Փարիզ 1985:

24.«Ռուբէն Սեւակի վերջին օրերը», Գեորգ Գապառաճեան, թատրերգ. Պէյրութ 1986:

25.«Սէրը Եղեռնի Մէջ», վէպ, Անդր. Ծառուկեան, Պէյրութ 1987, տպ. Տօնիկեան:

26.«Անգամ Մահից Յետոյ», վէպ, Ալեքսանդր Թովճեան, 1987:

27.«Հայ Գրականութիւն», Մեսրոպ վրդ. ճանաչեան, Վենետիկ, Սուրբ Ղազար 1963:

28.«Ծաղկաքաղ Արդի Հայ Գրականութեան», Մեսրոպ վրդ. ճանաչեան, Վենետիկ 1963:

29.«Հայկարան», է գիրք, Բենիամին Թաշճեան, Պէյրութ 1967:

30.«Վարք Կոմիտաս Կուտինացիի», Սմբատ Փանոսեան, Պէյրութ 1969:

31.«Դեգերումներ Տիրոջը Այգիին Մէջ», Բ. Թաշճեան, Անթիլիաս 1972:

32.«Համապատկեր Արեւմտահայ Մէկ Դարու Պատմութեան», Լեւոն Զորմիսեան, 1975, տպ. Սեւան:

33.«Սփիւռք» Նոր Շրջան, խմբ. Գեորգ Աճեմեան, Պէյրուս 1978:

34.«Երկեր» - Սիամանթօ եւ Դ. Վարուժան, Հայ Դասականներու Գրադարան, Երեւան 1979:

35.«Բագին», խմբ. Պօղոս Սնապեան, Պէյրուս 1975:

36.«Հայաստանի եւ հայ կուլտուրայի մասին», Սերգէյ Գոտորեցկի, Երեւան 1980:

37.«Երկեր», Տիրան Զրաքեան, Երեւան 1981:

38.«Հասկ Հայագիտական Նոր Շրջան», Բ. տարի, Անթիլիաս 1981-82:

39.«Ռուբէն Որբերեան, Ռ. Սեւակ, Վ. Թէքեան, Մ. Չարիֆեան», կազմ. Վ. Գաբրիէլեան, Երեւան 1981:

40.«Գրականութեան Պատմութեան Հարցեր», Ս. Մկրեան, Երեւան 1982:

41.«Հայկական Սովետ. Համայնագիտարան», 10-րդ հատոր, էջ 312, Երեւան 1981:

42.«Բանտի եւ Աքսորի Տարիներ», Թեոդիկ, Անթիլիաս 1985:

43.«Երկեր» Ռուբէն Սեւակ, կազմ., ծանօթագրեց Ալեքս. Թովիչեան, յառաջաբան Սետփան Թովիչեան, Երեւան 1985:

44.«Արահետ», Ֆրանսահայ Գրողներու Միութիւն, 10 թիւ, Փարիզ 1985:

45.«Հասկ» ամսագիր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ապրիլ 1986:

46.«Բանաստեղծութեան Հազարամեայ Խորհուրդը», Հրանտ Թամրազեան, Երեւան 1986:

47.«Յուշամատեան Մեծ Եղեռնի», Գ. Ահարոնեան, Գ. հրատ., Պէյրուս 1987:

48.«Ռուբէն Սեւակի Յիշատակի Տօն - Ժիրայր Նայիրիի պատկառում, Փարիզ 1990:

49.«Քուլիս» ամսագիր, Պոլիս 1991, թիւ Նոյեմբերի:

50.«Հորիզոն», Ա. Աշիգեան, Գանատա 1991 (Յաւելուած):

51.«Հայ Գրականութիւն», Յակոբ Օշական, Երուսաղէմ, Ս. Յակոբեանց 1992:

52.Ելոյթ Փարիզի ռատիօ Ա.-էն, Յակոբ Պալեան 1991:

53.Սփիւռքահայ եւ հայրենական մամուլ:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

**ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆ՝
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ**

Ստորագրված է տպագրության 09.17.2016: Չափսը՝ 60x84 1/16:

Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրությունը՝ օֆսեթ: 6.5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 350 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52.79.74

Էլ. փոստ lusakn@rambler.ru

